«ՍՅՈՒՆԻՔ–ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՀՈԳԵՎՈՐ ԵՎ
ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ» ՄԱՏԵՆԱՇԱՐ

Գիրք
2

ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ԳՈՅԱՄԱՐՏԻ ՀԵՐՈՍ ԽԱՉԱՏՈՒՐ ՄԱԼԻՆՑՅԱՆ

Կազմող՝
ԱՇՈՏ ՍԻՄՈՆՅԱՆ

ԶԱՆԳԱԿ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 2014

Գիրքը տպագրվում է Սյունիքի մարզպետ
Սուրեն Խաչատրյանի հովանավորությամբ:

Խմբագիր՝ Ավագ Ա. Հարությունյան
պատմական գիտությունների թեկնածու

Գրախոս՝ Պետրոս Հ. Հովհաննիսյան
պատմական գիտությունների դոկտոր

Փաստաթղթերի սույն ժողովածուն ընթերցող լայն շրջանակներին է ներկայացնում Զանգեզուրի 1918–1920 թթ. ինքնապաշտպանության կազմակերպիչներից ու հրամանատարներից մեկի՝ Հայկական բանակի գնդապետ Խաչատուր Մալինցյանի կյանքին ու գործունեությանը վերաբերող բազմաթիվ վավերագրեր:

Այն որոշ չափով լուսաբանում է նաև Զանգեզուրի՝ հայ պատմագրության կողմից դեռևս բավարար չներկայացված և չգնահատված հաղթական գոյամարտի պատմությունը, դրանում Խ. Մալինցյանի խաղացած դերակատարությունը, ինչպես նաև նորագույն շրջանի պատմության այլ դրվագներ ու խնդիրներ:

Զանգեզուրի զավակների սխրագործությունները հայ ազատագրական շարժման պատմության ամենափառահեղ էջերը պիտի կազմեն: Տարբեր հայկական շրջանների շատ ավելի նվազ գործերը հատորներ են դարձել, իսկ քո զավակների փառահեղ հաղթանակները մնացել են մթության մեջ:

Վանբեկ
(Վազգեն Միրզաբեկյան)

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Աշոտ Սիմոնյանը մեր այն հայրենագետ–երկրագետներից է, ով տարիների տքնաջան աշխատանքի շնորհիվ նվիրումով և սիրով ներկայացնում է Հայոց պատմության նորագույն ժամանակաշրջանի հանիրավի անուշադրության, անգամ՝ մոռացության մատնված էջերն ու գործիչներին:

Ասածիս ցայտուն վկայությունը վերջին տարիներին նրա հեղինակած մի շարք աշխատություններն են, որոնցում տարաբնույթ սկզբնաղբյուրների և վավերագրերի համակողմանի օգտագործմամբ վեր է հանված Վայոց ձորի և Զանգեզուրի մաքառումներով և հերոսականով լեցուն ազգային–ազատագրական պայքարի ու հայրենանվեր գործիչների ոդիսականը:

Հատկանշական և դրվատելի է այն փաստը, որ սկզբունքորեն Ա. Սիմոնյանն ուսումնասիրության առարկա է դարձնում ժամանակի փոշով պարուրված Հայոց հաղթական հերոսականը և մասնավորապես պատմական Սյունիք աշխարհը:

Հենց վերոնշյալ տեսանկյունից պետք է դիտարկել և կարևորել հեղինակի ներկա աշխատությունը:

Եվ ահա ընթերցողի սեղանին է դրված մի գիրք, որի հերոսը Խաչատուր Մալինցյանն է:

Մի կերպար, ով գրեթե անծանոթ է եղել ոչ միայն հայ հանրությանը, այլև անգամ պատմաբաններին:

Մի կերպար, ում հերոսականով, ինչու չէ նաև արկածներով լի կյանքն ու մարտական ուղին ոգևորիչ և ուսանելի է հատկապես մեր երիտասարդ սերունդի համար:

Մի կերպար, ով ռազմիկի ուղին սկսեց Առաջին աշխարհամարտից՝ դառնալով այն եզակի մարտիկներից, ովքեր արժանացել են խիզախության բարձրագույն՝ Գեորգիևյան չորս մարտական խաչերի:

Մի կերպար, ով, հետագայում հավատարիմ մնալով հայրենի Սյունիքի բարձրաթռիչք լեռների պայքարի կանչին, ղեկավար, անձնուրաց դերակատարություն ունեցավ Զանգեզուրի հերոսամարտում՝ քաջությամբ և կռվելու անկոտրում կամքով օրինակ ծառայելով բոլորին:

Մի կերպար, ով անգամ վտարանդիության մեջ ձգտել է հնարավորինս օգտակար լինելու հայրենիքին, իսկ հետագայում էլ ներգաղթելով՝ նույնիսկ խորհրդային պայմաններում պահպանելու իր մարտական անցյալի անվեհերությունը, բայց և այնպես՝ ժամանակի դժնդակ բռնադատման զոհ դարձել:

Ինչ խոսք, Խաչատուր Մալինցյանի հերոսա–արկածալից կյանքն արժանի է գեղարվեստական կերպավորման: Սակայն որպես սկիզբ, ընդ որում միանգամայն հաջողված և հիմնավոր, Ա. Սիմոնյանի սրտացավ աշխատանքի շնորհիվ՝ ամբողջական և սպառիչ կերպով ներկայացված է Զանգեզուրի հերոս Խաչատուր Մալինցյանի հուշամատյանը:

Ավագ Հարությունյան

ՀՀ ՊՆ «Մայր Հայաստան» զինվորական թանգարանի տնօրեն,
պատմական գիտությունների թեկնածու

ՆԱԽԱԲԱՆ

Այս գրքի աշխատանքները սկսվեցին, երբ համառոտ կենսագրական տեղեկություններ քաղելու նպատակով վերցրի իմ նախորդ ուսումնասիրություններից ծանոթ Խաչատուր Մալինցյանի տեղեկություններով հարուստ դատական ծավալուն գործը[1]:

Գործի նյութերն ակնհայտորեն ցույց էին տալիս, որ Սյունիքի պատմության այդ փոթորկոտ ժամանակներում Խ. Մալինցյանն էպիզոդիկ դեմք չի եղել: Երկու տարի շարունակ՝ 1918 թ. մայիսից մինչև 1920 թ. մայիսը, նա Զանգեզուրի գոյամարտի հիմնական կազմակերպիչներից և հրամանատարներից մեկն է եղել:

Թվում էր, թե Անդրանիկի, Գ. Նժդեհի հետ կապված, որոնց գործունեությունը համեմատաբար լավ է ներկայացված, Զանգեզուրի 1918–1921 թթ. պատմությունը ևս բավարար ուսումնասիրված պիտի լիներ: Սակայն, երբ Խ. Մալինցյանի մասին այլ տեղեկություններ գտնելու նպատակով վերանայեցի այդ ժամանակաշրջանի վերաբերյալ հայտնի ուսումնասիրությունները, գրքերը, չնչին բացառությամբ դրանց հեղինակները չէին հիշատակում Զանգեզուրում մեծ դերակատարություն ունեցած գնդապետի անունն անգամ:

Շատ թերի է հատկապես Արսեն Շահմազյանի գեներալ–նահանգապետության շրջանի պատմությունը (և հենց Ա. Շահմազյանի կենսագրությունը), որը նաև Խ. Մալինցյանի գնահատմամբ իր գործունեության ամենափառահեղ շրջանն էր, հատկապես 1919 թ. նոյեմբերի 1–8–ը տե-

[1] Ճակատագրի հեգնանքով մեր ազգային արժեքները, պատմությունը ոչնչացնող Չեկան, հաճախ նախանձելի ջանասիրությամբ ու բծախնդրությամբ հայրենանվեր գործիչների կյանքի մասին տեղեկություններ հավաքելով և ուսումնասիրելով, այդ դատական գործերը դարձրել է հայոց նորագույն շրջանի պատմության անփոխարինելի սկզբնաղբյուրներ: Իհարկե, պետք է որոշ վերապահությամբ ու զգուշությամբ մոտենալ Չեկայի նկուղներում տրված ցուցմունքներին, հատկապես անձանց ու իրադարձությունների գնահատականներին: Սակայն պետք է նաև նկատի ունենալ, որ այդ ցուցմունքներն անհրաժեշտության դեպքում մանրակրկիտ ստուգվում էին, հետևաբար կեղծելու հնարավորությունը, հատկապես մեղադրյալի կողմից և ընդհանրապես անհարազատ տարրերի դեպքում մեծ չէր: Այսօր ՀՀ ազգային արխիվում շատ ֆոնդերի, նույնիսկ օրաթերթերի ու ամսագրերի առկայության համար «պարտական ենք» հենց Չեկային:

ղի ունեցած «Տեղ գյուղի ճակատամարտը, որը իմ զինվորական շրջանի և կյանքիս հռչակավոր վայրկյաններից է և ամենամեծը»:

Ա. Շահմազյանին, Խ. Մալինցյանին և նման գործիչներին անտեսելը մեր պատմությունը դարձնում է խիստ պակասավոր և անհետևողական:

Թեպետ քիչ գրքեր չեն հրապարակված Սյունիքի նորագույն շրջանի վերաբերյալ, հատկապես, երբ համեմատում ենք մյուս գավառների հետ, սակայն առ այսօր դեռ չունենք Սյունաց աշխարհի հերոսապատման ամբողջական համակարգված պատմությունը:

Թեև այդ աշխատանքներից շատերը (կոմունիստական պատմագրության սովորույթով) գրված են այլընտրանք չունեցող, միակ և ամբողջական ճշմարտությունը լինելու հավակնոտությամբ ու այնպիսի ոճով, որ կարծես թե բոլոր հարցերը մեկընդմիշտ և վերջնականորեն լուծված են ու այլևս քննարկման կամ որևէ լրացման կարիք չունեն, բայց դրանց մեծ մասն անտեսած լինելով տեղացի գործիչների, ականատեսների վկայությունները և հուշերը, կամ թե փոքր չափով օգտագործելով դրանք և ըստ արժանավույն չգնահատելով վերջիններիս դերը՝ իրադարձությունները ներկայացրել են ոչ ամբողջական՝ միակողմանի ու մակերեսային, որպես դրսից եկած մի քանի հերոսների ու հակահերոսների շուրջ հյուսված պատմություններ:

Կամ էլ հակառակը՝ ըստ էության անտեսելով անհատներին, թե իբր հերոսը հավաքական ժողովուրդն է, դրանք դարձրել են մի անդեմ, անկերպար, անհերոս պատմություններ:

Եվ դրա հետևանքով է, որ մինչև այսօր ստվերում են մնացել մեր նույնիսկ ոչ շարքային հերոսները՝ Արշակ Շիրինյանը, Պողոս Տեր–Դավթյանը, Սաքո–Յապոնը (Համբարձում Սարգիսջանյան) և ուրիշ հայրենապաշտ նվիրյալներ, որոնք, կռիվների ողջ ընթացքում մշտապես հայրենիքի պաշտպանության դիրքերում գտնվելով և գործելով կենտրոններ Թիֆլիս, Բաքու, Երևան քաղաքներից հեռու ընկած գավառներում՝ համատարած խրամատների ցանց դարձրած իրենց հայրենի լեռներում ու ձորերում, ինչպես որ ըստ հարկի չգնահատվեցին իրենց կենդանության ժամանակ, անտեսվեցին զինվորական աստիճաններ և պարգևներ ստանալիս, այնպես էլ հետագայում ու նաև այսօր մոռացության են մատնվել պատմաբանների կողմից:

Գրքում ներկայացվող հիմնական նյութերը վերցված են Խ. Մալինցյանի դատական (ՀԱԱ, ֆ. 1191, ց. 16, գ. 1923) և կնոջ՝ Յուզեֆա (Վանդա) Մարցելևնա Նախտմանի բողոքարկումների հիման վրա կազմված դատախազության (ՀԱԱ, ֆ. 571, ց. 5, գ, 4600) գործերից (դրանք հրապարակվում են առանց էական խմբագրական և սրբագրական միջամտության), որոնցում մանրակրկիտ քննության է առնվում Խ. Մալինցյանի ողջ կյանքը:

Չեկան հետաքննել է միաժամանակ.

1. Խ. Մալինցյանի գործունեությունը Զանգեզուրում՝ 1918–1920 թթ.,

2. Խ. Մալինցյանի գործունեությունը արտասահմանում 1920–1923թթ.:

3. ԽՍՀՄ վերադառնալուց հետո նրա աշխատանքային գործունեությունը Մոսկվայում՝ 1923–1926 թթ. և Հայաստանում՝ 1926–1932 թթ.:

Հասկանալի պատճառով Խ. Մալինցյանն իր ցուցմունքներում ձգտում է հնարավորինս շրջանցելու 1918 թ. դեպքերը, ամեն կերպ խուսափելով իր խաղացած իրական դերակատարությունը նշելուց, ինչպես որ պարծենալով՝ նա դրանց մասին գրում է Ավ. Ահարոնյանին հղած զեկույցի մեջ և այլ առիթներով ու փորձում է իր այդ շրջանի գործունեությունը ներկայացնել որպես աջակցություն Զանգեզուրի բոլշևիկներին և տեղի ապստամբական շարժումներին:

Սակայն վկաները, որոնց մեծ մասը կոմկուսի տեղացի ակտիվիստներ են, պատմում են առավելապես Խ. Մալինցյանի զանգեզուրյան գործունեության մասին՝ բոլորը միանշանակ շեշտելով նրա վճռորոշ դերը 1918–1920 թթ. իրադարձություններում[2]:

Իսկ Գեղարքունիքի Լճաշեն (Օրդաքլու) գյուղի բնակիչ Հ. Ղարիբյանի ցուցմունքները 1918 թ. գարնանը Հաջի Մուխանի ապստամբ թուր-

[2] 1954 թ. 17 տարվա աքսորից վերադարձած Խ. Մալինցյանի թիկնապահներից Արամ Դոլունցը պատմում էր, որ հենց Խաչատուրի զանգեզուրյան գործունեության պատճառով էր, որ բոլշևիկները թշնամաբար են վերաբերվել նրա հարազատներին և մերձավորներին: Եղբորը՝ Ավանեսին (Հովհաննես), 1920 թ. հոկտեմբերին Գորիսի բանտում սպանել են որպես Խ. Մալինցյանի եղբայր: Բոլշևիկները սպանել են նաև ազգական Գալուստ Մալինցյանին, որը Զանգեզուր էր վերադարձել նույն Շուշվա գնդի հետ և ՀՅԴ Զանգեզուրի ակտիվ ղեկավար գործիչներից էր: Հետագայում բռնադատվել են Հակոբ Մալինցյանը, Արմենակ Մալինցյանը և ուրիշներ:

քական գյուղախմբի զինյալների դեմ Շուշվա գնդի մղած կռիվներում Խ. Մալինցյանի դերի մասին է:

Արտասահմանում՝ Կ. Պոլսում, Ֆրանսիայում, Գերմանիայում, Լեհաստանում եղած ժամանակվա գործունեությանն են վերաբերում հետաքննության պահանջով Խ. Մալինցյանի 1933 թ. հունվարի 10–ին երկրորդ անգամ գրած ցուցմունքները:

Խ. Մալինցյանն առանձին, մանրամասն ցուցմունքներ է տվել նաև իր տնտեսական գործունեության վերաբերյալ Մոսկվայում և Հայաստանի տարբեր կազմակերպություններում հաշվապահ եղած ժամանակվա մասին, որոնք հարկ չհամարեցինք զետեղել գրքում:

Անհավասար, համառ ու դաժան է եղել Խ. Մալինցյանի երկարատև մենամարտը ամենազոր Չեկայի դեմ և դատական գործի նյութերից դարձյալ հառնում է Խ. Մալինցյանի նույն հնարամիտ, քաջ ու անկոտրուն ռազմիկի կերպարը:

Անհայտ է Խ. Մալինցյանի հետագա ճակատագիրը, նրա վախճանը, ոչ ոք չգիտե շիրիմի տեղն անգամ: Սակայն իրադարձություններին հաջորդած կոմունիզմի մղձավանջի տասնամյակներին, երբ բռնության օրգաններից հետ չմնալով՝ պետական–կուսակցական հավատաքննչական մամլիչ գաղափարախոսությունն իր ամբողջ հզորությամբ՝ բազմահատոր գրքերով ու ֆիլմերով ամեն կերպ փորձում էր աղճատել կամ մեռցնել մեր ազգային հերոսների մասին հուշն անգամ: Ի հեճուկս այդ ամենի՝ Խ. Մալինցյանի հերոսական ու հանդուգն կերպարը, որոշ դեպքերում պատմականից բանահյուսականի վերաճելով, նրա հետ միահյուսվելով, միշտ վառ մնաց հայրենի Զանգեզուրում՝ որպես 20–րդ դարի Սյունյաց դյուցազներգության ամենից առասպելական հերոսներից մեկը:

Թեպետ Խ. Մալինցյանի արկածալից կյանքի պատմությունը[3] ինք-

[3] Ինձ չհաջողվեց գտնել Խաչատուրի դստեր՝ Արմենիդայի և որդու՝ Լորիսի ժառանգներին: Սակայն Գորիսում բնակվող Ավանես եղբոր թոռ՝ Սամվել (Սավա) Արսենի Մալինցյանը, ով հորից հետո մասունքի նման պահպանում է իր նշանավոր ազգականի՝ Խաչատուրի ու հարազատների լուսանկարները, սիրով տրամադրեց դրանք, ինչպես նաև Մալունց գերդաստանի մասին այլ տեղեկություններ: Խ. Մալինցյանը ծնվել է Հին Գորիսի հայտնի Մալունց տոհմից Հասրաթի որդի Հարությունի և Խնովի տոհմից Խուրշուդի աղջկա՝ Հերիքնազի ընտանիքում: Տղային տվել են հոր պապի՝ Մալունց Խաչիի անունը:

նին շատ հետաքրքրական է, այն առաջին հերթին մեզ համար կարևորվում է հատկապես Սյունիքի պատմության լուսաբանման տեսանկյունից, քանզի Սյունիքի 1917–1921 թթ. հաղթական գոյամարտը հայոց պատմության ամենից փառապանծ էջերից է և նրա նույնիսկ փոքրիկ դրվագները արժանի են հիշատակման:

Այդ հերոսական գոյապայքարով ոգեշնչված էր նաև Խաչատուր Մալինցյանը, ով արտասահմանում եղած ժամանակ տարբեր անձանց ու լսարանների առջև բազմիցս թե՛ գրավոր և՛ թե բանավոր անդրադառնում, ներկայացնում էր այն: Նույնիսկ ԽՍՀՄ վերադառնալուց հետո, նա հաճախ էր անթաքույց հպարտանքով պատմում այդ կռիվներին իր մասնակցության մասին:

Սյունիքի 20–րդ դարասկզբի (և՛ 1905–1906 թթ., և՛ 1917–1921 թթ.) պատմությունը սոսկ Հայաստանի մի գավառի գոյապայքարի պատմություն չէ. այն հայության, վտարանդված հայկական ոգու համար հաղթանակի և հերոսականության խորհրդանիշ էր ու ոգեկոչման–ոգեշնչման մշտական աղբյուր:

Ու թեև արդի որոշ պատմաբաններ փորձում են լեգալացնել և ազգային հերոսների պանթեոն բերել կոմունիզմի համար պայքարի բոլոր հայազգի «հերոսներին», սակայն Սյունիքի պատմության մեջ սահմանը՝ «կարմիր գիծը», շատ հստակ է, ինչպես որ այն տարիներին էր. բարիկադի մի կողմում հայրենիքի պաշտպաններն էին, մյուս կողմում՝ թշնամին:

Խաչատուրը ունեցել է երկու եղբայր՝ Ավանեսը (1869–1920) և Ալեքսանը (նրանք ունեցել են ևս մի եղբայր, որը մահացել է պատանի հասակում:) Մեզ հայտնի է միայն Խաչատուրի մի քրոջ՝ Ջավիի մասին, որն ամուսնացած և ապրելիս է եղել Հալիձոր գյուղում: Մալինցյան տոհմի հայրենիքում մնացած ընտանիքները ներկայումս հիմնականում բնակվում են Գորիսում, Վերիշենում և Բռունում: Ավագ եղբորը՝ Ավանեսին, բոլշևիկները սպանել են Գորիսի բանտում 1920 թ. հոկտեմբերի 16–ին (տես նաև Աւօ, «Նժդեհ», Լոս Անջելոս, 1989, էջ 113): Դրանից մի քանի օր անց տիֆից մահացել է նաև Ալեքսանը և երկու եղբայրների թաղումը կատարվել է նույն օրը: Կոմունիստական բռնություններից խուսափելու համար Խաչատուրի եղբայրների որդիների շատերը փախել են Միջին Ասիա՝ Սամարղանդ և Մարի քաղաքները (Ալեքսանի միակ տղան՝ Աշոտը, դուստրը՝ Աշխենը, Ավանեսի տղան՝ Արշակը (ում ընտանիքի բոլոր անդամները մահացել են 1948 թ. երկրաշարժի ժամանակ), աղջիկը՝ Անիկան՝ ամուսնու՝ Խ. Մալինցյանի զինվոր Նիկոլայ Բաբայանի (Յուղումին Նիկոլայ) հետ):

Սյունիքի գոյամարտը վառ օրինակ է ու դաս, որ հայրենիքը պետք է պաշտպանել ոչ միայն ակնհայտ, դարավոր ոսոխներից, այլև «իմպերիալիզմի լծից հայ ժողովրդին ազատագրելու» առաքելությամբ կամ բոլշևիկյան այլ լոզունգներով և թշնամական դրոշներով երկիր ներխուժած չարածին կարմիր հորդաներից ու նրանց միացած, նրանց առաջնորդող, իրենց հայրենիքը և ազգային սրբությունները ուրացած մերայիններից, որքան էլ, որ նրանք գոչեն, թե «մենք էլ ենք հայ»:

Խ. ՄԱԼԻՆՑՅԱՆՆ ԻՐ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ԹԻՎ 1
ՆՈՐԻՆ ՎՍԵՄՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆ Պ. ՆԱԽԱԳԱՀԻՆ[4]

ԶԵԿՈՒՅՑ[5]

Սորանով զեկուցանելով Ձերդ վսեմությանը՝ հայտնում եմ ի գիտություն, որ ես 1916 թ. ապրիլ ամսից մինչև 1918 թ. դեկտեմբերը շարունակ իբրև սպա միշտ ծառայել եմ Հայկական առաջին հրացանաձիգ գումարտակի մեջ:

1918 թ. հունվար ամսից Սյունյաց Զանգեզուրում, իբրև առանձին գումարտակի պետ՝ համաձայն Հայկական բանակի սպարապետ զոր. թ. Նազարբեկյանի հրամանին, իսկ 1918 թ. մայիսից՝ որպես Զանգեզուրի ռազմական ուժերի հրամանատար՝ համաձայն Զանգեզուրի Կենտրոնական Ազգային խորհրդի հրահանգին, միաժամանակ իբրև Ներքին գործերի գործավար լայն իրավասություններով՝ ունենալով թե՛ գավառական ձիավոր ու հետևակ միլիցիան և՛ թե՛ առանձին հիմնադիր գնդի հրամանատարությունը, մինչև 1919 թ. նոյեմբերի 24–ը, իսկ 1920 թ. հունվար ամսից մինչև մայիսի 30–ը որպես Սիսիանի զորաբաժնի հրամանատար՝ Ղարաբաղի արշավանքի ժամանակ:

Ամենից առաջ ինձ թույլ եմ տալիս Ձեզնից իրավունք խնդրելու, որպեսզի ես կարողանամ ավելի լայն կերպով ներկայացնեմ և որպեսզի Դուք ավելի լայն ծանոթություն ունենանք իմ իրական գործունեության հետ՝ սկսյալ առաջին պատասխանատու վայրկյանից, այսինքն՝ այն օրից, երբ ես մտնում եմ Զանգեզուր, իբրև առանձին գումարտակի հրամանատար՝ Շուշվա հրացանաձիգ գնդի մեջ, որի պատմությունը Ձեզ ծանոթ է, երբ Դուք Հայկական Ազգային խորհրդի նախագահն էիք և ինչպես գիտեմ, այդ գնդի պատմությունը Ձեզ շատ լավ ծանոթ է եղած ընդմիշտ:

---

[4] ՀՀ պատվիրակության նախագահ Ավետիս Ահարոնյանին (1866–1948):

[5] ՀՅԴ Կենտրոնական արխիվում (Բոստոն) գտնվող այս զեկույցի (ՀՀՏ. 160–59) պատճենը տրամադրել է պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Համլետ Գևորգյանը:

Շուշվա գնդի ճանապարհորդությունը և նրա մարշը[6], համաձայն Կենտրոնական շտաբի կարգադրության, այսպես էր՝ Ղարաքիլիսա–Դիլիջան–Ելենովկա–Բայազետ–Ղարանլուխ–Քարագլուխ–Զանգեզուր–Շուշի: Գունդը իր հետ ստացած ուներ 3500 զինվորի կոմպլեկտ հագուստ, հրացան, փամփուշտ և ամեն այլ պետքական իրեր: Բայց զինվորները նորանք էին, որոնք հիվանդ կամ Ռուսաց ճակատը թողած «Տուն» էին գնում: Թե ինչպիսի դժվարություններ եղան, չպիտի անդրադառնամ, միայն որոշ չափով նկարագրում եմ այն, ինչ որ այդ գունդը ունեցավ ռազմական տեսակետով և բավականին դեր կատարեց իր խեղճ պատմության նախօրեակին, և ահա այստեղ է, որ ես ունենում եմ իմ պատասխանատու ու վճռական մասնակցությունը:

Առաջին: 1918 թ. մարտ ամսում, Սևան կղզիի ափին, Հաջի Մուխան[7] թրքական գյուղում, գնդի իրերի փոխադրության միջոցին, թուրքերը հարձակվում են մեր մի փոքրիկ խմբակ զինվորների վրա, 14 հոգի սպանում, 22 հոգի վիրավորում, 7 սայլ փամփուշտ և այլ իրեր թալանում:

Իսկույն ևեթ ձեռք ենք առնում ամեն միջոց՝ հեռագրելով Երևան, որ Ազգային խորհուրդը թնդանոթներ ուղարկի դեպի Ելենովկա[8], իսկ մյուս կողմից՝ Ծաղկաձորի գյուղացիներից հավաքում ենք կամավորական խմբեր և 1918 թ. մարտի 19–ին հարձակվում ենք թրքական գյուղերի վրա և չորս օրվա ահռելի կռիվներից հետո գրավում ենք Բեղլու[9], Էֆենդիքենդ, Հաջի–Մուխան, Աղջիբիթ ու Հայրվանք[10] գյուղերը:

Անշուշտ, այս կռիվներում ես ստանձնում եմ ուղղակի բոլոր զորամասերի հրամանատարությունը և թե ինչքան կորով, քաջարիություն և իմացականություն եմ ցույց տալիս, այդ առթիվ պիտի խոսի ապագա պատմաբանը և Ծաղկաձորի հայ ժողովուրդը, որոնք լավ տեսած են, որ ես նրանց աչքի առաջ արտասուքով է, որ կպահանջիմ, որ գնդապետ

---

[6] Ռազմերթ:

[7] Այժմ՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի Ծովակ գյուղը:

[8] Հիմնականում մալականներով բնակեցված գյուղ Գեղարքունիքում, այժմ՝ Սևան: Կոչվել է Նիկոլայ Առաջինի քրոջ անունով:

[9] Էրիվ անունն է Բեղլու–Հյուսեին: ԽՍՀՄ տարիներին գյուղերի խոշորացման հետևանքով լքվել է:

[10] Այժմ՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի Այրիվան գյուղը՝ Գավառից 12 կմ հյուսիս–արևմուտք:

Մ. Մելիք–Շահնազարյանը[11] մտնի կռիվ: Եվ կհաստատեն Ն. Բայազետից քաղաքագլուխ Աֆրիկյանը[12], գավառապետ Թոսունյանը ու Եզնիկ վարդապետը, որ իսկապես իմ արիությունը, հմտությունը և անձնական քաջությունն է, որ այնպիսի գյուղերի մեջ, ուր բնությունը ինքնիրեն շինած է մեծ բերդեր և իր նշանակությունը այնքան մեծ է եղած, որ այդ գյուղերը փչանալուց հետո թուրքերը չեն կարողանում միանան տխրահռչակ Բեուք–Վեդիի հետ: Եվ ամեն ռազմագետ այդ վաղուց գիտակցած է և յուրաքանչյուր պատմաբան պիտի խոսի, այլ ոչ թե ես ու այն 100–ից ավելի թուրք գերի կանայք ու երեխաները, որոնց ուղարկեցինք Երևան:

Երկրորդ: Իմ՝ այդ շրջանում կատարած դերը մեծ է, որովհետև միևնույն 1918 թ. մայիս ամսում Բասարգեչարի[13] հայերին ազատում եմ իսպառ մահից, երբ նրանք 7 ամսից ավելի շրջապատված են լինում շրջակա 40 թուրքական գյուղերով: Գյուղի կանանց ու աղջիկների լացն է, որ նորեն ստիպում է մեզ մեր զենքը բարձրացնել թրքին դեմ և 12 գյուղ կրակի տալուց հետո ազատում ենք Բասարգեչարը և միացնում հայկա-

---

[11] Միքայել–բեկ Հովսեփի Մելիք–Շահնազարյան (1867, Շուշի–1930, Թիֆլիս): 1886 թ. ավարտել է Էջմիածնի ճեմարանը, ապա՝ Թիֆլիսի 2–րդ կարգի Յունկերական–հետևակային ուսումնարանը: Մասնակցել է 1904–1905 թթ. ռուս–ճապոնական պատերազմին, ապա Առաջին աշխարհամարտի Կովկասյան ճակատում մի քանի անգամ ծանր վիրավորվել է: 1918 թ. հունվարին նշանակվել է «Շուշվա գնդի» հրամանատար և մասամբ իր անվճռականության պատճառով գնդի ռազմերթը շատ է ձգձգվել և միայն 1918 թ. հունիսին են հասել Զանգեզուր՝ ճանապարհը փակ լինելու պատճառով մնալով այդտեղ: Թեպետ սեպտեմբերի 17–ին Զանգեզուրի Ազգային խորհուրդը նրան նշանակել էր «դիկտատոր», բայց նրա անհեռատես հրամանով տեղի ունեցած Բերդաձորի ողբերգական իրադարձությունները այնպես նրան հեղինակազրկեցին, որ ակտիվ գործունեությունից հետ քաշվելով՝ մեկնեց Երևան և իր հաշվետվությունը ներկայացրեց Շուշվա գնդի գործունեության վերաբերյալ: Սակայն իշխանությունը բոլշևիկներին հանձնելուց հետո նրան ևս աքսորեցին: Հովակ Ստեփանյանի վկայությամբ նրանք 1921 թ. աքսորի ճանապարհին և Բաքվի բանտում միասին են եղել: Աքսորից ազատվելով՝ Ռյազանից վերադառնում է ընտանիքի մոտ՝ Թիֆլիս: Мелик–Шахназаров А., Владетели Варанды на службе Империи, Москва, 2011.

[12] Վահան Աֆրիկյանը (1886–1969) Նոր Բայազետի քաղաքագլուխն էր: ՀՀ անկումից հետո անցել է արտասահման: Ունի հուշագրություններ, հիմնականում Նոր Բայազետի և գավառի իրադարձությունների մասին:

[13] Այժմ՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս քաղաքը:

կան շրջանին, այն ժամանակ, երբ տաճիկները Թոխլուջայի[14] գագաթին կանգնած տեսնում էին Սևանը, իսկ մենք մյուս ափում մեր պարտականությունը կատարեցինք:

Երրորդ: Ավելի պատմական, որ 1918 թ. մայիսի 25–27–ին, Սելիմ լեռնանցքի թրքական գյուղերը՝ Քարվանսարան[15], Յանըխը[16] ու Խարթըղն[17], ցիրուցան ենք անում՝ հնարավորություն տալիս, թե՛ գունդը Ն. Բայազետից անցնելու դեպի Վայոց ձոր և թե՛ Ն. Բայազետի շրջանի հետ կապ հաստատում, որը ապագայում ցույց տվեց մեծ օգուտ և ստեղծեց միակ գիծը դեպի Զանգեզուր, որ այնքան խոշոր օգուտներ տվավ: Եվ ահա այսպիսի պատմական շրջանում գնդի շարժման ժամանակ ես իմ ուղղակի խոշոր դերն եմ կատարում պատերազմի դաշտում՝ միաժամանակ չմոռանալով կատարելու թիկունքի աշխատանքը այն ժամանակ, երբ հայ գյուղացին տարված փոթորկոտ ալիքներից, մոռացած հայ իրականությունը, պատմությունն ու եղբայրությունը, չէր ցանկանում իր եզն ու սայլը տրամադրեր գնդի իրերը փոխադրելու, որը 10000 փթից ավելի էր:

Գնդի հրամանատար Մ. Մելիք–Շահնազարյանի խնդիրքին ու սպառնալիքին գյուղացիք պատասխանում էին ցինիկ «ծիծաղով»: Գնդի սպայական խորհրդի ժամանակ բացարձակապես վճռած ենք լինում՝ ինչ գնով էլ լինի տեղափոխել իրերը և որ եթե գյուղացիքը սայլ ու էշեր չտան, այն ժամանակ պատժել նրանց:

Գնդապետ Մ. Մելիք–Շահնազարյանը պատասխանում է, թե «իրեն խղճին հակառակ բան է թնդանոթը ուղղել հայկական գյուղի վրա և իզուր տեղը արյուն թափել»:

Բայց խոստովանում եմ, որ այս սոսկալի պատասխանատվությունը վերցնում եմ ինձ վրա՝ ասելով բոլոր սպաների առաջ, որ «Ես այս պատմական դերը վերցնում եմ ինքս ինձ վրա և կկատարեմ: **Վաղը թող**

---

[14] Բնագրում անվանումը աղավաղված է և դժվարընթեռնելի: Թոխլուջան (հնում՝ Դրախտիկ) հավանաբար նույնանուն գյուղի մոտ Արեգունի լեռնաշղթայի լեռնագագաթներից մեկն է:

[15] Նաև Այրիջա: 1940–1960–ականներին լքված գյուղ Գեղարքունիքում, Մարտունիից 10 կմ հարավ–արևմուտք՝ Արգիճիի աջ ափին:

[16] Գյուղ Մարտունի–Վայոց ձոր ճանապարհի վրա, Գեղհովիտ գյուղից 10 կմ հարավ:

[17] Այժմ՝ Ծաղկաշեն՝ Մարտունիից 10 կմ հարավ, ձուլվել է Մադինա գյուղին:

ստեղծվի Հայ իրականություն. ես մեծ ուրախությամբ կպատասխանեմ մեղավորների նստարանին նստած: Բայց այսօր այդ գործը կկատարեմ մեկին պատժելով, որպեսզի ռազմական իրերը տեղափոխենք Զանգեզուր՝ ապագայի համար»:

Եվ ահա այսօր ո՞վ գիտեր, որ միևնույն ռազմամթերքը և 1918 թ. կատարած գործը իր գեղեցիկ պտուղները կտար 1921 թվին Սյունաց լեռներում՝ բարձր սարերում ու խոր ձորերում, որտեղ արյուն է հոսում արդարության անունից, ընդդեմ բռնության: Ուրախ եմ, որ ռմբակոծելով Սևանի գյուղերը՝ ազատվում է Զանգեզուրը, և ո՞վ կարող է ասել, որ այս բոլորը ճշմարտություն չէ:

Չորրորդ: Ահա անցնում եմ Զանգեզուր, որտեղ միևնույն անարխիան էր տիրում: Եվ Գորիս ժամանելուց հետո այն խոշոր համբավը, որոնք ես ստացա Սևանի, Ն. Բայազետի, Բասարգեչարի շրջաններում, իր խոր արմատները ու համբավը ցույց են տալիս Զանգեզուրում: Գորիս մտնելուց իսկույն հայտարարում եմ զինվորների ու ձիաների զինակոչ, որը շատ հաջողակ է անցնում՝ բացի Տեղ գյուղից, որը պատասխանում է՝ վերադարձնելով իմ հրամանը, թե իրենք չեն ճանաչում ո՛չ Ազգային խորհուրդ, ո՛չ հայ պետականություն:

Կենտրոնական Ազգային խորհրդի հետ խորհրդակցելուց հետո, վճռում ենք գյուղը ենթարկել էկզեկուցիայի՝ գյուղից պահանջելով երկու հարյուր հազար ռուբլի կոնտրիբուցիա՝ 4800 փութ ալյուր, 1000 փութ գարի՝ զորամասերի համար, տալ այն բոլոր դրդողներին և այն չարագործներին, որոնք Ղարաբաղի զինվորներին սպանում են հրացանի ու փամփուշտի համար:

Այդ պատիժը լիովին կատարելուց հետո պահանջները ամբողջովին ստանում եմ, իսկ մարդասպան երկու հոգուն 1918 թ. հունիսի 23–ին ի ներկայությամբ գյուղերից կանչված պատգամավորների, նրանց աչքի առաջ գնդակահարում Գորիս քաղաքում: Եվ այս միակ միջոցն էր, որ ժողովուրդը իմանար, թե նրանք պիտի ապրեն խաղաղ կյանքի մեջ և լավ իմանան, որ կա Հայկական կառավարություն:

Ես գործում էի՝ ինքս վերցնելով իմ իրավունքի սահմանը, որովհետև այդ էր մոմենտի պահանջը:

Հինգերորդ: Խոշոր դեպքը 1918 թ. սեպտեմբերի 13–ին և 14–ին էր, երբ տաճկական բանակը գրավում է Ղարաբաղը, միաժամանակ շարժվում է դեպի Զանգեզուր. այստեղ իմ առաջին ճակատամարտն է: Մեծ հաղթությամբ դրանց շպրտում եմ՝ վերցնելով գերիներ, գնդացիրներ և շատ ուրիշ ռազմական իրեր:

Այստեղ ես պիտի շեշտեմ և այն, որ երբ Ազգային հերոս Անդրանիկը, Զանգեզուրը թողած, կռվի վերջավորությանը չսպասած, կատարյալ կերպով թողնում, փախչում է՝ թալանի տալով մեր ունեցած ռազմական իրերը ու պահեստները, ես, միակ սպան էի, որ իսկույն ևեթ դեմ կանգնեցի ու ազատեցի մնացորդը, և նա՝ Անդրանիկը, շարունակ ասում էր, թե «Դուք չեք, որ հայ ժողովուրդը պիտի ազատեք, և լավ իմացած եղեք, որ փամփուշտներն ու ռազմամթերքը պիտի թողնեք թուրքերին»:

Նա բարձրաձայն էր խոսում ամբոխի մեջ և ցանկանում էր մտքերը պղտորել: Բայց այսօր ես ուրախ եմ, որ նա խաբված էր. այդ առթիվ ես ունեմ Ազգային Խորհրդի վկայական՝ այս բոլորը հաստատող և այս գործի համար ինձ Հանրապետությունը շնորհած է կապիտանի աստիճան:

Վեցերրորդ: Ղափանի շրջանում Ղարաբաբա[18] և Ագարակ գյուղերի 1919 թ. հուլիս ամսի կռիվներն են, որտեղ Նուրի փաշան կատարյալ պարտվում է, և այդ ժամանակ ռազմական ինիցիատիվան մեր ձեռին է մնում, և սորա համար չէ, որ պիտի խոսեմ, այլ ավելի քան մեծ ճակատամարտի համար, որ Եվրոպան իմացավ:

Եվ յոթերորդը: Իմ զինվորական շրջանի և կյանքիս հռչակավոր վայրկյաններից մեկն է և ամենամեծը: Այս է, որ շատ ուշադրությամբ պիտի կանգ առնեմ, իսկական պատկերը տալու, որովհետև զինվորականի համար հաղթություն տանելը մի ամբողջ կյանք է: Բայց մանավանդ այն ժամանակ, երբ ճակատամարտը ղեկավարում է հասարակ տեղակալ–պարուչիկ[19], իսկ նրան հակառակորդ կանգնած է հզոր հռչակավոր զորավար Շիխլինսկին: Տեղ գյուղի ճակատամարտն իր ժամա-

---

[18] Հնում՝ Տանձատափա: Մելիք–Քարամյան իշխանական գերդաստանին պատկանող բնակատեղի գյուղերից:

[19] ՀՀ շրջանում հայացրել են զինվորական աստիճանները: Օրինակ՝ «պարուչիկի» փոխարեն՝ «տեղակալ» անվանումը:

նակին Հանրապետությունը հեռագրով անշուշտ Ձեզ հայտնած կլինի և Ձեզ համար շատ պարզ է եղած այս բոլորը, որ ես ունեցած եմ խոշոր մաս[20]: **Եվ իսկապես 1919 թ. նոյեմբերյան հաղթանակներ տանողը ես եմ:** Ազերբեջանական զորքերը, որոնք բաղկացած էին ուղիղ 14000, եղան ջարդուփշուր ու այդ ես եմ, որ տարա իմ ուսերի վրա ու եղա ամենաբախտավորը, որովհետև զինվորականի համար մի ամբողջ կյանք է:

Այս բոլորի ապացույցն է ճակատամարտի դաշտում թշնամու թողած հարյուրավոր դիակները, 2–րդ Զաքաթալյան ազրբեջանական գնդի գերիները, 34 գնդացիրները, 2 թնդանոթ, կերակուր եփելու կայանքը, Կարմիր Խաչի սայլեր, հեռախոսի լարեր՝ իրենց մեքենաներով և հարյուր հազարներով փամփուշտներ՝ մեծ քանակությամբ հրացանների հետ:

Եվ արդյո՞ք այսօր, որևիցե անհատ կգտնվի և կարող կլինի խոսելու, թե այդ խոշոր հաղթությունը ես չեմ տանողը, ես չեմ ղեկավարողը: Ո՛չ, չի կարող, որովհետև ես դեռ կենդանի եմ և դրա ապացույցը շատ մեծ է և ապագա պատմությունը պիտի խոսի:

---

[20] Ըստ Զ. Յոլյանի «Արսեն Շահմազյան» հուշի՝ «Մուսաֆաթի կառավարությունը վերջնականապես համոզվեց, որ դիվանագիտական պայքարով անկարող է ընկճել Հայաստանի սիրտը՝ Զանգեզուրը, չնայած, որ եվրոպական «դաշնակից» պետությունների գլխավոր հրամանատարների և դիվանագիտական ներկայացուցիչների ուղղակի թե անուղղակի պաշտպանությունը հօգուտ Ադրբեջանի էր: Ադրբեջանի կառավարությունը վճռել էր՝ մի վերջին անգամ ևս դիմի զենքի: Բովանդակ ուժերը, համախմբվելով Զանգեզուրի Զաբուղ գետի արևելյան ափերի երկայնքով, 1919 թ. նոյեմբերի 1–ին դիմեցին հարձակման, որը կանոնավոր պատերազմ էր: Այս բանակի հրամանատարն էր հայտնի զորավար Մեհմանդարովը (ռազմական նախարար), որի դեմ գործում էր Զանգեզուրի զինված ուժերի հրամանատար գնդապետ Ա. Շահմազյանն իր սպայակույտի մի քանի սպաներով: Պետք է ասել, որ այդ կռիվների մեջ մեծ դեր ունեցան տեղացի քաջահմուտ սպաները՝ Սիսիանում: Բուն Զանգեզուրի շրջանում զինված ուժերի գլուխն էին կանգնած գնդապետ Բաղդան Մելիք–Հուսեինյանը և Խաչատուր Մալինցյանը: Եվ այդ շրջանների բոլոր ուժերի գործողությունները կատարվում էին Ա. Շահմազյանի ռազմավարական ծրագրերով: Այսպիսով՝ Ադրբեջանի բովանդակ ուժերը, որ հաշվում էին մեկ դիվիզիա, կենտրոնացվել էին Զանգեզուրի դեմ: Հինգ օրվա ահեղ կռիվներում այդ բանակը մասամբ ջարդվեց, մասամբ էլ անձնատուր եղավ հայկական ուժերին: Դժբախտաբար, այդ հերոսամարտին մասնակցած և մեր հայրենիքի ու զենքի պատիվը բարձրացրած զինվորները, սպաներն ու գլխավոր ղեկավարները ենթարկվեցին բոլշևիկների ամենադաժան հալածանքին ու շատերն էլ կնքեցին իրենց մահկանացուն նրանց արգելափակարաններում ու Սիբիրի սառնամանիքներում»: «Ալիք», 1949, օգոստոսի 23:

Եվ ահա այսօր, հանդերձ իմ կատարած գործերին, որը շատ պարզ է և կարող է հաստատել նախկին պ. Նախարարապետ Խատիսյանը, որ իսկապես արիական քաջությամբ, թե խոհեմությամբ և զինվորական հմուտ գիտությամբ հաղթությունը, որը պատմության էջերում ոսկի բառերով պիտի գրվի և այդ է, որ ինձ իրավունք է տալիս խնդրելու պ. Նախագահ Ձերդ Վսեմությանը, որ ինձ միջոց տրվի, ի սեր իմ կատարած ծառայությանը, շարունակելու իմ զինվորական կրթությունը, որպեսզի վաղը ավելի տաղանդ, հմուտ ռազմագիտություն ստանամ և ամբողջ իմ ուժերը տրամադրեմ սիրելի Հայաստանի երիտասարդ արի բանակին:

Ես չեմ ցանկանում և չեմ խնդրում ձեզանից մի կտոր չոր հաց, այլ խնդրում եմ տաք միջոց և աջակցություն ֆրանսիական ուսումնարաններում կամ գնդերում ստանալու զինվորական կրթություն, վաղը ավելի ծառայելու Հայրենիքի կարոտ սարերին, ձորերին, որովհետև բանակն է, որ պիտի կազմի Հայրենիքի հիմքը և բանակն է, որ պիտի ունենա գիտուն, խելոք, արի երիտասարդ սպայակույտ, որոնցից կախված է բանակի ներքին ուժեղ կարգը, կազմակերպչական հիմքը և դրանից հետո միայն կախված է ազգի փրկությունը: Եվ ամենին է հայտնի, որ այն ազգը, որը չունի ռեգուլյար, կատարելագործված բանակ–սվիններով, նա չի կարող ապրել:

Ութերորդ: Ղարաբաղի արշավանքն է 1920 թ. մարտի 23–ին, որտեղ ես նորեն իբրև Սիսիանի զորաբաժնի պետ, շատ մեծ հաղթություն տարած եմ և այս առթիվ չպիտի խոսեմ, որովհետև իմ կյանքում շատ խոշոր դեր է կատարած, միայն ես շատ խնդրում եմ, որ աչքի առաջ բերեք և այն, որ ես ընդամենը 4 տարի է սպա եմ և ստացած այնքան մեծ հռչակված անուն Զանգեզուրի, Բայազետի, Սևանի շրջաններում, 28 տարեկան հասակում, գնդապետի աստիճանով, որը միայն ցանկանում է և դեռ շատ պիտի ծառայի՝ ի սեր տանջված հայ ժողովրդին ու սիրելի Հայրենիքին և հույս ունեմ, որ անպատճառ ինձ կընդունեք ծառայության Ֆրանսիական դպրոցում կամ գնդի մեջ, որը ինձ համար միևնույն նշանակությունը կունենա, ինչպես մարդուս համար է անհրաժեշտ օդը:

Զանգեզուրի ռազմական ուժերի նախկին հրամանատար գնդապետ Խաչատուր Մալինցյան

հուլիս, 1921 թ.,
Փարիզ քաղաք

ԹԻՎ 2
Խ. ՄԱԼԻՆՑՅԱՆԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ[21]
(26 դեկտեմբերի, 1921 թ.)

Ես ղեկավարում էի հայկական ուժերը, երբ Ադրբեջանի հրոսակախմբերը և կանոնավոր զորքերը շարժվում էին դեպի Զանգեզուր:

1918 թ. սեպտեմբերի 12–ից մինչև 19–ը ընկած ժամանակամիջոցում ընդունեցինք հարձակողական դիրք և շրջանցելով աջ թևը՝ ուժեղ հակահարված տվինք թշնամուն՝ ստիպելով թշնամուն խուճապի մատնվել՝ գերի վերցնելով 27 հոգու, 3 գնդացիր և մեծ քանակությամբ ռազմամթերք: Թշնամին ռազմադաշտում թողեց բազմաթիվ սպանվածներ և վիրավորներ: Այս հաջողության շնորհիվ Զանգեզուրը կարողացավ խուսափել հետագա վտանգներից: Նշված ծառայությունների համար ստացա կապիտանի կոչում:

1919 թ. նոյեմբերի 1–ից մինչև 7–ը ընկած ժամանակահատվածում ես ղեկավարում էի Զանգեզուրի բանակը, երբ գեներալ Շիխլինսկու հրամանատարության ներքո Ադրբեջանի կանոնավոր զորքերը շարժվում էին դեպի մեր կողմը: Նոյեմբերի 7–ին ամբողջ ճակատով սկսելով հակահարձակումը ջախջախեցի թշնամուն՝ գրավելով մեկ թնդանոթ, 32 գնդացիր, 675 ռազմագերի և մեծ քանակությամբ ռազմամթերք:

Այդ նոր ծառայությունների համար ստացա փոխգնդապետի կոչում:

1920 թ. մարտի 23–ից մինչև ապրիլի 7–ը, երբ հանրապետության զորքերը շարժվում էին դեպի Ղարաբաղ, ես ջաղջախիչ պարտության մատնեցի Ադրբեջանի կանոնավոր զորքերին՝ ստիպելով թշնամուն խուճապահար փախչել: Այդ ժամանակ ներխուժեցի Ղարաբաղ՝ վերջնականապես կոտրելով մեր թշնամուն: Այսպիսով ես փրկեցի այդտեղի հայ ժողովրդին իսկական բնաջնջումից և հնարավորություն տվեցի այդ շրջանին միավորվելու մայր հայրենիքին:

Մենք գերեվարեցինք բազմաթիվ գերիներ, վերցրինք գնդացիրներ և մեծ քանակությամբ ռազմամթերք: Այդ ծառայությունների համար ստացա գնդապետի կոչում:

---

[21] Հանձնվել է Միքայել Պապաջանյանին:

Ես ծառայում էի Հայկական Առաջին հրաձգային զորագնդում մինչև 1918 թ. հունվարի 20–ը: Հայկական զորքերի գլխավոր հրամանատարի հրամանով տեղափոխվեցի Զանգեզուր՝ որպես տեղի զորքերի հրամանատար՝ 1918 թ. մայիսի 2–ից մինչև 1919 թ. դեկտեմբերի 24–ը:

Միաժամանակ Զանգեզուրի անսամբլեայի և Ազգային Խորհրդի կողմից նշանակվեցի Զանգեզուրի դիկտատոր՝ անսահմանափակ իշխանությամբ՝ ռազմական և քաղաքացիական գործերի համար: Այստեղ ես ևս արժանապատվորեն կատարեցի իմ պարտականությունը և պարգևատրվեցի:

Պաշտոնական կոչումներ՝

Սերժանտ՝ 1915 թ. դեկտ.1, Կովկասյան ճակատում:

Ենթասպա՝ 1916 թ. ապրիլի 1, մարտական ծառայությունների համար:

Լեյտենանտ՝ 1916 թ., սեպտեմբերի 17:

Փոխկապիտան՝ 24 ապրիլի 1917 թ.:

Կապիտան՝ 1920 թ. հունվարի 4:

Փոխգնդապետ՝ 1920 թ. հունվարի 24:

Գնդապետ՝ 1920 թ. հուլիսի 17[22]:

Ստացած շքանշաններ

Սբ. Աննայի՝ 4–րդ, 3–րդ, 2–րդ աստիճանի, քաջության համար:

Սբ. Ստանիսլավի՝ 3–րդ, 2–րդ աստիճանների:

Սբ. Գեորգիևյան՝ 4–րդ, 3–րդ, 2–րդ 1–ին աստիճանների:

ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 946, թթ. 34–36:
Թարգմանություն ֆրանսերենից:

[22] Ամսաթիվն ակնհայտ վրիպակ է, քանի որ այդ ժամանակ Մալինցյանն արդեն Հայկական բանակի շարքերում չէր:

ՎՏԱՐԱՆԴԻ ԳՈՐԾԻՉՆԵՐԻ ՀՈՒՇԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

ԹԻՎ 1
ՎԱՆԲԵԿԻ[23] ՀՈՒՇԵՐԸ

…Այժմ դուք, Մայր հողի վրա կաշկանդված, իսկ քո զավակներդ տարագրված դեգերում են օտար ափերում, հայրենի հիշատակներն իրենց սրտերում: Այդ հիշատակները բազմապիսի են, որոնք ամեն օր ու ժամ հուզում են մեր ցավատանջ միտքն ու հոգին ու մեզ մղում գրական մի վիճակի՝ վառ պահել հայրենի երկրի դեպքերն ու տպավորությունները հայ գաղթաշխարհում այն լի հավատքով, որ մեր պայքարը տևական դարձնելով՝ մի օր տեր պիտի կանգնենք մեր հող ու ջրին:

Ինչպես այսօր դեռ իմ ականջներում հնչում է մեր լեռնցու գոռ ուռաները կազմակերպված տաճկաադրբեջանական և տաճկասովետական զորքերի դեմ: Մի՞թե կմոռացվի ձեր ու մեր հիշողություններից հաղթանակների այն շարանը, որ արձանագրեցիք դուք… Մի՞թե վերհիշելի, դրվատելի չէ Քաչալ–դաղի, Խոզնավար–Խնածախ–Տեղ–Կոռնիձոր երկար ճակատի վրա տարած այն փառահեղ հաղթանակը 20 հազարանոց ադրբեջանական կանոնավոր բանակի և հազարավոր տեղական ուժերի դեմ, որը մղեցիք դուք Արսեն Շահմազյանի ղեկավարությամբ աշնան ցուրտ օրերին…

Մի՞թե գորիսեցի սպա Մալինցյանի Տեղ գյուղի ճակատային գրոհները ադրբեջանական բազմահազար ուժերի դեմ, որտեղ պարտության մատնեց հոխորտացող թշնամուն, այդ մեծ հաղթանակը մինչև օրս դուք չէ՞ք պատմում:

«Ալիք», 1979, մայիսի 27, թ. 108:

---

[23] Վազգեն Միրզաբեկյան (1897, Շուշի – 4.10.1987, Թեհրան). նշանավոր հայդուկ Մածուն Խեչոյի եղբոր տղան: Սովորել է Ալեքսանդրապոլի զինվորական դպրոցում, մասնակցել է 1918–1920 թթ. հայ–թուրքական պատերազմներին, Փետրվարյան ապստամբությանը: 1921 թ. անցել է Իրան: Թղթակցել է «Ալիք» օրաթերթին:

ԹԻՎ 2
ՌՈՒԲԵՆ ՆԱՐԻՆՅԱՆԻ ՀՈՒՇԵՐԸ[24]

…Անդրանիկին մեծարողներից ու սիրող շատ շատերից մեկն եմ: Չեմ կարող ժխտել, որ ոմանց վրա ձեռք է բարձրացրել: Բայց ենթակաները երբեք չէին գանգատվում, այլ ընդհակառակը, ասում էին, թե մեղավորը իրենք են եղել:

Զանգեզուրում մի լավ սպա ունեինք՝ տեղակալ Խաչատուր Մալինցյան: Այս սպան, երբ լսում էր, որ Անդրանիկը մեկի վրա ձեռք է բարձրացրել, ջղայնանում էր և ասում. «Նման վիրավորանք ինչպե՞ս են հանդուրժում: Եթե ինձ հետ նման դեպք պատահի, ատրճանակս կհանեմ և կուղեմ իրեն՝ մեկ, երկու»:

Սպաներս ծիծաղում էինք և ասում. «Ձեռքդ չի բարձրանա, անտեղի է այդպես խոսել»:

Դժբախտաբար, բայց իմ կարծիքով բարեբախտաբար, այսպես եմ մտածում, որովհետև, եթե այս ցավալի դեպքը չլիներ, մեր Խաչատուրը կմնար իր համոզման մեջ ու շարունակ կկրկներ և գուցե գտնվեին միամիտներ, որոնք հավատք ընծայեին նրա ասածին:

Դեպքերն այնպես դասավորվեցին, որ փոթորիկ պայթեց նաև մեր սիրելի Մալինցյանի գլխին:

Խաչատուր Մալինցյանը այդ օրերին քաղաքի[25] պարետն էր և բանտի հսկիչը:

Բանտարկյալների շարքում կար նաև Տեղ գյուղից մի երիտասարդ: Մայրը լսում է, որ տղան հիվանդ է: Գյուղից գալիս է քաղաք, այցելում որդուն, հետո խնդրում Խաչատուրին, որ իրավունք տա տղային մի քանի օրով տուն տանի և կազդուրելուց հետո նորից բերի:

---

[24] Ռուբեն Նարինյան (1890, Շուշի – 8.08.1985, Թեհրան): Մարտնչել է Առաջին աշխարհամարտի տաճկական ճակատում: 1918 թ. մասնակցել է Ղարաքիլիսայի ճակատամարտին, 1918–1921 թթ. Զանգեզուրի գոյամարտին. նախ՝ Անդրանիկի, ապա՝ Ա. Շահմազյանի և Գ. Նժդեհի ղեկավարության օրոք եղել է գլխավոր սպայակույտի պետ, սկզբում՝ գլխապետի, ապա՝ գնդապետի աստիճանով: 1921 թ. տարագրվել է Իրան, նվիրվել ուսուցչական գործունեության:

[25] Նկատի ունի Գորիսը:

Խաչատուրը համաձայնվում է (այդ իրավունքը նա չուներ) և հայտնում, որ վաղը գա որդուն տանի: Հաջորդ օրը մայրը գալիս է որդուն տանելու: Խաչատուրի համար էլ բերած է լինում քիչ մեղր, կարագ և երկու հավ: Այս անգամ էլ Խաչատուրը հայտնում է, որ ինքը երկու օրից հետո կուղարկի:

Մայրը նվերները հանձնում է Խաչատուրին, ինքը վերադառնում է գյուղ՝ սպասելով որդուն:

Երեք օր սպասելուց հետո հուսահատված մի խնդրագիր է գրել տալիս՝ պատմելով եղածը և գրությունը ձեռքին առավոտյան վաղ գալիս է Գորիս: Հասնում է Անդրանիկի կացարանի դուռը ու հայտնում պահակներին, որ ուզում է Փաշային տեսնել, գործ ունի:

Անդրանիկին հայտնելուց հետո գեղջկուհուն ներս են հրավիրում: Բանտարկյալի մայրը արցունքոտ աչքերով խոնարհաբար մոտենում է Անդրանիկին և խնդրագիրը մեկնում:

Անդրանիկը, տեղեկանալով կատարվածին, կարգադրում է անմիջապես կանչել Խաչատուր Մալինցյանին:

Խաչատուրը, մտածելով, որ Անդրանիկը կանչում է որևէ կարևոր կարգադրության համար, շտապ հագնվում է, կապում է ատրճանակն ու թուրը և ներկայանում է Անդրանիկին:

— Պատրաստ եմ Ձեր հրամանին, Փաշա՛:

Անդրանիկը բազկաթոռից բարձրանալով, դանդաղ շարժվում է դեպի Խաչատուրը և ձեռքով ցույց տալով դռան մոտ կանգնած մայրիկին՝ հարցնում է.

— Խաչատո՛ւր Մալինցյան, մայրիկին կը ճանչնա՞ս, շո՛ւտ ըսե, կը ճանչնա՞ս…

Խաչատուրը նայում է և անակնկալի եկած՝ գույն տալիս, գույն առնում:

Երբ Անդրանիկը մոտենում և հազիվ ձեռքը դիպցնում է Մալինցյանին, վերջինս շփոթված ընկնում է մի կողմի վրա:

Անդրանիկը, երկու անգամ էլ ոտքով խփելով, կարգադրում է վաշտապետներին դուրս տանել սենյակից: Երկու հոգով թևերի տակը մտնելով՝ շփոթահար Խաչատուրին հասցնում են տուն: Խաչատուրի կինը շփոթված հարցնում է, թե ինչ է պատահել: Պատասխանում են, որ

Անդրանիկի մոտից դուրս գալու պահին սանդուղքներից ընկել է:

Խաչատուրի ձեռքն ու ոտքը թեթև հարված էին ստացել: Երկու, երեք օր հետո տնից դուրս է գալիս և մի օր, երբ սպաները Գորիսի փոքրիկ հրապարակում կանգնած զրուցում էին, հեռվից տեսնում են Խաչատուրին, որ գալիս է դեպի իրենց՝ ձախ ձեռքը թաշկինակով կապված:

Բարևելուց հետո ընկերները ծիծաղելով հարձակվում են Խաչատուրի վրա ու հարցնում. «Խաչատո՛ւր, մի՞թե ատրճանակդ ու սուրդ վրադ չէին»… «Ես սխալված էի, ղալաթ եմ արել: Ես կարծում էի, որ Անդրանիկն էլ մեզ պես մի սպա է: Բայց ի՞նչ, նա մեզ նման մարդ չէ: Նա հրաշք մարդ է: Նա, երբ որ աչքերը հառած դեմքիս մոտենում էր ինձ, նրա հայացքից իսկ ես արդեն ինձ կորցրել էի, եթե ձեռքն էլ չբարձրացներ, ես ուշակորույս պիտի ընկնեի: Մի՞թե ձեռքս կշարժվեր դեպի ատրճանակ: Ես ղալաթ եմ արել, ներե՛ք ինձ, ընկերներ…»:

Մի քանի օրից հետո Խաչատուրը Անդրանիկին և մեր ընկեր սպաներին հրավիրում է ընթրիքի: Ուտում, խմում, փոխադարձ կենացներ ենք խմում ու լավ տրամադրությամբ ցրվում: Ոչ մի ակնարկ չի լինում պատահած միջադեպի շուրջ: Անդրանիկը վերին աստիճանի մեծահոգի էր ու անհիշաչար:

Ռուբեն Նարինյան, Ազգային հերոս Անդրանիկը Զանգեզուրում,
«Ալիք», Թեհրան, 1974, ապրիլի 4–8, թ. 72

ԹԻՎ 3
ԳԱՍՊԱՐ ԳԱՍՊԱՐՅԱՆԻ «ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ» [26]

«Ստեմելի[27] հոդվածում կարդում եմ. «Բուն Զանգեզուրում ռազմական ուժերը դրվում է գնդապետ Բուղդան Մելիք–Հուսեյինյանի[28] տրա-

---

[26] Գասպար Գասպարյան ծնվել է 1888թ. Նախիջևանի Ջահուկ գյուղում: Պատանի հասակից անդամակցելով ՀՅԴ–ին՝ ողջ կյանքը նվիրել է ազգային–ազատագրական պայքարին, որի մասին գրել է «Հուշեր»: 1919 թ. մարտի սկզբներին, երբ Գ. Գասպարյանը հանդիպում է զինավարժության իր երբեմնի ուսուցչին՝ Գորիս մեկնող Սյունիքի նորանշանակ գեներալ–կոմիսար Արսեն Շահմազյանին, միանում է նրա խմբին և մինչև վերջինիս Երևան վերադառնալը՝ 1919 թ. դեկտեմբերը, կատարում է վերջինիս ամենավտանգավոր հանձնարարությունները: Թեպետ կինը՝ Արմենուհին, հայտնի բոլշևիկ, կուսակցական գործիչ Արամ Շահգելդյանի քույրն էր, սակայն 1933 թ. նրան ևս աքսորում են Սիբիր: 1934 թ. աքսորից փախչելով՝ Արամայիս Մանուչարյան կեղծանունով բնակություն է հաստատել Ուկրաինայի Բերդյանսկ քաղաքում: Երկրորդ աշխարհամարտի տարիներին՝ գերմանացիների կողմից քաղաքը գրավելուց հետո, անցել է Գերմանիա, իսկ հետո՝ 1950 թ., Ջ. Մարտիկյանի ջանքերով տեղափոխվել է ԱՄՆ, ուր և մահացել է:

[27] Ստեփան Ղազարի Մելիք–Փարսադանյան (1888, Բեխ – 15.12.1964, Ֆրեզնո). ավարտել է Շուշիի Թեմական դպրոցը, Կիևի համալսարանը: Ակտիվ մասնակցել է Զանգեզուրի ռազմաքաղաքական պայքարին: 1927 թ. ձերբակալվել է և աքսորվել, իսկ Երկրորդ աշխարհամարտից հետո անցել է ԱՄՆ: «Հայրենիք» ամսագրում, «Ասպարեզ» թերթում հրապարակել է հուշեր Սյունիքի հերոսամարտի մասին, որոնցից մեկն էլ վկայակոչում է Գ. Գասպարյանը:

[28] Ըստ այլ հուշերի՝ Բաղդան Մելիք–Հուսեյինյանը Բարգուշատի ճակատի հրամանատարն էր: Շատ աղոտ տեղեկություններ կան Գորիսի ազնվական կոչում ունեցող այդ տոհմից (տոհմի մասին գրել է Երվանդ Լալայանը. տե՛ս «Ազգագրական հանդես», Թիֆլիս, 1898, թիվ 2) սերված, ռուսական բանակի գնդապետ Բաղդան (Ալլահվերդի) Մելիք–Հուսեյինյանի մասին: Փոխգնդապետի կոչումով 1918 թ. հոկտեմբերի 4–ին սպաներ Ստեսարի (Ստեփան Սարգսյան) և Ռուբեն Նարինյանի հետ Գորիս է ժամանել: Հայոց բանակի 3 սպաների գալուստը Երևանից սկզբում կասկած էր ծնել Անդրանիկի մերձավորների մոտ, որ իբր նրանք Արամի կողմից ուղարկվել են Անդրանիկին ահաբեկելու մտադրությամբ: Սյունիքի տարբեր ճակատներում մասնակցել է կռիվներին և անհայտ պարագաներում սպանվել: Սպանվել է բոլշևիկների կողմից Զանգեզուրի առաջին գրավման ժամանակ՝ 1920 թ. ամռանը. «Հուլիսի 10–15 ձերբակալել և անհետացրել են հայկական բանակի մի շարք սպաների՝ գնդապետ Բոգդան Մելիք–Հուսեյինյանին» («Հառաջ», 1920, սեպտեմբերի 10). Իսկ ըստ Ա. Խանզատյանի՝ 1920 թ. աշնանը նա եղել է Զանգեզուր ներխուժած Կարմիր բանակի զինախմբերից մեկի հրամանատարը, որոնց դեմ կռվել են իրենք (Աւօ, «Յեղափոխական Ալպոմ», հտ. Ե, Պեյրութ, 1964, էջ 45): Կարծես սրա հաստատումն է նաև այն փաստը, որ Բ.

մադրության տակ, օժանդակ ուժեր ունենալով մի քանի փորձված զինվորականներ, որոնց մեջ խոշոր դեր կատարեց գորիսեցի Խաչատուր Մալինցյանը»[29]: Սա մեջ բերելով Գասպար Գասպարյանը ավելացնում է. «Այս էլ ես եմ՝ ականատեսներից մեկը»:

1919 թ. նոյենբերի 1–ին Ադրբեջանի զորամասերը հարձակվեցին Տեղ գյուղի վրա: Խաչատուր Մալինցյանը մեզ՝ 15 հոգուս նշանակեց Քոմուր Թափայի[30] դիրքերում: Հանձնարարեց մեզ աչալուրջ լինել և հսկել, որպեսզի Ադրբեջանի զորամասերը չկարողանան անցնել ձորի միջով, նամանավանդ գիշերները[31]:

Մելիք–Հուսեյինյանի անունն ընդգրկված է եղել խորհրդային իշխանությունների կողմից 1928 թ. կազմված Զանգեզուրի գավառի նպաստառու զոհվածների ընտանիքների և հաշմանդամների ցուցակում (ՀԱԱ, ֆ. 132, ց. 1, գ. 184): Թեպետ Գորիսում էր զինվորական կոչումով ավելի բարձր տեղացի զինվորական գնդապետ Բաղդան Մելիք–Հուսեյինյանը, սակայն Ա. Շահմազյանի գեներալ–նահանգապետության շրջանում՝ 1919 թ. ապրիլից մինչև դեկտեմբերը, բուն Զանգեզուրում առավել պատասխանատու հրամանատարական դիրք է գրավել հենց Մալինցյանը: Այստեղ որոշ պարզություն է մտցնում Եղիշե Իշխանյանը (Լեռնային Ղարաբաղ, 1917–1920 թթ., Երևան, 1999, էջ 494–495), ով այդ ժամանակ միացյալ Զանգեզուր–Ղարաբաղի Ազգային խորհրդի անդամ էր և իրազեկ էր այդտեղի իրադարձություններին: 1919 թ. օգոստոսի 1–ի օրագրության մեջ նա գրում է. «Կառավարությունը Արսեն Շահմազյանին շտաբի կապիտանի աստիճան ունեցող զինվորականի, նահանգային կոմիսարի պաշտոնով ուղարկում է այստեղ, երբ այստեղ կան ավելի բարձր աստիճան ունեցող զինվորականներ՝ գնդապետ Մելիք–Հուսեյինյան, կապիտաններ՝ Սմբատ Թորոսյան, Ռուբեն Նարինյան, որոնք պիտի ենթակա լինեն նահանգական կոմիսարին, որ միաժամանակ համարվում է Զանգեզուրի մարտական ընդհանուր ուժերի հրամանատար: Մասնավորապես գնդապետ Բ. Մելիք–Հուսեյինյանի և Ա. Շահմազյանի միջև տեղի են ունեցել անցանկալի միջադեպեր: Վերջին անգամ՝ երեք–չորս օր առաջ: Շահմազյանը, որպես նահանգապետ և մարտական ուժերի հրամանատար, գրավոր հրաման է գրում Մելիք–Հուսեինյանին, իսկ վերջինս առարկում է, թե կապիտանը իրավունք չունի հրամայելու գնդապետին, որն աստիճանով ավելի բարձր է: Պետք է Արսեն Շահմազյանի աստիճանը կանխավ բարձրացնեին և հետո ուղարկեին տեղս, որպեսզի անցանկալի թյուրիմացությունների տեղիք չտրվեր»: Այդ սպաների հետ Շահմազյանի՝ սկզբնական շրջանում ունեցած խնդիրների մասին վկայում է նաև Գ. Գասպարյանը («Հայրենիք», 1962, նոյեմբեր–դեկտեմբեր, էջ 38):

[29] Գ. Գասպարյանի «Հիշողությունները» հրապարակող Սերո Խանզադյանը ծանոթագրում է. «Խաչատուր Մալինցյան – գորիսեցի ցարական բանակի ոչ անհայտ զորապետներից: Նրա մայրը (անունը եղել է Հերիքնազ) ու իմ տատ Բոխճին քույրեր են՝ Խնովին տոհմից Խուրշուդի աղջիկները: Նրա մասին տե՛ս իմ «Անդրանիկ» վեպում»:

[30] Տեղի և Կոռնիձորի միջև թրքաբնակ գյուղ, հնում՝ Մոխրանիս:

[31] Զանգեզուրի 1919 թ. նոյեմբերյան հերոսամարտին է նվիրված Արտեմ Խանզադյանի

Վեց օր աչքովս տեսել եմ: Խրամատից դուրս գալ հնարավոր չէր, նամանավանդ ցերեկները: Ադրբեջանի թնդանոթները կրակում էին Տեղ գյուղի վրա, Քոմմի բլուրի հետևից: Վերջին օրը քաջալերվեցին և թնդանոթները առաջ քաշեցին, ուղղակի դաշտի միջից կրակեցին ու քանդեցին մի քանի տներ Տեղ գյուղում: Եվ որովհետև ադրբեջանցիների թնդան–ոթները մեծ էին, իսկ մեր երեք թնդանոթները՝ փոքր, լռել էին:

Տեսնելով թշնամու մոտեցած թնդանոթները Սիմոնը կայծակի արագությամբ տակնուվրա արեց թշնամուն: Ադրբեջանի զորամասերը նոյեմբերի 7–ին հետ նահանջեցին դեպի Զաբուղի ձորը: Ադրբեջանի թնդանոթների ղեկավարն էր ռուսական օֆիցեր Կուզնեցովը:

Խաչատուր Մալինցյանը, եթե դուք դեմքից չճանաչեիք, կկարծեիք, թե հասարակ զինվոր է: Նա հարյուր տոկոսով գիտեր՝ ում ինչ գործ հանձնի:

Խ. Մալինցյանին այդ ճակատի հրամանատար նշանակելը Արսեն Շահմազյանի[32] խելքն էր: Նա հոգեբան էր:

(Ա. Զանգեզուրցի) «Ադրբէջանի 16 հազարանոց մեծ բանակի դէմ կռիւը Զանգեզուրեան լեռնաշխարհի, Գորիսի սար ու ձորերի վրայ» հուշապատումը: «Քաչալ–դաղի սարերից և Խոզնավարի շրջանից հարձակումներ սկսելիս նույն օրը թուրքերը արշավանք են գործում Տեղ–Գոռնիձոր շրջանից վեց դյումանոց թնդանոթների կրակների տակ և առաջանում են դեպի հայկական Տեղ գյուղը: Գնդապետ Ամիրխանյանը, հրամանատար Խ. Մալինցյանի հրահանգի համաձայն, իր ուժերովը թուրք զորքերի առաջը բռնած կռվում է ու հեռախոսով հայտնում Գորիս՝ ազգային Խորհրդին ու Շահմազյանին թուրք զորքերի առաջխաղացման մասին» («Ալիք», հունիս–հուլիս, 1974 թ.): Ա. Խանզադյանը, ինչպես հետագայում Հ. Սիմոնյանը իր «Մի էջ Զանգեզուրյան հերոսամարտից» հոդվածում («Երեկոյան երևան», 1989, թիվ 139–140), այս լայնամասշտաբ կռիվների գլխավոր ճակատի հրամանատար Խ. Մալինցյանի անունը հիշատակում է միայն մեկ անգամ. «Այստեղ (Տեղ–Կոռնիձոր հատվածում) հայկական ուժերի հրամանատարն էր գնդապետ Ամիրխանյանը, որը կռվի հենց առաջին պահից գործադրության մեջ դրեց հրամանատար Խ. Մալինցյանի նախօրոք մշակած գործողության պլանը»:

[32] Արսեն Պողոսի (Պավելի) Շահմազյանը (ծնվ.՝ 1883) 20–րդ դարասկզբին ապրել ու գործել է Թիֆլիսում, զբաղվել ուսուցչությամբ: Մասնակցել է 1905–1906 թթ. հայ–թաթարական ընդհարումներին, ըստ Գ. Գասպարյանի՝ զինավարժություն է պարապել անվարժ հայ երիտասարդների հետ, նրանց պատրաստել կռիվներին: Մասնակցել է Առաջին աշխարհամարտին:

Ընտրվել է 1917 թ. սեպտեմբեր–հոկտեմբեր ամիսներին Թիֆլիսում կայացած Հայոց ազգային համախորհրդակցության պատգամավոր: Հայաստանի անկախացումից հետո ՀՀ Առաջին Խորհրդարանում եղել է Զինվորական հանձնաժողովի անդամ:

1919 թ. օգոստոսից Ադրբեջանի զորամասերը մեծ ուժերով առաջանում էին Զանգեզուրի վրա՝ երեք ուղղությամբ:

Առաջին՝ Ղազի–գյոլ–Ղարաքիլիսա–Ուչ–Թափալար ուղղությամբ:

Երկրորդ՝ Գորիսի ուղղությամբ, ուժեղ զինված թնդանոթներով, որոնց ղեկավարն էր ռուս սպա Կուզնեցովը:

Երրորդը՝ ձախ՝ Արաքսի կողմից՝ Ղափանի վրա: Զանգեզուրի ղեկավարությունը դրան 100 տոկոսով տեղյակ էր: Այս բոլոր անցուդարձի մասին Արսեն Շահմազյանը գրեց, տվեց ինձ և ուղարկեց Երևան: Նա ինձ ասաց. «Կարևոր է, որ դու շուտ վերադառնաս պատասխանով»:

Վերադարձա Գորիս և ներկայացա Արսեն Շահմազյանին: Նրա սենյակում նստած էին 10–12 հոգի ղեկավարներից՝ Գագա Տեր–Օհանյանը[33], Կոստյա Աթայանը[34], Խաչատուր Մալինցյանը, Բուղդան Մելիք–

Կապիտանի զինվորական կոչումով 1919 թ. մարտի սկզբին որպես գեներալ–կոմիսար մեկնելով Սյունիք՝ փոխարինել է իր զորքի հետ հեռացող Անդրանիկին, մինչև նույն թվի դեկտեմբեր ամիսը (Ա. Շահմազյանի պաշտոնավարման ժամկետի ավարտը պետք է համարել դեկտեմբերը, քանի որ նրան փոխարինած Ս. Մելիք–Յոլչյանը 1920 թ. հունիսի 8–ին Զանգեզուրի հայ ժողովրդին ուղղված կոչի մեջ իր պաշտոնավարության ժամանակը համարում է 6 ամիս (ֆ. 252, ց. 2, գ. 34):

Գնդապետ Ա. Շահմազյանը մասնակցել է 1920 թ. հայ–թուրքական պատերազմին՝ Կարսի ճակատում: Կարմիր բանակի կողմից Վրաստանը գրավելուց հետո 1921 թ., ձերբակալվել է Թիֆլիսում և աքսորվել Օրյոլ, ապա՝ Սիբիր՝ Նովո–Տուրուխանսկ: Առաջին աքսորից հետո բնակություն է հաստատել Ռուսաստանում, սակայն Չեկայի մշտական հալածանքներից չի կարողացել խուսափել: 1922 թ. Վանո Խանզադյանը նրան հանդիպել է Մետեխի բանտում: Ա. Ամուրյանը նրան տեսակցել է Մոսկվայում 1928 թ., երբ հերթական աքսորից հետո ապրելիս է եղել Մոսկվային մերձակա քաղաքներից մեկում, որտեղից էլ կրկին աքսորվել է Սիբիր, ուր ծանր ֆիզիկական, հոգեբանական պայմաններին չդիմանալով՝ խելագարվել և վախճանվել է: Մեծ դերակատարություն է ունեցել հատկապես Սյունիքի գոյամարտի կազմակերպման գործում: Գ. Գասպարյանի գնահատմամբ. «Եթե Զանգեզուրն այսօր Հայաստան է կոչվում, դա գլխավորապես Արսեն Շահմազյանի շնորհիվ է: Արսեն Շահմազյանը հիմնաքարը դրավ հայկական Զանգեզուրի, իսկ նրանից հետո Գարեգին Նժդեհը այդ հիմնաքարի վրա կառուցեց հայկական Զանգեզուրի շենքը: Հետագա սերունդները, որոնք պիտի ապրեն ազատ Հայաստանում, Գորիս քաղաքի կենտրոնում պիտի կանգնեցնեն Արսենի և Նժդեհի արձանները՝ որպես անմոռանալի հիշատակներ մեր պատմության»:

[33] Տեր–Օհանյան Գաբրիել (Գագա) Միքայելի (ծնվել է 1888 թ.). իրավաբան, զինվորական գործիչ: Եղել է ՀՀ Խորհրդարանի Զորական հանձնաժողովի անդամ («Զանգ», 10.09.1918 թ.):

[34] Հայկական բանակի սպա՝ ծնունդով ղարաբաղցի:

Հուսեինյանը, Սաքո Յապոնը, Արշակ Շիրինյանը[35], Ազգային Խորհրդից՝ Ամին[36], Թոփչի Սիմոնը, Միշա Արզումանյանը[37] և այլն:

ԹՈՒՐՔԵՐԻ ՀԱՐՁԱԿՈՒՄԸ ԵՎ ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԸ[38]

Թուրքերի ծրագիրն էր՝ գրավել Գորիսը, Ուչ–Թափայով անցնել Տաթև, կապ հաստատել Նախիջևանի թուրք գյուղերի հետ և Սիսիանը կտրել Ղափանի հայ գյուղերից:

Լուր ստացանք, որ Նախիջևանի և Ղափանի թուրք գյուղերը ևս պատրաստվում են և սպասում Ադրբեջանի հարձակմանը:

1919 թ. նոյեմբերի 1–ին Ադրբեջանի զորամասերը հարձակման անցան: Առաջին քողարկված հարձակումը եղավ Տեղ գյուղի կողմից: Թուրքերը անցան Զաբուղ գետը և բարձրացան Տեղ գյուղի դիմացի սարը, ուր կանգ առան: Սպասում էին, որ Ղազի–գյոլի[39] կողմից թուրք զորքերը անցնեին Ուչ–Թափալարը[40]:

---

[35] Արշակ Շիրինյանը Սյունիքի նորագույն շրջանի պատմության պայծառ դեմքերից է: Ծնվել է 1881 թ. հունիսի 14–ին Կոստանդի և Թագուհու ընտանիքում: Հայրը՝ Կոստանդը (նաև՝ Հայրապետ էին կոչում) 25 տարի Շնհերի գյուղապետն էր: Հայրենի գյուղում նախնական կրթություն ստանալուց հետո հորեղբայրը տարել է Բաքու, որտեղ ընդունվել է ռուսական գիմնազիա: Այն ավարտելուց հետո մեկնել է Գերմանիա և Լայպցիգի համալսարանում (սովորել է Բախշի Իշխանյանի հետ) բարձրագույն գյուղատնտեսական կրթություն ստացել: Համալսարանն ավարտելուց հետո վերադարձել է հայրենիք ու զինվորագրվել ազգային–ազատագրական պայքարին, ակտիվ մասնակցելով 1905–1906 թթ. հայ–թաթարական ընդհարումներին: Մեծ դերակատարություն է ունեցել հատկապես 1917–1920 թթ. Սյունիքի ինքնապաշտպանության կազմակերպման գործում՝ դառնալով գլխավոր ղեկավարներից մեկը: Եղել է Զանգեզուրի Կենտրոնական Ազգային խորհրդի անդամ, նախագահ, ընտրվել ՀՀ պառլամենտի անդամ: Զանգեզուրի առաջին գրավման ժամանակ Վ. Խորենիի հետ ձերբակալվել է 11–րդ կարմիր բանակի Ղարաբաղ–Զանգեզուրի գործերի ժամանակավոր արտակարգ լիազոր Արմենակ Ղարագյոզյանի հրամանով և 1920 թ. օգոստոսի 2–ին դաժանաբար սպանվել Գորիսի բանտում:

[36] Ամի են անվանել Մուղդուսոնց Ղազարին:

[37] Մասնակցել է Առաջին աշխարհամարտին, Չորրորդ հայկական կամավորական գնդում եղել է հրամանատար Քեռու օգնականը: 1918 թ. Բաթումի բանակցություններում հայկական պատվիրակության զինվորական կցորդն էր:

[38] «Գասպար Գասպարեանի ոդիսականը», գրեց՝ Ա. Ամուրեան, «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1963, հունվար, էջ 40–47:

[39] Ծանծաղ լճակ Գորիսի շրջանում:

[40] Եռաբլուրներ. լեռնաշղթա Գորիսից հարավ–արևմուտք՝ բաղկացած իրարից հեռու 3

Մինչ Ուչ–թափալար հասնելը թուրքերին հաջողվեց գիշերով, առանց կռվի գրավել Քաչալ–դաղը[41], Գորիսից երեք կիլոմետրի վրա, ուղղակի Գորիսի ուղղությամբ: Այսպիսով մեր հայկական Խնածախ գյուղը մնաց երկու կրակի միջև:

Արսեն Շահմազյանը մեր ուժերը դասավորել էր այսպես: **Գլխավոր մեր զորամասերը Տեղ գյուղումն էին, այդ ճակատի հրամանատար գորիսեցի Մալինցյան Խաչատուրի հրամանի տակ: Նա փորձված մարդ էր, գիշեր ու ցերեկ դիրքերում էր, հասարակ զինվորի պես և մեծ հարգանք կվայելեր:**

Սիսիանի ճակատում, բացի գյուղերի զինված ուժերից, Ղարաքիլիսա և Շաղաթ գյուղերում նստած էր սպա Թոմասը, որի հետ կային 120 ձիավորներ և փորձված տղաներ:

Ղափանի մեր զինված ուժերը միայն ինքնապաշտպանության դիրք պիտի բռնեին:

Նոյեմբերի 2–ին թե 3–ին թուրքերի ուժերը, երբ գրավեցին Քաչալ դաղը, սկսվեց ուժեղ կռիվը բոլոր ճակատներում:

Թոմասը Սիսիանից գիշերով, սուսիկ–փուսիկ անցավ Ղարաքիլիսայի լեռներով ու մոտեցավ Ղազի–գեոլ լճին, որպեսզի կտրեր թուրքերի թիկունքը:

Նույն գիշերը Արզումանյան Միշան և երիտասարդ սպան Ուչ–Թափալարով 40 հոգի տղերքով լռելայն բարձրացան Քաչալ–դաղը, լուսաբացին հասան թուրքերի դիրքերին և անսպասելի կերպով գրոհ տալով թուրքերի վրա՝ առանց դիմադրության գրավեցին երկու գնդացիր և գերի վերցրին 10 հոգի:

Այսպիսով՝ Գորիսը վտանգից ազատվեց, իսկ Թոմասի հաջողությամբ՝ կռվի շրջան մնաց Տեղ գյուղից մինչև Խնածախ ու Կոռնիձոր:

Քաչալ–դաղը գրավելուց հետո, Սիմոն Մելիք–Հարությունյանը[42] իր

գագաթներից, ամենից բարձրը 3355 մ է:

[41] Իշխանասար. լեռնազանգված Սյունիքում՝ Գորիսից հյուսիս–արևմուտք: Ամենից բարձ գագաթը Մեծ Իշխանասարն է՝ 3548 մ: Հարավից միանում է Եռաբլուրներին:

[42] Սխալմամբ գրված է Սահակյան: Սիմոն Զաքարի Մելիք–Հարությունյան (1886–1921). ծնվել է Վայոց ձորի Սերս գյուղում: Նա ևս 1918 թ. աշնանը Արամի կողմից Սյունիք ուղարկված սպաների խմբում էր և ակտիվ մասնակցություն է ունեցել ոչ միայն Զանգե-

օգնական սպա Լևոնի հետ մեր չորս թնդանոթները Գորիսից տարան ու դասավորեցին Տեղ գյուղի բարձունքների վրա: Դա նոյեմբերի 6–ին էր:

Այդ նույն օրը Սաքո–Յապոնը և ես 30 զինված տղերքով, գրավեցինք Քոմուր–Թափան, Տեղ գյուղի Կորնիձորի մեջտեղը: Մեր պարտականությունն էր թույլ չտալ, որ թուրքերը այդ ճանապարհով կտրեին անցնեին մերոնց թիկունքը:

Նոյեմբերի 7–ի լուսաբացին Ադրբեջանի զորքերը մի քիչ առաջացան, թնդանոթները քաշեցին ուղղակի դաշտի մեջ և ռմբակոծում էին գյուղը: Հանկարծակի մեր թնդանոթները որոտացին և ռումբերն ընկան թուրքերի թնդանոթների վրա: Ուղղակի փոթորիկ էր, որ պայթեց: Մենք Քոմուր–Թափայից տեսանք, թե ինչպես թուրքերը խուճապի մատնվեցին և իրենց թնդանոթները լռեցին:

Մինչև երեկո Ադրբեջանի զորամասերը բոլոր ճակատներից նահանջեցին և անցան Զաբուղ գետի մյուս ափը:

Մերոնց հաղթանակը կատարյալ էր: Այդ յոթնօրյա կռիվների ժամանակ մենք շատ քիչ զոհեր ունեցանք: Իսկ Ադրբեջանի զոհերի թիվը դժվար է ասել, որովհետև նրանք իրենց սպանվածների դիակներից տարել էին: Մեր տեսածը, որ մնացել էր՝ 20–25–ն էր, իսկ գերիները շատ էին:

«Բանբեր Հայաստանի արխիվների», 1991, թ. 3, էջ 212–217

զուրի, այլև Վայոց ձորի կռիվներին և հմուտ հրետանավորի և քաջ կռվողի մեծ անուն վաստակել: Սովետական իշխանություն հաստատվելուց հետո հեռացել է Թիֆլիս, ուր և ինքնասպան է եղել՝ բոլշևիկների ճնշումները չտանելով:

«Ասփված պիտի մեզ հետ լիներ, այլապես այն հսկա պատրաստությամբ փաճկաադրբեջանական զորքերն ինչպե՞ս պարտվեցին»,— իմ հարցումին պատասխանեց Կոռնիձորի շքանշանակիր մարտիկը»:

Վազգեն Միրզաբեկյան–Վանբեկ

ՀԱՅՐԵՆԻ ԳՈՐԻՍԵՑԻՆԵՐԻ ՀՈՒՇԵՐԸ[43]

ԹԻՎ 1
ԱՐՄԵՆԱԿ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ՀՈՒՇԵՐԸ[44]

Օսմանյան զորքերը 1918 թ. վերջերին հեռացան Անդրկովկասից: Մուսաֆաթները, հույսները դնելով Բաքվում մնացած թուրք փաշաների ու մեծաքանակ ասկյարների վրա, հարձակվեցին մեր Զանգեզուրի վրա՝ նպատակ ունենալով գրավել Գորիս քաղաքը, որպեսզի Զանգեզուրը կտրեն Հայաստանից, անցնեն Դարալագյազ, Նախիջևան ու միանան իրենց եղբայր Սուլթանական Թուրքիային:

Զանգեզուրցիները կազմակերպում են աշխարհազոր ջոկատներ: Ես մեր գյուղի զորախմբով գնացի Գորիս քաղաք: Երբ հասա Գորիսի զինվորական շենքի բակը, Հայ կառավարության ներկայացուցիչ Խաչա-

---

[43] Ներկայացվող հուշերը պահվում են Սերո Խանզադյանի ֆոնդում (ՀԱԱ, ֆ. 798), որոնց մասին նա գրառել է. «Տակավին 1929 թ. ես սկսել եմ հավաքել մեր ժողովրդի պատմության նշխարներ: Ոչնչացումից փրկել եմ տասնյակ հին ձեռագրեր ու դրանք հանձնել Մատենադարանին, հաճախ ոչ իմ անունով, այլ այն մարդու, որ ձեռագիրը փրկել ու տվել է ինձ: Ես ունեմ նաև մեր պատմության ամենից ողբերգական՝ 20–րդ դարի սկզբին կատարված ցեղասպանության մասին ականատեսների հուշագրություններ: Դրանք պատմական արժեքավոր տեղեկություններ են: Դրանցից մի քանիսը ես հրապարակել եմ: Մեծ մասը տակավին անտիպ է»:

[44] «1960–ական թթ. ինձ մոտ՝ մեր տուն եկավ Գորիսի շրջանի Յայջի (այժմ՝ Հարժիս) գյուղի զավակ, Երևանում ապրող մանկավարժ Հակոբ Հակոբյանը: Նա ինձ հանձնեց իր հոր՝ Հարժիս (Յայջի) գյուղի հրամանատար Արմենակ Գրիգորյանի հուշերի տետրը: Եվ ահա ես դրանից մի պատառիկ հրապարակում եմ: Դրանք շատ կարևոր տեղեկություններ են: Արմենակ Գրիգորյանը ծնվել է 1883 թ. Շուշի քաղաքում: Հայրը՝ դերձակ Ակուն (Հակոբը), 19–րդ դարի վերջերին Շուշիից վերաբնակվել է Յայջի գյուղում, ապրել այնտեղ և զբաղվել դերձակությամբ: Արմենակը 1908 թ. կանչվել է ռուսական բանակ, սովորել է Պետրոգրադի սպայական վարժարանում, ստացել սպայի կոչում: Մասնակցել է Առաջին աշխարհամարտին, Սարդարապատի ճակատամարտին»: Ս. Խանզադյան:

տուր Մալինցյանը (Մալինցովը) հարցրեց. «Ո՞վ է ձեր ղեկավարը»:

Ես դուրս եկա շարքից, ասացի. «Ես եմ Յայջի գյուղի ջոկատի հրամանատարը, պարո՛ն»:

Խ. Մալինցյանը բարկացավ ինձ վրա. «Ինչո՞ւ ես ուշացել»:

Մեր Մեսրոպ Խաչյանը մոտեցավ պարոն Մալինցյանին ու ասաց. «Մի՛ բարկանա, պարո՛ն պարուչիկ: Մեր գյուղը փոքր գյուղ է, բայց ահա մեր գյուղից ավելի շատ մարդ է եկել պատերազմի, քան ամենամեծ գյուղերից: Դա Արմենակ Գրիգորյանի շնորհիվ է, նրա շնորհքը: Հազիվ կազմակերպեցինք զորախումբը: Մերոնցից մեկը տրեխ չուներ, մյուսի շորերը կարակատելի էր, երրորդի տանը հաց չի եղել»:

Մալինցյանը ձեռքը մեկնեց Գորիսի վերևի սարին. «Տեսնո՞ւմ եք: Սարում անգղների երամի նման թառել է թուրքի զորքը: Թուրքերը ուլտիմատում են տվել մեզ՝ Գորիսը իրենց հանձնելու պահանջով: Երկու օր ժամկետ են տվել, սպասում են: Վաղը առավոտյան պիտի պատասխան տանք»:

Հաջորդ օրը՝ լուսաբացին, մենք զանգեզուրցիներս հարձակվեցինք մուսաֆաթականների վրա: Առաջնային դիրքերում էինք մենք՝ յայջեցիներս՝ իմ Արմենակ Գրիգորյանիս գլխավորությամբ:

Մեր առաջին գրոհից թուրքերը մի փոքր ետ նահանջեցին ու ամրացան նոր դիրքերում: Գորիսից վերև մեզ է հասնում թնդանոթաձիգ Թոփչի Սիմոնը: Նա՝ կապիտան Սիմոն Մելիք–Հարությունյանը Վայոց ձորի Սերս գյուղից էր:

Շատ գովելի է Թոփչի Սիմոնը: Նա ոչնչացրեց թուրքերի բոլոր գնդացրային կետերը, որից հետո մենք հարմար դիրքեր գրավեցինք ու առաջ անցանք: Մենք հաղթեցինք, թուրքերը փախան:

ՀԱԱ, ֆ. 798, ց. 1, գ. 1220, թթ. 104–116, 117–127

ԹԻՎ 2
ԱՐՇԱԿ ՊԵՏՐՈՍԻ ՋԱՔԱՐՅԱՆԻ ՀՈՒՇԵՐԸ[45]

«Թշնամին, ստանալով օժանդակ ուժեր, սպառնում է Խնածախ և Խոզնավար գյուղերին: Ներսեսը գյուղի ազգաբնակչությանը տեղափոխեց դեպի սարերը և գյուղի կտրիճների հետ համառ կռվի բռնվեց թշնամու հետ: «Մինչև արյան վերջին կաթիլը չթողնել դիրքերը»:

Արշակի մայրը՝ Հեղինեն, համբուրեց ձիու ճակատը, տրորեց աչքերը և հեծավ ձիուն... Կեսարին էլ ասաց. «Ամի՛, դու էստեղ սպասի, ես գնում եմ դիրքերը, կռվողների մոտ...»:

Հեղինեն բարձեց իր սիրուն ձին և իրիկնադեմին ճանապարհ ընկավ դեպի հարևան Քարաշեն գյուղը՝ երեխաներին այնտեղ թողնելու համար, որ ինքը վերադառնա կռվի ճակատ: Ետդարձի ճանապարհին հանդիպում է 25–ամյա մի համագյուղացի երիտասարդի՝ զինասարքով: Ճանապարհին պատահեց խմբապետ Մալինցովը[46] և ճչաց. «Կթողնե՞ս, հա՞, ֆռոնտը: Ես քու...»: Եվ գնդակահարեց նրան:

Խ. Մալինցովը իր մաուզերի գնդակներով սպանում էր այն անձնավորություններին, որոնք, թողած ֆռոնտը, ճանապարհ էին բաց անում թշնամու առաջ: **Եվ իսկապես նրա՝ Մալինցյանի զորությունն էր, որ շուտով թշնամին ետ շպրտվեց և Խնածախ գյուղի բնակչությունը նորից իրեն տեղը վերադարձավ»:**

–

ՀԱԱ, ֆ. 798, ց. 1, գ. 1220, թթ. 38–49, 94–98

---

[45] Զոհվել է Հայրենական մեծ պատերազմում 1942 թ.:

[46] «Պարուչիկ Խաչատուր Մալինցյան, գորիսեցի է, հորս՝ Նիկոլայի մոր՝ Բողճու քրոջ տղան: 1918–1920 թթ. Զանգեզուրի ինքնապաշտպանական կռիվերի հերոս: Պարուչիկ էր, հայտնի էր՝ «Պորուչիկ Խաչատուր» անունով»: Ս. Խանզադյան

ՑՈՒՑՄՈՒՆՔՆԵՐ Խ. ՄԱԼԻՆՑՅԱՆԻ ՄԱՍԻՆ

ԹԻՎ 1
ԱԹԱ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ՑՈՒՑՄՈՒՆՔԸ[47]
(4.04.1932 թ.)

Գորիս քաղաքի բնակիչ Խաչատուր Մալինցյանի անձի մասին ինձ հայտնի է 1918 թվից: Նա Գորիս եկավ Շուշվա գնդի հետ, որի հրամանատարն էր ոմն գնդապետ Մ. Մելիք–Շահնազարյանը: Իսկ Խաչատուր Մալինցյանի պաշտոնը, որը այդ ժամանակ ցարական պարուչիկի աստիճանով էր, ինձ հայտնի չէր:

Շուշվա գունդը նպատակ ուներ այնուհետև տեղափոխվել Ղարաբաղի կողմերը, բայց քանի որ Գորիսից Շուշի ճանապարհը անցնում էր քրդաբնակ շրջանով և քանի որ հայերը թուրքերի հետ թշնամություն ունեին, այդտեղի թուրքերը գնդին չթողեցին անցնի. այսպիսով՝ Շուշվա գունդը տեղում կազմացրվեց:

Դրանից հետո Գորիսի Ազգային խորհրդի կողմից Խաչատուր Մալինցյանը նշանակվեց ամբողջ Զանգեզուրի զորքերի հրամանատար և նրա վրա պարտականություն դրվեց տեղի ուժերից կազմել տեղական մարտական ջոկատներ, քանզի այդ ժամանակ Գորիսում չկային բանակային ջոկատներ:

Տեղի դաշնակցական ուժերի կազմավորման պահին ադրբեջանական մուսաֆաթիստները բանակցություններ էին վարում: Նրանք վերջնաժամկետ էին տվել Զանգեզուրի դաշնակցական իշխանություններին, որպեսզի Զանգեզուրը հանձնեն Ադրբեջանին: Բայց երբ Զանգեզուրի դաշնակցական իշխանությունները մերժողական պատասխան տվեցին, ամեն օր սպասում էին մուսաֆաթիստների կողմից հարձակման: Այսպիսով՝ **Ազգային ժողովի հանձնարարությամբ Մալինցյանը ստանձնեց տեղական ջոկատների կազմավորման գործը:**

Ադրբեջանական զորքերի Զանգեզուրի վրա հարձակման ժամանակ **Խաչատուր Մալինցյանը ակտիվ մասնակցություն ունեցավ Գորիսի**

[47] Աթա Հարությունի Գրիգորյան, Տեղ գյուղից, ծնվ՝ 1885 թ., կոմկուսի անդամ՝ 1921 թ.:

շրջանում մուսաֆաթական զորքերի դեմ կռիվներին: Այդ ժամանակ Խաչատուր Մալինցյանը համարվում էր ամենից ակտիվ մարտիկը՝ վայելելով դաշնակների վստահությունը: Նա ազգամիջյան պատերազմի ընթացքում պտտում էր Տեղ, Խանածախ, Բայանդուր, Խոզնավար, Արավուս ու այլ գյուղերում և տեղերում ծեծում էր, գնդկահարում գյուղացիներին և այլն:

Լինելով Տեղ գյուղի ճակատի հրամանատարը, Շեգունցի ալրաղացի մոտ, հանդիպելով 18–ամյա գյուղացու՝ Իսիևին գնդակահարել էր՝ պատճառաբանելով, որ նա փախել է ճակատից:

Նույն օրը մահացու կերպով ծեծել է գյուղական ավագի (տանուտերի) օգնական Ալում Ղազարյանին, որը հաջորդ օրը մահացավ, խիստ ծեծից, Խանածախ գյուղում գնդակահարեց մի գյուղացու: Այդ պատժամիջոցները արվում էին նրա համար, որպեսզի դաշնակների մոտ հերոս երևա:

Արդյունքում մուսաֆաթական զորքերի դեմ տարած հաղթանակից հետո, Խաչատուր Մալինցյանը արժանանում է դաշնակցական գնդապետի աստիճանի:

Խաչատուր Մալինցյանը դաշնակ եղե՞լ է, թե՞ ոչ՝ չգիտեմ: Կարմիրների դեմ կռիվներին չի մասնակցել, քանի որ Զանգեզուրի վրա Կարմիր բանակի հարձակման ժամանակ Խաչատուր Մալինցյանը արտաքսված էր Երևան, բայց չգիտեմ՝ ինչ պատճառով:

ՀԱԱ, ֆ. 1191, ց. 16 , գ. 1923, թթ. 28–29

ԹԻՎ 2
ԱՇՈՏ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ՑՈՒՑՄՈՒՆՔԸ[48]
(20.03.1932 թ.)

1918 թ. ազգային կռիվների ժամանակ թուրքական զորքը վերցրել էր Գորիսի շրջանի Խոզնավար գյուղը: Նախապատրաստվում էին վերցնելու նաև Խանածախը, որի պատճառով այդ երկու գյուղերի ազգաբնակչությունը թափվել էր մեր Քարաշեն գյուղը և ցանկանում էր առաջ շարժվել դեպի Գորիսի կողմը:

Խ. Մալինցյանը որպես այդ ժամանակաշրջանի կոմենդանտ[49], եկավ մեր գյուղը, տեսնելով Խանածախ և Խոզնավար գյուղերի ազգաբնակչության փախուստը, մեր գյուղի վաշտապետի միջոցով հրամայեց, որ չշարժվեն և մնան Քարաշեն գյուղում: Սակայն, երեխաների լաց ու կոծի ձայնը չընդունեց այդ հրամանը: Դրա համար ինքը՝ Խ. Մալինցովը ձին նստած գյուղի գլխավոր փողոցից գնաց և գերեզմանատան գլխով գնացող ճանապարհի մեջ սեփական ձեռքով խփեց երկու տղամարդու:

Կանայք հավաքվեցին դիակների վրա, վերցրին դիակները և հետ դառան Քարաշեն գյուղը: Այդ խփվածների անունները չեմ հիշում:

Այդ երկու ընկերների սպանության ժամանակ ես կանգնած էի մի փողոցում և նայում էի դեպի պատահարի վայրը:

Այնուհետև Խ. Մալինցովի միջոցով վաշտապետը ծեծեց Քարաշենի գյուղացի Գրիգոր Հարությունյանին՝ դիրքերը ուշ գնալու համար:

Խ. Մալինցովը մեր գյուղից վերցրեց 25 հոգի և գնաց Խանածախի ճակատը՝ թուրքերի դեմ կռվելու:

Խոզնավարի կողմում թուրքերին հաղթելուց հետո վաշտապետը հրամայեց գյուղի ազգաբնակչությանը գյուղի տակ Շուշիի ճանապարհում դիմավորել Խ. Մալինցյանին. ես էլ էի մասնակցում՝ մյուս երեխաների շարքում:

Խ. Մալինցյանը բարձրացավ երկու գյուղացու թևերի վրա, և այդ

---

[48] Աշոտ (Արշակ) Հովսեփի Մանուկյան, ծնվ. 1910 թ., Քարաշենի (Դաշքենդ) գյուղացի: Գրված է հայերեն՝ անձամբ վկայի ձեռքով:

[49] Զինվորական պարետ:

գյուղացիները սկսեցին Խ. Մալինցյանին պար ածել իրենց թևերի վրա՝ նրան հայտարարելով հայ ազգի «փրկիչ» հերոս:

Միմիայն այսքանն եմ հիշում:

ՀԱԱ, ֆ. 1191, ց. 16, գ. 1923, թ. 51

ԹԻՎ 3
ԵՂՈ ՂԱԶԱՐՅԱՆԻ ՑՈՒՑՄՈՒՆՔԸ [50]
(29.03.1932 թ. և 27.07.1965 թ.)

Ես Խաչատուր Մալինցյանին ճանաչում եմ որպես համագյուղացի: Նա ցարական բանակից վերադարձավ ֆելդֆեբելի աստիճանով, եղել էր Կրասնավոդսկ քաղաքում (դա 1911 թ. էր: Ես Կրասնավոդսկում աշխատում էի իմ բարեկամիս մոտ՝ որպես կարող բանվոր):

Խաչատուր Մալինցյանը Իմպերիալիստական պատերազմի ակտիվ մասնակից էր, ցարական աֆիցեր:

1918–1919 թթ. Խ. Մալինցյանը գտնվում էր Զանգեզուրում և համարվում էր ակտիվ կռվող մուսաֆաթ զորքերի դեմ: Նա կանոնավոր բանակ չի ունեցել, այլ կազմակերպում էր տեղի բնակչությանը:

Մուսաֆաթիստների ու հայերի միջև քաղաքացիական պատերազմում նա եղել է գնդապետ և աչքի ընկնող ղեկավարներից մեկը:

Խաչատուր Մալինցյանը շատ խիստ մարդ էր, մանավանդ այն անձանց նկատմամբ, որոնք խուսափում էին պատերազմելուց: Այդպիսիններին ենթարկում էր ծեծի:

Խաչատուր Մալինցյանի գործունեությունը նմանվում էր Անդրանիկ զորավարի գործունեությանը, միայն փոքր ծավալներով, այսինքն՝ նա տարել է ազգային–ինքնապաշտպանական պայքար մուսաֆաթիստների դեմ պատերազմելով:

Միայն թե նա, ինչպես ասել էի, ծեծի էր ենթարկում այն մարդկանց, որոնք չէին ցանկանում դուրս գալ կռիվ կամ որևիցէ օգնություն ցուցաբերել:

1920 թ.[51] նրան ուղարկեցին Երևան, հրամկազմի առանձին անդամների հետ վեճի համար և որից հետո էմիգրացվեց Իրան:

Հարց – Խ. Մալինցյանը ո՞ւմ հետ էր մտերիմ, որոնք հիմա ապրում են մեր Միությունում:

Պատ. – Ասատուր Խոսունց՝ ապրում է Միջին Ասիայում, Արտեմ

---

[50] Եղո Հայրապետի Ղազարյան, 1892 թ. ծնված, Գորիսի գյուղացի, կոմկուսի անդամ:

[51] Սխալմամբ գրված է 1919 թ.: Ճիշտ չէ, որ վտարանդվել է Իրան:

Խանզադյանը[52], Վանո Խանզադյանը[53] նույնպես և ուրիշ ծնունդով գորիսցիներ, Խաչատուր Մալինցյանի հետ հանդիսանում էին ակտիվ մասնակիցներ:

Խաչատուր Մալինցյանի ազգական Արմենակ Մալինցյանը 1930 թ. բանդ. շարժման ժամանակ ձերբակալվել է ինչ–որ պատճառով:

ՀԱԱ, ֆ. 1191, ց. 16, գ. 1923, թթ. 46–47, 159–161

---

[52] Արտեմ Խանզադյան (մահացել է 1983 թ.): Վաղ հասակից անդամագրվել է ՀՅԴ–ին: 1918–21 թթ., որպես Գորիսի աշխարհազորային դասակներից մեկի հրամանատար, մասնակցել է Սյունիքի ինքնապաշտպանության կռիվներին: Լեռնահայաստանի անկումից հետո անցել է Իրան, բայց կարճ ժամանակ անց՝ 1922 թ., վերադարձել է հայրենիք և ենթարկվել հալածանքների. մի քանի անգամ բանտարկվել է ու աքսորվել: 1933 թ., ստիպված թողնելով ընտանիքը և հարազատներին, Միջին Ասիայի վրայով անցել է Իրան: Ա. Զանգեզուրցի ծածկանունով բազմաթիվ հուշագրություններ ու հոդվածներ է տպել «Ալիք» օրաթերթում: Իսկ «Հայրենիք» ամսագրում (1968 թ., աշուն) տպագրված նրա «Դաշնակցության մուտքն ու աշխատանքը Զանգեզուրում», հոդվածում արժեքավոր տեղեկություններ կան Զանգեզուրի դարասկզբի պատմության վերաբերյալ: 1960–ական թվականներից նամակագրություն է ունեցել իր ազգական Սերո Խանզադյանի հետ, որոնց մի մասը պահվում է Սերո խանզադյանի ֆոնդում. ՀԱԱ, ֆ. 798:

[53] Վանո Պետրոսի Խանզադյան. ծնվել է 1901 թ. Գորիսում: 17 տարեկանում անդամագրվել է ՀՅԴ–ին և ակտիվորեն մասնակցել Զանգեզուրի հերոսամարտերին՝ Անդրանկի զորաջոկատի կազմում, ապա հորեղբոր՝ Արտեմի խմբի հետ մասնակցել է 1919 թ. նոյեմբերյան հերոսամարտին: Այնուհետև մտել է Նժդեհի զորաջոկատի մեջ: Լեռնահայաստանի անկումից հետո անցել է Իրան: 1922 թ. վերադառնալով հայրենիք՝ ենթարկվում է հալածանքների. մի քանի անգամ բանտարկվում է և աքսորվում: Հետագա հետապնդումներից ազատվելու համար 1933 թ. Միջին Ասիայի վրայով անցել է Իրան: Մահացել է 1962 թ.:

ԹԻՎ 4
ԲԱԳՐԱՏ ՋԱՎԱՀԻՐՅԱՆԻ ՑՈՒՑՄՈՒՆՔԸ[54]
(1932 թ. և 1965 թ.)

Քննությանը հետաքրքրող Խ. Մալինցյանին ես ճանաչում եմ 1918–1919 թվականներից, հարաբերություններս նրա հետ նորմալ են եղել: Նրան գիտեմ որպես այն ժամանակվա Զանգեզուրի պաշտպանության ղեկավարի:

1918 թ. Զանգեզուրը կտրված էր և համարյա պաշարված մուսաֆաթիստների կողմից: Զանգեզուրի գյուղերը՝ հատկապես Խոզնավար, Տեղ, Կոռնիձոր, Խանածախ, մշտապես հարձակումների էին ենթարկվում մուսաֆաթ զորքերի կողմից:

Այդ ժամանակներում Զանգեզուրում էր գտնվում Անդրանիկ զորավարը իր զորքերով: Բայց հետո նա թողեց եկավ Երևան: Այդ պատճառով Զանգեզուրի պաշտպանության ռազմական ղեկավարը դարձավ Խ. Մալինցյանը, որը դեռ ցարիզմի ժամանակ օֆիցեր էր:

Կանոնավոր զորք չուներ, եթե չհաշվենք պահակային գումարտակը՝ մոտ 300 հոգուց բաղկացած և մի հրետանային միավորում:

Խ. Մալինցյանը հենվում էր տեղի բնակչության վրա. զորակոչի էր ենթարկում այն անձանց, ովքեր ի վիճակի էին զենք գործածելու: Եվ այսպես պաշտպանում էր մեր գյուղերը մուսաֆաթիստների հարձակումներից:

Պիտի ասեմ, որ Խ. Մալինցյանը շատ մեծ աշխատանք տարավ այդ գործում, և նրա շնորհիվ Զանգեզուրի մի շարք գյուղեր չընկան մուսաֆաթիստների ձեռքը: Նրա կողմից վարած մարտերը մուսաֆաթիստների դեմ վերջանում էին հաղթանակով:

Ես այդ բոլորը գիտեմ, քանի որ նախ այդ թվերին այնտեղ եմ բնակվել և մյուս կողմից՝ մի քանի օր մասնակցել եմ մուսաֆաթիստների դեմ կռիվներին, մասնավորապես Խոզնավար գյուղի շրջանում:

Հարձակվեցինք և գրավեցինք այդ գյուղին մոտակա ադրբեջանական գյուղերը և եղած անասունները վերցրինք:

---

[54] Բագրատ Պետրոսի Ջավահիրյան, ծնվ՝ 1896 թ., երկար ժամանակ ավագ տնտեսագետ է աշխատել ֆինմինիստրությունում:

Ես գտնում եմ, որ այն ժամանակ Խ. Մալինցյանի կողմից այդպիսի գործողությունները ճիշտ չէր կազմակերպված, քանի որ հարձակման ենթարկված գյուղերում մուսաֆաթիստական զորքեր չկային, այլ բնակվում էին գյուղերի համարյա անզեն բնակչությունը:

Խ. Մալինցյանը իր գործողություններով հետապնդում էր Զանգեզուրի պաշտպանությունը մուսաֆաթիստական զորքերի հարձակումներից և դա նրան հաջողվեց:

Միաժամանակ Խ. Մալինցյանը շատ պահանջկոտ և խիստ էր այն անձանց նկատմամբ, որոնք խուսափում էին ռազմաճակատ գնալ: Այդպիսի մարդկանց ենթարկում էր ծեծի և նույնիսկ՝ սպանում:

Այսպես, լսելով իմացել եմ, որ Խ. Մալինցյանը ծեծել է Տեղ գյուղի բնակիչ դարբին Դանիելին, իբր թե այն բանի համար, որ հրաժարվել է ռազմաճակատ գնալուց:

Մի ուրիշ դեպքի ես ինքս ներկա եմ եղել: Խաչատուր Մալինցյանի կարգադրությամբ ծեծի ենթարկվեց Խանաձախ գյուղացի Մինաս Խերունցը այն բանի համար, որ նա յուրացրել էր ադրբեջանական գյուղերից վերցրած, այսինքն՝ թալանված ոչխարներից 30 գլուխ ոչխար:

Այն ժամանակ լսել էի, որ Խ. Մալինցյանը անգամ սպանել էր Տեղ գյուղից մի գյուղացու, այն բանի համար, որ նա մարտի ժամանակ դիմել էր փախուստի:

Որևէ հակասովետական արարք նրա կողմից չի նկատվել, քանի որ նրա գործունեությունը եղել է մինչև սովետական կարգերի հաստատվելը Զանգեզուրում:

ՀԱԱ, ֆ. 1191, ց. 16, գ, 1923, թթ. 154–158

ԹԻՎ 5
ՍԱՄՎԵԼ ՄԿՐՏՉՅԱՆԻ ՑՈՒՑՄՈՒՆՔԸ[55]
(1932 թ., 1965 թ.)

Խաչատուր Մալինցյանին գիտեմ 1918 թ., որպես դաշ. բանակի պորուչիկ, որը 1918 թ. նշանակվեց Զանգեզուրի գավառի զինուժերի ղեկավար:

Մինչև 1929 թ. ես բնակվել եմ Գորիսում, մասնակցել եմ 1918–1919 թթ. Զանգեզուրի ինքնապաշտպանական կռիվներին, երբ Զանգեզուրի ինքնապաշտպանության գործը հանձնված էր Խ. Մալինցյանին:

Նա եղել է ցարական բանակի սպա, և երբ Զանգեզուրում էր, Ազգային խորհուրդը նրան տվեց գնդապետի կոչում և նշանակեց Զանգեզուրի զինված ուժերի հրամանատար:

Փաստորեն Խ. Մալինցյանը փոխարինեց Անդրանիկին, երբ վերջինս Զանգեզուրից գնաց Երևան:

Ուրեմն Խ. Մալինցյանը 1918–1919 թթ. Զանգեզուրի որոշ գյուղերի շրջանում տարել է ազգային ինքնապաշտպանական մարտեր և այդ գործում մեծ հաջողություններ ունեցել: Նա մուսաֆաթիստներին թույլ չտվեց, որ նվաճեն հայկական գյուղերը:

Միաժամանակ պիտի ասեմ, որ նա իր բնավորությամբ շատ կոպիտ և խիստ մարդ էր այն մարդկանց հանդեպ, ովքեր չէին ուզում դուրս գալ պատերազմելու մուսաֆաթիստների դեմ և այդպիսիններին ենթարկում էր ծեծի կամ գնդակահարության:

Խ. Մալինցյանը կազմակերպված զինված միավորումներ չուներ: Եվ երբ հարկ էր լինում դուրս գալու մուսաֆաթիստական զորքերի դեմ, մեր գյուղերի գյուղացիներին էր հանում կռվի: Հենց այդ ժամանակ էլ, եթե որևիցե մեկը հրաժարվում էր կամ չէր ուզում օգնել, նրանց ենթարկում էր պատժի:

Ես ականատես եմ եղել, թե ինչպես ծեծի ենթարկեց Տեղի գյուղացի դարբին Դանիելին այն բանի համար, որ նա ինչ–որ չի ուզեցել հրացանը նորոգել:

Նա քաղաքացիական պատերազմներին Զանգեզուրում չի եղել և չի

---

[55] Սամվել Հովհաննեսի Մկրտչյան, ծնվ.՝ 1898 թ., կոմկուսի անդամ՝ 1921 թ.:

մասնակցել: Այդ ժամանակ եղել են Նժդեհը, Դրոն:

Հետագայում դաշնակները նրան մեղադրեցին այն բանում, որ ուզում էր իշխանությունը վերցնել իր ձեռքը և դրա համար նրան Զանգեզուրից հետ կանչեցին և նա այլևս չվերադարձավ:

Նա, լինելով դաշ. բանակի գնդապետ, ձգտում էր իր ձեռքը վերցնել Զանգեզուրի գավառի ղեկավարումը, բազմիցս վեճի մեջ մտնելով առանձին ղեկավարների հետ, որի արդյունքում և կարերիզմի համար հանվում է պաշտոնից և ուղարկվում է Երևան՝ պառլամենտի տրամադրության տակ:

Իսկ ինչ վերաբերում է տարածված լուրերին, թե իբր նա ձերբակալվել է որպես կոմունիստ և Սովետական իշխանության համակիր, դա բացահայտ սուտ է:

Ինչպես Մայիսյան ապստամբության, այնպես էլ դաշավանտյուրայի[56] ժամանակ Խ. Մալինցյանը Զանգեզուրում չի եղել և որքան գիտեմ այդ ժամանակների իրադարձություններին չի մասնակցել:

ՀԱԱ, ֆ. 1191, ց. 16, թթ. 40–41,162–164

[56] Նկատի ունի 1921 թ. Փետրվարյան ապստամբությունը:

Խ. ՄԱԼԻՆՑՅԱՆԻ ՑՈՒՑՄՈՒՆՔՆԵՐԸ

ԹԻՎ 1
(1932 թ. մարտ–ապրիլ)

Վաղը թող ստեղծվի Հայ իրականություն.
ես մեծ ուրախությամբ կպատասխանեմ՝
մեղավորների նստարանին նստած:

Խ. Մալինցյան

1. Ծագումով Զանգեզուրի շրջանի Գորիս գյուղից եմ՝ գյուղացու ընտանիքից: Ծնողներս զբաղվում էին անասնապահությամբ, եղբայրներս՝ մասամբ պատահական զբաղմունքով, իսկ մասամբ էլ՝ տնային տնտեսությամբ:

Ես և՛ մինչ ուսումս, և՛ ուսմանս ընթացքում մեր տավարն ու հորթերն էի արածեցնում:

Ավարտել եմ Գորիսի հայ–ռուսական երկդասյա դպրոցը: Ծնողներս ուզում էին ինձ ուսման տալ, սակայն 1905 թ. ես ծլկեցի Բաքու, ուր հասա մայիս ամսին և բնակություն հաստատեցի Սարուխանովի ձեռնարկություններում, ազգականիս՝ Վաղարշակ Մալինցյանի մոտ:

Ընդունվեցի աշխատանքի Սարուխանովի մոտ՝ որպես հորատման բանվոր՝ մինչև 1906 թ. հուլիս ամիսը: Դա կարող են հաստատել Սարուխանովի ձեռնարկությանը հարևան Միրզոևի 42–րդ տեղամասի բանվորները՝ ընկերներ Զիլֆուղար Մկրտչյանը և Բախշի Հովհաննիսյանը:

Մասնակցել եմ 1905 և 1906 թվականների խոշոր գործադուլներին:

Սարուխանովի տեղամասում ծանոթացա Արսեն Բաբայանի հետ և հետագայում ընդունվեցի ՌՍԴ/մ/Կ շարքերը[57]:

---

[57] Հարցաքննության ընթացքում իր քաղաքական համոզմունքների և դրանց էվոլյուցիայի մասին հարցումին Խ. Մալինցյանը պատասխանում է. «1905 թ. Բաքվում ես մտա ՌՍԴԿ–մենշևիկյան կուսակցության մեջ և մնացի մինչև 1914 թ., այսինքն՝ 9 տարի: Փաստորեն ես դուրս չեմ եկել, բայց կազմակերպչական կապը կուսակցության հետ ավտոմատ կերպով խզվել է 1914 թ., երբ ես կանչվեցի ռազմաճակատ, սկզբում՝ ունտեր–աֆիցեր, իսկ 1915 թ. դեկտեմբերից՝ պրապորշչիկի չինով: 1905–1914 թթ. ընթացքում մասնակցել եմ ժողովների, խմբակների, գործադուլների նավթարդյունահանող Ղուկասովի մոտ:

1907 թ. տեղափոխվեցի աշխատանքի Բալախանո–Սաբունչիի հիվանդանոցը՝ նավթարդյունաբերողների խորհուրդների համագումար՝ գրասենյակային պահակ, իսկ հետագայում՝ գրասենյակային աշխատող մինչև 1909 թ. հոկտեմբերը:

Այստեղ կուսակցության մեջ էին նաև անդամներ՝ դոկտոր Օկինշևիչը, Մարիա Սոլոմոնովնան և Միսակ Իշխանյանը՝ ներկայիս Սառնարանների տնօրենը:

1909 թ. զորակոչվեցի բանակ և ծառայեցի Վարշավայում, սկզբում՝ 63–րդ հետևակային գնդում, իսկ հետագայում՝ հեծելազորում: Զորացրվեցի 1913 թվին՝ ավագ ենթասպայի զինվորական աստիճանով:

2. Բաքու վերադառնալով ընդունվեցի Հասանկուլիում գտնվող «Կովկաս–Մերկուրի» նավագնացային ընկերություն՝ որպես գրասենյակային աշխատող մինչ 1914 թ. հունիսի 1–ը:

Պատերազմի ժամանակ զորակոչվելով բանակ՝ եղել եմ գերմանական, հետագայում՝ ավստրիական ռազմաճակատներում: Մի քանի անգամ վիրավորվելուց և ապաքինվելուց հետո եկա Կովկասյան ճակատ և ըստ զորակոչի մտա 19–րդ Թուրքեստանյան գունդ, նույնպես որպես ենթասպա, մինչև 1915 թ. սեպտեմբերի 1–ը: Մասնակցեցի Բաթումի շրջանի մարտերին, Զագոսից[58], Աճարիսծղալիից[59], Քեսասապելից, Մարադիդից, Զալոնոդաղից, Մուրղուլուից[60], Կուպինատից և Արխավ[61] գետի Պադաջուրի լեռնանցքից թուրքերի դուրս քշելուն[62]:

1908 թ. վերջին մեկ ամիս նստել եմ» (ՀԱԱ, ֆ. 1191, ց. 16, գ. 1923):

[58] Զագոս, Զակոց. գյուղ Սպերի գավառակում՝ Ճորոխ գետից 4,5 կմ հարավ՝ նրա ձախակողմյան վտակի ափին:

[59] Աճարիսծղալի. Ճորոխ գետի աջ կողմի վտակը: Հնում՝ Նոստե:

[60] Մուրղուլ. գյուղ Արդվինից 28 կմ հյուսիս–արևմուտք: Նույն անունն ունի նաև Ճորոխի ձախակողմյան վտակներից մեկը:

[61] Արխավ. գետ Պոնտոսում, Սև ծովն է թափվում Բաթումից 42 կմ հարավ–արևմուտք, համանուն գյուղի մոտ:

[62] Այս շրջանի կռիվներին իր մասնակցության մասին Խ. Մալինցյանը այլևս չի խոսում: Միայն Սևանի «Հայծուկ» տրեստում աշխատող հունահպատակ Պյոտր Կարոպուլոն է ցուցմունքներում վերապատմում որոշ դրվագներ. «Նա միշտ ընդգծում էր, որ նախկին գնդապետ է եղել և պատմում էր իր ռազմական սխրանքների մասին: Չնայած նաև հիմա է ցանկանում հրամանատարություն անել բոլոր ենթակա մարդկանց, ինչպես հին բանակում: Պատմելով թուրքական ճակատում, Տրապիզոնի ուղղությամբ իր

1915 թ. սեպտեմբերի 1–ին գործուղվեցի Թիֆլիս՝ պրապորշչիկների դպրոց ընդունվելու համար: Ընդունվեցի պրապորշչիկների 3–րդ Թիֆլիսյան դպրոցը և ավարտեցի 1915 թ. դեկտեմբերի 1–ին:

Նշանակվեցի Ալեքսանդրապոլի 223–րդ պահեստային հետևակային գումարտակը: Ալեքսանդրապոլ[63] հասա դեկտեմբերի 15–ին և ռազմաերթային վաշտի հետ ուղարկվեցի ռազմաճակատ՝ նշանակվելով Ելիզավետապոլյան 156–րդ հետևակային գունդ: Մասնակցեցի Էրզրումի, Աշկալայի[64], Մամախաթունի[65] և Կյուկյուրտլուի[66] գրավմանը:

1916 թ. Կովկասյան բանակի հրամանատարության կարգադրությամբ, ինչպես մյուս հայ սպաները ես էլ տեղափոխվեցի 1–ին Հայկական հրաձգային գունդ, ուր հասա ապրիլ ամսին[67]: Այդ գնդում մնացի մինչև 1917 թ. հեղափոխությունը՝ մասնակցելով Էրզրումի, Կյուկյուրտլիի գրավմանը, որտեղ հունիսի 26–ին ես վիրավորվեցի՝ մնալով մարտադաշտում: Հետագայում վերքերս բուժելու համար էվակուացվեցի Թիֆլիս:

ծառայության մասին՝ նա խոսելիս տաքանում էր տպավորություն թողնելու համար՝ պատմելով թուրքական բանակի թիկունքում հակահետախուզական աշխատանքի մասին: Հետ դառնալիս նա գերում և իր հետ բերում է մի գերմանացի սպայի, որի համար իրեն 3–ամսյա արձակուրդ են տալիս և վարձատրություն: Սկզբնական շրջանում, երբ Զանգեզուրի գլխավոր հրամանատարն էր, լավ հարաբերություններ ուներ դաշնակ. կառավարության հետ, որը իբր նրան հայտարարել է ազգային հերոս: Բայց երբ վիճել է Անդրանիկի հետ, իր հարաբերությունները կառավարության հետ փչացել են, և նա զինվորական հագուստով հեռացել է Բաթում, որտեղ անգլիացիներն էին: Բաթումում հագնելով գնդապետի համազգեստ՝ մեկնել է Կ. Պոլիս, որտեղից էլ մեկնել է Փարիզ և Նուբար փաշայի միջոցով ընդունվել ֆրանսիական բարձրագույն ռազմական ակադեմիա, որն ավարտելով վերադարձել է ՍՍՀՄ» (ՀԱԱ, ֆ. 1191, ց. 16, գ. 1923):

[63] Բնագրում գրված է Լենինական:

[64] Աշկալա. քաղաք Էրզրումից 40 կմ արևմուտք:

[65] Մամախաթուն. գյուղաքաղաք Էրզրում–Երզնկա ճանապարհին:

[66] Քյուքյուրթլու. գյուղ Էրզրումից 57 կմ արևմուտք: Կա նաև նույնանուն լեռ:

[67] Հարցաքննության ընթացքում նա նոր տեղեկություններ է հայտնում. «1916 թ. 156–րդ Ելիզավետպոլյան գնդից տեղափոխեցին 1–ին Հայկական հրաձգային գումարտակ: Այստեղ տիրում էր դաշնակցական միջավայրի վիճակ. սպաների մեծ մասը համոզված դաշնակցականներ էին: Այդ դրությունը ինձ այնքան էլ դուր չէր գալիս: Ես դաշնակներին բացասաբար էի վերաբերում: 1919–1920 թթ. իմ քաղաքական հայացքները հանգում էին նրան, որ ես համակրում էի բոլշևիզմին և սպասում էի սովիշխանության գալուն»:

Հայկական կորպուսի շտաբի կողմից 1917 թ. դեկտեմբերին նշանակվեցի Շուշվա գունդ՝ որպես կրտսեր սպա[68]:

Պատերազմը հայտարարելուց սկսած՝ մինչև 1918 թ. հունիսին Զանգեզուր հասնելս, ոչ մի քաղաքական կազմակերպության չեմ մասնակցել և հատկապես «դաշնակցության» մեջ չեմ եղել:

Շուշվա գնդի ռազմերթի ընթացքում մասնակցել եմ Շուշվա գնդի և Ա. Թարվերդովի հավաքական ջոկատի մղած Հաջի–Մուխանի կռիվներին[69]:

---

[68] Շուշվա գնդի կազմավորման և ոդիսականի պատմությունը մանրամասն նկարագրած Հովակ Ստեփանյանը գնդի սպաների կազմում հիշատակում է նաև Խաչատուր Մալինցյանին՝ որպես գնդացրային վաշտի պետ՝ տեղակալի սպայական աստիճանով («Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1934, նոյեմբեր, էջ 93):

[69] Հովակ Ստեփանյանը, որը մանրամասն պատմում է այդ կռիվների մասին, նշում է դրանց պատճառները. «1918 թ. մեր տված 5–6 տասնյակ սպանվածները և 1–2 տասնյակ վիրավորները չէին կարող մեզ թույլ տալ շարունակելու մեր ճանապարհը լուռ ու մունջ: Թուրքերը հրահանգ և օժանդակություն էին ստացել Գանձակից, շատ կարճ ճանապարհով նավակներով գիշեր ու ցերեկ շարունակ ռազմամթերք ու կռվողներ էին տեղափոխում Թոխլուջայից (Ճամբարակին մոտիկ թրքաբնակ գյուղ) ուղիղ Հաջի–Մուխան, որ շրջանի ամենամեծ գյուղն էր: Մարտի 13–ից մինչև մարտի 25–ը փակվեց Ելենովկայից դեպի Նոր–Բայազետ խճուղին: Մարտի 16–ից խզվեց և հեռագրական կապը: Մարտի 20–ին սկսվեցին արյունահեղ ընդհարումները: Երևանից օգնության էր եկել 2–րդ պարտիզանական գունդը գլխապետ Ա. Թարվերդյանի հրամանատարությամբ: Գունդը ուներ երկու դաշտային թնդանոթ: Վճռված էր պատժել ըմբոստ թուրքերին, որոնք շարունակում էին համառ կերպով փակ պահել պետական խճուղին և սպանել ու կողոպտել էին մեր մի քանի տասնյակ զինվորներին, որոնք Կովկասյան Սեյմի և ռազմական շտաբի կարգադրությամբ միանգամայն խաղաղ կերպով անցնում էին խճուղով: Թուրքերը հարյուրավոր զոհեր են տալիս, իսկ մեր կողմից ունենում ենք սպանված մի քանի հոգի և վիրավորներ՝ մեկ տասնյակ: Այդ շրջանի կռիվներում իր խիզախությամբ աչքի է ընկնում գորիսեցի սպա Խ. Մալինցյանը: Մութն ընկնելուն պես կենդանի մնացած թուրքերը փախչում են սարերը՝ Ուչ–թափալար, ուր շատերը ցրտից կոտորվում են, իսկ մնացորդները հասնում են Շարուր» («Հայրենիք», Բոստոն, 1934, դեկտ., էջ 91): Այդ կռիվների մասին է Գեղարքունիքի Լճաշենի գյուղացի Հովհաննես Ղարիբյանի ցուցմունքը. «Դաշնակցական կառավարության օրոք էր, կարծեմ 18 թե՝ 1919 թ. փետրվարի վերջերին և մարտի սկզբներին: Մեր գյուղ ժամանեց Շուշվա գունդը Խ. Մալինցյանի գլխավորությամբ: Գունդը մեզ մոտ կանգ առավ 3 օր: Երևանից հրետանի ստանալով՝ սկսեց ոչնչացնել Ն. Բայազետի մոտ գտնվող թուրքական գյուղերը՝ Բեղլու–Հուսեյին, Սարաչլու, Ռախմանքենդ, Էֆենդիքենդ, Հաջի–Մուխան, Աղզիբիր, Աղզալու, Այրիվանք: Այդ ժամանակ Խ. Մալինցյանը Օրդաքլու գյուղում ձերբակալեց նշյալ գյուղերից 4 թուրքերի, որոնք Ելենովկայից վերադառնում էին իրենց գյուղերը: Այդ ձերբակալված թուրքերից մեկին նա փոխանակեց մի հայ գերու հետ, իսկ մնացած 3–ին

Զանգեզուրում գտնվելս 1918 թ. հունիսից[70] մինչև 1920 թ. մայիսի 29–ի՝ մինչև դաշնակների կողմից իմ ձերբակալվելը

Շուշվա գնդի կազմացրման հետևանքով տեղը կազմակերպվեց միլիցիա[71], որի պետը նշանակվեցի ես, միաժամանակ, գյուղերում կազմա-

---

անձամբ իր սրով գլխատեց, Օրդաքլուից Նոր Բայազետի ուղղությամբ 3–րդ թե 4–րդ շրջադարձի վրա: Հարձակումը սկսվեց և շարունակվեց 3 օր, որի ընթացքում այդ բոլոր գյուղերը հողին հավասարեցրին: Այդ թուրք գյուղերից նախօրոք տարհանել էին բնակչության հավանաբար ոչ ավել 25 տոկոսին, մնացածները, քանի որ խիստ ցրտեր էին, բքից սառեցին և մահացան» (ՀԱԱ, ֆ. 1191, ց. 16, գ. 1923, թթ. 42–43):

[70] Մի այլ տեղ Խ. Մալինցյանն ավելի է ճշգրտում իր Վայոց ձորից Զանգեզուր հասնելու ամսաթիվը՝ 1918 թ. մայիսի 26–ը, բայց խուսափում է և չի պատմում Շուշվա գնդի Վայոց ձորից (Դարալագյազից) անցման դեպքերի մասին: Միայն Մկրտիչ Օսիպի Երիցյանն է (ծնված 1890 թ., Գորիս) վկայում. «Խ. Մալինցյանը իր ջոկատով Դարալագյազի ճամփին հանդիպելով թաթարական գյուղերի, կրակի տվեց մի քանի գյուղեր և թալանեց նրանց ունեցվածքը: Այսպիսով՝ նա՝ Խաչատուր Մալինցյանը, իր գազանային արարքներով հսկայական վնաս հասցրեց խաղաղ բնակչությանը» (ՀԱԱ, ֆ.1191, ց. 16, գ. 1923, թ. 30): Սակայն, ըստ Հովակ Ստեփանյանի և Գառնիկ Զաքարյանի հուշագրությունների, տեղի է ունեցել հակառակը՝ անկազմակերպ, տարերային կերպով դեպի տուն շտապող Շուշվա գնդի և Գանձակի գումարտակի զորախմբերը Վայոց ձորից դեպի Զանգեզուր անցնելու ժամանակ (1918 թ. մայիսից մինչև հուլիսի 1–ը) շրջակա թուրք գյուղերի կողմից ենթարկվել են հարձակումների ու թալանների և տվել են անհարկի զոհեր: Եվ միայն Վայոց ձորի հրամանատար Յապոնի (Հովհաննես Պարոնյանի) կողմից պատժիչ գործողություններից հետո թուրքերը դադարեցրել են Շուշվա գնդի զորախմբերի դեմ իրենց հրոսակային հարձակումները (տե՛ս Ա. Սիմոնյան, «Վայոց ձոր. 20–րդ դարի քառուղիներում», Երևան, 2011, էջ 188–211):

[71] Խ. Մալինցյանը դիտավորյալ կամ ակամա խառնում է դեպքերի հաջորդականությունը: Գավառներում միլիցիոն զորքի անվան տակ զինուժեր կազմավորվել էին ավելի վաղ: Դեռ ցարիզմի տապալմանը հետևած անիշխանության պայմաններում գավառների ազգաբնակչության անվտանգությունը ապահովելու նպատակով իշխանության նոր մարմինների՝ նահանգային գործադիր կոմիտեների թույլտվությամբ, 1917 թ. գարնանից սկսած, գավառներում սկսել էին կազմավորվել զինված ուժեր՝ որպես միլիցիոն զորքեր: Ընդ որում՝ դրանք սկզբում անվանապես միասնական էին, սակայն իրականում, ըստ ազգությունների, առանձին–առանձին էին գործում և շատ հաճախ՝ իրար դեմ: Հետագայում հայկական այս զինված միավորումները դարձան (ավելի շուտ՝ վերանվանվեցին) պարտիզանական գումարտակներ կամ գնդեր: Խ. Մալինցյանի՝ Զանգեզուրի միլիցիոն ուժերի հրամանատար, միլպետ, կոմիսար (այդ խառնակ իրադարձությունների արագընթաց փոփոխությունների ժամանակ միլպետը և գավառային կոմիսարի պաշտոնները կարծես նույնացվել էին) լինելու մասին իրենց ցուցմունքներում վկայում են վերջինիս գործով անցնող որոշ վկաներ: Ըստ Քրիստափոր Ասրամյանի՝ «Մալինցյանը,

վորվեցին ռազմականացած վաշտեր: Ղեկավարում էր Կենտրոնական ազգային խորհուրդը:

Շուտով ժամանեց գեներալ Անդրանիկը, որը եկավ և ղեկավարեց Վաղուդիի[72] և մի շարք այլ օպերացիաներ: Ես չմասնակցեցի դրանց,

---

նշանակված լինելով ուեզդնոյ նաչալնիկ, 1919 թ. մայիսին եկավ Բռնակոթ: Խ. Մալինցյանը գավառային կոմիսար էր, երբ գեներալ–նահանգապետն էր Արսեն Շահմազյանը» (ՀԱԱ, ֆ. 1191, ց. 16, գ. 1923, թթ. 32–33): Ս. Հախվերդյանը գրում է. «1919 թ. մարտի 31–ին Կենտրոնական ազգային խորհուրդը լուծարվեց և փոխարենը ստեղծվեց Զանգեզուր–Ղարաբաղ շրջանային խորհուրդ, վերակազմվեց նաև ինքնապաշտպանական կառույցը: Ստեղծվեց ռազմական խորհուրդ և սպայակույտ (շտաբ): Գորիսը կամ բուն Զանգեզուրը բաժանվեց երկու ռազմական շրջանի. Տաթևում հրամանատար նշանակվեց Խ. Մալինցյանը, իսկ Տեղ–Խնձորեսկում՝ Բ. Մելիք–Հուսեյինյանը: Գավառապետ նշանակվեց Նիկ. Հովսեփյանը, իսկ նրա օգնական և միլպետ՝ Սաքոն (Համբարձում Սարգիսջանյանը): Տե՛ս Գորիսի ամփոփ պատմություն, Երևան, 2005, էջ 216:

[72] Սյունիքի երկու շրջանների երթևեկը խոչընդոտող Աղուդի և Վաղուդի ավազակաբարո թուրք գյուղերի չեզոքացումը և Գորիսից Սիսիան գնալ–գալու ճանապարհի ազատումը մշտապես օրակարգային էր Սյունիքի իշխանությունների համար: Իսկ Անդրանիկն այդ գյուղերը գրավելու հատուկ ծրագիր չի ունեցել: Եղիշե Քաջունին օգոստոսի 27–28–ի օրագրության մեջ գրում է. «Զանգեզուրէն Սիսեան տանող ճամբուն վրայ որեւէ գիւղ չկայ, բայց, ճամբէն ոչ շատ հեռու՝ Որոտան գետի եզերքը, լաւ դիրքերու մէջ կան թրքական Աղուտի, Վաղուտի եւ Որոտն գյուղերը: Այս երեք գիւղերու բնակիչ թուրքերը աւազակաբարոյ են եւ իրենց շրջանին մէջ ծանօթ իրենց գազանաբարոյութեամբ: Շատ ստիպողական պարագաներու, ստիպուած կըլլային գործածել ձորի միուս կողմը գտնուող լեռնային ու վտանգաւոր ճամբան: Զորամասը անշուշտ չէր կրնար այդ փախստական ճամբով երթալ: Բացի արժանապատուութեան հարց ըլլալէ, ունէինք ծանր բեռնաւորուած գրաստներ, որոնց համար լեռնային այդ ճամբան ուղակի սպանիչ էր. բնականաբար ընտրեցինք ուղիղ ճամբան, բայց հազիւ Եայլա հասած ու թրքական շրջանին մոտեցած՝ դարան մտած թուրքերը սկսան կրակել մեր վրայ: Կռիւը տեւեց բաւական երկար ու թուրքերը հակառակ լաւագոյն դիրքերը գրաւած ըլլալուն, մթնելէ առաջ փախան» Եղիշէ Քաջունի, «Անդրանիկի եւ Հայկական առանձին հարուածող զօրամասի հետ», New Jersey, 1976): Իսկ Հովակ Ստեփանյանը հիշում է. «Անդրանիկն ու Սմբատը համաձայնվեցին խճուղիով երթալ դեպի Սիսիան՝ ճանապարհին տեղահան անելով Աղուդին ու Վաղուդին: Սակայն Ազգային խորհուրդը տատանվում էր: Նրա մի անդամը՝ Ն. Օսիպովը, ինչպես հայտնեցին մի քանի տեղացիներ Անդրանիկին, մեծաքանակ ստանալիքներ ուներ աղուդիցիներից և վաղուդիցիներից, ուստի և ձգձգում էր այդ արշավանքը: Անդրանիկն ու Սմբատը օգոստոսի 15–ին իրենց զորամասերով վերջապես խճուղիով արշավեցին և ճանապարհին մի փոքր հարված տվին Աղուդուն և Վաղուդուն, տեղահան արին դրանց» («Արցախյեան կամ Շուշվայ գնդի պատմութիւնը», «Հայրենիք», 1935, մարտ, էջ 86–87): Շուտով այս գյուղերի բնակիչները նորից են վերադառնում իրենց տները և սեպտեմբերի 28–ին նորից են կռվի բռնվում Սիսիանից

մեծ սկանդալ ծագեց, դաշնակները նույնիսկ այնպես դասավորեցին, որ Անդրանիկի հետ սուր վեճի բռնվեցի[73]: Ինձ դատի տվին՝ դատապարտելով երկշաբաթյա բանտարկության[74]:

Թուրքերը մոտենում են Շուշիին:

Անդրանիկը համոզում է ազգաբնակչությանը չթողնել իրենց Զանգեզուրը, այլապես թուրքերը պիտի մորթեին բոլորին՝ առանց բացառության: Ես թույլ չեմ տալիս բնակչության էվակուացիան և հարկադրված եմ լինում կռիվներ մղել Կապանի շրջանում, Նուրի փաշայի զորքերի դեմ, Խոջախանի[75] շրջանում՝ մեզ համար հաջող կռիվներ:

Գորիս շարժվող Անդրանիկի զորամասերի հետ և նորից պարտվելով փախչում: Այս ավազակաբների վերջնական մաքրումը տեղի ունեցավ ավելի ուշ:

[73] «мне с Андраником пришлось пойти на «ножи».

[74] Անդրանիկի քարտուղար Եղիշե Քաջունին օրագրում 1918 թ. նոյեմբերի 15–ին գրում է. «Երեկոյան Զորավարը, շատ բարկացած, տնային բանտարկության կենթարկե պարուչիկ Մալինցյանը՝ ցնոր տնօրինություն» (Անդրանիկի և Հայկական առանձին հարվածող զորամասի հետ, Նյու Ջերսի, 1976): Եվ էլ ոչ մի բացատրություն: Իսկ Սերգեյ Հախվերդյանը «Գորիսի ամփոփ պատմություն» գրքում (Երևան, 2005, էջ 216) մեջբերում է ականատեսների վկայությունները այդ մասին. «Պատմում են, որ Գորիսում գտնվելու առաջին իսկ օրերին Անդրանիկը ցանկացել է մարմնական պատիժ տալ Գորիսի ինքնապաշտպանության ղեկավար Խ. Մալինցյանին և պարուչիկը պատժից փրկվում է միայն իր կնոջ՝ երկարաձամ Ծիածանի միջամտության շնորհիվ: Հայրաբար և անհրաժեշտաբար խիստ է Զորավարը»: Խ. Մալինցյանը, դիտավորություն ունենալով քննիչներին ապացուցելու բոլշևիկներին իր համակիր լինելու հանգամանքը, բոլշևիկներին իբրև հալածելու գործում և Սյունիքի թուրքերի դեմ կատարված գործողություններում իր անմեղությունը կամ որ իբր նույնիսկ օգնել է նրանց, գրեթե ամեն դեպք, իրադարձություն փորձում է ներկայացնել այն տեսանկյունից, որ իր արարքները հենց այդ պատճառով են եղել, և որի համար էլ նա պատժվել է, այդ թվում՝ նաև Անդրանիկի կողմից: Հավանաբար այս դեպքից հետո՝ մինչև Անդրանիկի Սյունիքից հեռացումը, շնորհազուրկ Խ. Մալինցյանը կարևոր դերակատարություն չի ունեցել: Այդ են փաստում Անդրանիկի Զանգեզուրյան շրջանի վերաբերյալ արխիվային փաստաթղթերը: Միայն երկու տեղ է հիշատակվում նրա անունը՝ «Անդրանիկի... տեղեկությունները և սխեմաները դիրքերի մարտական դասավորության և ըստ գյուղերի՝ տեղաբաշխման մասին» անթվակիր փաստաթղթում (ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 13. թ. 37 և թ. 39), որից երևում է, որ 9 դիրքեր ունեցող բուն Զանգեզուրի ռազմաճակատի (Գորիսի շրջանի) Թավլա Չուխուր և Քեռսե Մեճիթ գյուղերում գտնվող թիվ 1 դիրքում տեղաբաշխված է մեկ վաշտ և մեկ հարյուրակ՝ պարուչիկ Խ. Մալինցյանի հրամանատարությամբ:

[75] Գյուղ Որոտան (Բարգուշատ) և Հագարի գետերի գետախառնուրդից 2–3 կմ հարավ–արևելք՝ գետի աջ կողմում: Ղ. Ալիշանը Զանգեզուրի գավառում հիշատակում է նույնանուն երեք գյուղեր: Ռաֆֆին անվանումը կապում է հիմնադիր Խոջա Օհանի

Նոյեմբերի վերջին դաշնակիցները հաղթում են, թուրքական զորքերը հեռանում են և Զանգեզուրը ազատվում է:

Ժամանում են անգլիական և ֆրանսիական ներկայացուցիչներ մայոր Գիպոնն[76] ու կապիտան Դե Ժերվեն, կապ են հաստատում Բաքվի հետ և պահանջում են Անդրանիկի հեռացումը Զանգեզուրից և տեղական զորքերի կազմացրումը[77]:

1919 թ. հունիսին[78] Գորիս է ժամանում գեներալ Շատելվորդը՝ պահանջելով ենթարկվել Ադրբեջանին, տնտեսական և քաղաքական բնույթի նախագծեր առաջադրելով[79]: Իմ նախաձեռնությամբ գյուղացիների

անվան հետ:

[76] Վիլյամ Հ. Գիբոն. Կովկասում անգլիական միսիայի անդամ, մայոր: Հրատարակել է հուշեր այդ ժամանակաշրջանի դեպքերի մասին:

[77] Հակառակ ընդունված տեսակետի՝ հարցաքննության ժամանակ այդ իրադարձություններն այլ կերպ է ներկայացնում Խ. Մալինցյանը. «1918 թ. նոյեմբեր ամսին գեներալ Անդրանիկը ձեռնարկեց ինքնուրույն օպերացիա Շուշիի դեմ և անհաջողության մատնվելով՝ Ազգային խորհրդի որոշումով հրամանատարությունը հանձնվեց ինձ: Հաջորդ օրը ես շարունակեցի այդ օպերացիան և Շուշիի կողմից ժամանեցին անգլիացի կապիտան Գովանսը (մի այլ տեղ նշում է նաև անգլիացի կապիտան Թաուզենդի անունը), ֆրանսիացի մայոր Դե–Ժերվեն և դոկտոր Գյանջունցը (Շուշեցի Արտաշես Գյանջենցյանը եկած է եղել որպես թարգմանիչ), Շուշիի դեմ օպերացիան կանգնեցնելու համար: Այդ օտարերկրացիների հետ ես ոչ մի խոսակցություն չվարեցի՝ բացի հաշտության բանակցություններից»:

[78] Շատելվորդը Գորիս է ժամանել 1919 թ. մայիսին:

[79] «1919 թ. հունիս թե հուլիս ամսին ինձ հայտնեցին, որ Շուշվա կողմից դեպի Գորիս է գալիս ավտոմեքենա: Ես կարգադրեցի կանգնեցնել այդ մեքենան հենց ճակատում՝ Տեղում: Պարզվեց, որ եկողներն էին Անդրկովկասում Դաշնակցային զորքերի ընդհանուր հրամանատար, գեներալ Շատելվորդը և ոչ օտարերկրացի այլ անձիք՝ Դոկտոր Գյանջունցը, խմբապետ Իշխան Արգուտինսկին, Չերազը: Նրանք հարց բարձրացրին Զանգեզուրը Ադրբեջանին հանձնելու մասին: Բայց Ազգային խորհուրդը և գեներալ–կոմիսար Արսեն Շահմազյանը մերժեցին այդ առաջարկը: Գեներալ Շատելվորդը ինձ կանչեց իր մոտ և հարցրեց. «Եթե Ադրբեջանը պատերազմի Հայաստանի դեմ, արդյո՞ք դուք, այսինքն՝ հայերդ պիտի դիմադրություն ցույց տաք»: Ես պատասխանեցի, որ այո՛, հայերը պիտի դիմադրեն: Հետո նա հարցրեց. «Իսկ եթե Ադրբեջանի զորքերը պատերազմը վարեն անգլիացիների հրամանատարությամբ, ինչպիսի՞ն կլինի հայերի դիրքորոշումը»: Ես դարձյալ պատասխանեցի, որ պիտի դիմադրենք: Դրանից հետո նա հարցրեց. «Իսկ եթե կռվեն անգլիական զորքերը»: Ես պատասխանեցի, որ եթե անգլիական զորքերը պահպանեն խաղաղությունը, իհարկե, մենք չպիտի կռվենք և ընդհանրապես անգլիացիների դեմ չենք կարող կռվել մեր չնչին ուժերով: Այդ խոսակցություններից հետո նա հեռացավ: Մոռացա ավելացնել, որ մշտապես Զանգեզուրում

հզոր ցույց է կազմակերպվում[80]: Շատելվորդը թողնում է Զանգեզուրը:

Դաշնակները գեներալ–կոմիսար են նշանակում Ա. Շահմազյանին[81]:

1919 թ. հոկտեմբեր–նոյեմբերին սկսվում են Ադրբեջանի կազմակերպված հարձակումները Զանգեզուրի վրա: Ես նշանակվում եմ զորքերի գլխավոր հրամանատար[82] և նոյեմբերի 7–ին մուսաֆաթիստական Ադրբեջանը վերջնականորեն պարտվում է:

3. 1918 թ. սեպտեմբերին, երբ Անդրանիկի ղեկավարությամբ սկսվում են տեղական մաքրումները[83], ես մի շարք պատասխանա-

---

էր գտնվում Դաշնակցային զորքերի լիազոր անգլիացի կապիտան Թաուզենդը, որի ֆունկցիան էր կարգավորել Զանգեզուրի և հարևան ադրբեջանական գյուղերի միջև կոնֆլիկտները: Նրա հետ միաժամանակ շատ էր գալիս անգլիացի մայոր Գիբոնը բացառապես ռազմական հարցերով: Ինչպես Թաուզենդի, այնպես էլ Գիբոնի հետ ոչ մի գործնական կամ մասնավոր խոսակցություն չեմ ունեցել» (ՀԱԱ, ֆ. 1191, ց. 16, գ. 1923, թթ. 115–118):

[80] Այստեղ ակտիվ դեր է խաղացել Խ. Մալինցյանի ազգական Մալունց Ղազարը, որի տանն է, ի դեպ, ապրելիս եղել Զորավար Անդրանիկը Գորիսում գտնվելու ժամանակ: «Նժդեհ» գրքում (Լոս–Անջելոս, 1989, էջ 222) նրա մասին հիշատակվում է. «Մալունց Ղազար, Գորիսից, հսկա հասակով, անգլիական զրահապատ մեքենայի առաջը կտրողը. «Հեռացե՛ք Գորիսից. թուրքին մենք չենք ենթարկվի»:

[81] ՀՀ կառավարության կողմից Սյունիքի գեներալ–նահանգապետ նշանակված Ա. Շահմազյանը Գորիս է ժամանել 1919 թ. մարտին: Արխիվային վավերագրերում և հուշագրություններում նրա մասին հիշատակվում է նաև որպես՝ «Զանգեզուրի բոլոր զինվորական ուժերի հրամանատար», «Զանգեզուրի զինված ուժերի գերագույն հրամանատար», «պետական կոմիսար» (ՀԱԱ, ֆ. 252, ց. 2, գ. 18):

[82] Թեպետ գլխավոր հրամանատարը Արսեն Շահմազյանն էր, սակայն Սյունիքի մղած ամենից լայնածավալ 1919 թ. նոյեմբերյան կռիվներում ռազմաճակատի գլխավոր՝ Տեղ–Կոռնիձորի ճակատի հրամանատարը Խ. Մալինցյանն էր: Եվ այստեղ հայերի տարած փայլուն հաղթանակը վճռորոշ նշանակություն ունեցավ և պատերազմի ելքի վրա տվյալ փուլում և Սյունիքի գոյամարտի համար ընդհանրապես:

[83] Նկատի ունի հայկական ուժերի և բնակչության տեղաշարժը և երթևեկությունը խափանող թրքաբնակ գյուղերի դատարկումը:

տու կոմունիստների՝ Բակունցին[84], Քրիստափորին[85] առաջարկում եմ իշխանությունը վերցնել իրենց ձեռքը, ընդ որում՝ նախորոք ես պիտի ձերբակալեի Ազգային խորհուրդը: Բայց Բակունցը և Քրիստափորը չեն ցանկանում պատասխանատվությունը վերցնել իրենց վրա և իմ հայտարարությունը ընդունում են միայն ի գիտություն:

1919 թ. դեկտեմբերի 14–ին ես մեկնում եմ Երևան և վերադառնում եմ Զանգեզուր 1920 թ. փետրվարի 5–ին: Ինձ նշանակում են նոր կազմավորվող գնդի հրամանատար:

1920 թ. մարտի 21–ին դաշնակները հարձակվում են Ղարաբաղի վրա: Ես չեմ մասնակցում[86]:

---

[84] Բակունց Երեմիա Սայադի (1892–1938). ԽՄԿԿ անդամ 1908–ից: 1914 թ. Գևորգյան ճեմարանը ավարտելուց հետո սովորել է Պետրոգրադի Նյարդա–հոգեբանական ինստիտուտում՝ միաժամանակ վարելով կուսակցական ակտիվ աշխատանք: ՌՍԴԲ(բ)Կ Բաքվի կոմիտեի հանձնարարությամբ 1917 թ. հուլիսին մեկնել է Զանգեզուր՝ ընդհատակյա աշխատանք տանելու: Եղել է Զանգեզուրի, ապա (1919 թ. հունիս) Ղարաբաղ–Զանգեզուրի միացյալ Ազգային խորհրդի անդամ: Մասնակցել է 1920–1921 թթ. քաղաքացիական կռիվներին, որից հետո նշանակվել է Զանգեզուրի Հեղկոմի նախագահ: 1922–1927 թթ. եղել է ՀԿ(բ)Կ Ալեքսանդրապոլի գավառային կոմիտեի, ապա ՀԿ(բ)Կ Կենտկոմի քարտուղար: Ապա բարձր կուսակցական–պետական պաշտոններ է զբաղեցրել Միջին Ասիայում և Ռուսաստանում: Նա երիտասարդ Ակսել Բակունցին ներքաշեց 1923 թ. ՀՅԴ–ի շինծու լիկվիդացիայի գործի մեջ: Հատկապես Զանգեզուրի Ազգային խորհրդում նրա գործունեությունը սուր քննադատվել է կուսակից բոլշևիկների կողմից և խնդիրներ է առաջացրել նրա հետագա կարիերայի համար: 1927 թ. մարտին ՀԿ(բ)Կ Կենտկոմի պլենումում 4–րդ և վերջին անգամ քննարկվել է Կենտկոմի քարտուղար Ե. Բակունցի հարցը և ընդունվել որոշում: «Հարցը վերաբերում է նրան, թե կոմունիստ Ե. Բակունցը, 1919 թ. լինելով Զանգեզուրի Ազգային խորհրդի անդամ, դրա նիստում մյուսների հետ միասին քվեարկել է հոգուտ Շուռնուխի ադրբեջանական գյուղերի տեղահանությանը: Հարցը քննության առարկա էր դարձել Ադրբեջանից ստացված դիմումի համաձայն» (ԲՀԱ, 2006, թ. 1):

[85] Քրիստափոր Հովհաննեսի Մկրտչյան. ծնվել է 1896 թ. Գորիսում: ԽՄԿԿ անդամ 1916 թ–ից, Զանգեզուրի բոլշևիկյան կազմակերպության ղեկավարներից: 1920 թ. հուլիսին Կարմիր բանակի կողմից Զանգեզուրը բռնազավթելուց հետո դարձել է գավառային կոմիտեի քարտուղար: 1920 թ. աշնանը Սիսիանում ՀՀ իշխանությունների կողմից ձերբակալվել է և գնդակահարվել:

[86] Դրոյի հետ Խ. Մալինցյանի գժտվելու մասին 1932 թ. իր ցուցմունքներում վկայում է նաև Մկրտիչ Երիցյանը. «1919 թ. վերջերին իր զորաջոկատով Զանգեզուր է ժամանում խմբապետ Դրոն, Խ. Մալինցյանի և Դրոյի միջև գժտություն է լինում, որի պատճառով էլ Դրոյի կողմից ձերբակալվում է և ուղարկվում Երևան»:

Մարտի 21–ի հարձակման ձախողման հետևանքով, մարտի 22–ին, ինձ հանձնում են Ռազմաճակատի Մելիքենդ–Խանածախ–Տեղ հատվածը, մյուս տեղամասերում աշխատում են Թարվերդովը, Մելիք–Հուսեյինովը և Նժդեհը՝ Կապանում, գեներալ Ղազարովի ղեկավարությամբ:

Այդ օրերին ես հակընդեմ քաղաքականություն եմ վարում՝ չհարձակվել Ղարաբաղի վրա:

Ղարաբաղը գրավելուց հետո Դրոն ինձ կանչում է Ղարաբաղ և առաջարկում է իմ կադրային գունդը նետել Ղարաբաղ՝ բոլշևիկյան շարժումը ճնշելու համար[87]:

Մայիսի 21–ին ես հրաժարվում եմ հրամանը կատարել և վերադառնում եմ Զանգեզուր:

1920 թ. մայիս 26–ին Սիսիանում փոքրիկ ապստամբություն է և ինձ առաջարկում են մեկնել Սիսիան: Ես հրաժարվում եմ և մի նամակ եմ գրում ապստամբության ղեկավար Մուշեղ Զաքարյանին[88]՝ խոստանալով իմ լի-

---

[87] 1920 թ. մայիս–հունիսին Դրոյի գործունեությունը Ղարաբաղում և Զանգեզուրում մինչ այսօր էլ չբացահայտված առեղծվածներից է և տարակուսանք է առաջացրել հենց այն օրերին: Այսպես, Զանգեզուրի գեներալ–կոմիսար Ս. Մելիք–Յոլչյանը, ով ի դեպ Դրոյի մորաքրոջ որդին էր, հեռագրում է Երևան. «Հունիսի 1–ին (ճիշտը՝ մայիսի 25–ին) Դրոն ամբողջ ջոկատով լքել է Ղարաբաղը և անցել է Զանգեզուր: Պատճառը խորհրդավոր է և բոլորովին անհասկանալի մեզ համար: Ղարաբաղում վիճակը անորոշ է: Մեր ձեռքով մենք կործանեցինք Ղարաբաղը: Դա մեր կուսակցության կրախն է: Դրոն անձամբ է իշխանությունը հանձնել բոլշևիկներին: Ինչպես հայտնում է հենց նոր Ղարաբաղից եկած գնդապետ Մեսյանը, այնտեղ չկան ռուսական բոլշևիկներ և ժողովուրդը տատանվում է: Դրոյի և նրա ջոկատի խուճապահար փախուստը Ղարաբաղից Զանգեզուրում ստեղծել է որոշ խուճապ: Լուրեր են տարածվել, թե ջոկատը հեռանում է Զանգեզուրից: Ժողովուրդը հուզվում է» (ՀԱԱ, ֆ. 1022, ց. 8, գ. 51, թ. 2): Դրոյի այդ քայլը փորձում է պարզաբանել Սյունիքի գեներալ կոմիսարի պաշտոնում Ս. Մելիք–Յուլչյանին փոխարինած Զաքար Յոլյանը. «Բոլշևիկների՝ Ղարաբաղը վերագրավելու ժամանակ Դրոն իր զորամասով Ղարաբաղում էր: Նա քաղաքական իրադարձությունների բերմամբ բանակցության մեջ մտնում բժիշկ Ս. Հ–ի և Ս. Տ. Գ–ի (Սահակ Տեր–Գաբրիելյան) հետ, որոնք ղեկավարի հանգամանք ունեին որպես ղեկավար բոլշևիկներ: Դրոն, բժիշկ Ս. Հ–ի և Ս. Տ. Գ–ի հետ բանակցելուց հետո ռազմագիտորեն կռահում է, որ անհրաժեշտ է փրկել իր զորամասն ամբոխավարական չարաղետ հետևանքներից: Նա բավականին զենքեր և ռազմամթերք է տրամադրում ժողովրդի ինքնապաշտպանության համար, իսկ իր զորամասին հրամայում է, որ ռազմական լրիվ կազմով նահանջեն Զանգեզուր» («Ալիք», 1960, նոյեմբերի 29, թիվ 263):

[88] Բախշի (վերանվանյալ Մուշեղ) Զաքարյան. ծնունդով Բռնակոթ գյուղից, Ղարաբաղի

և Զանգեզուրի ՀՅԴ և ազգային գործիչ: Ղարաբաղի 2–րդ համագումարում (1918 թ. սեպտեմբերի 8) ընտրվում է կառավարության դեր կատարող Ազգային Խորհրդի անդամ՝ ստանձնելով գաղթականության և խնամատարության գործը: Ղարաբաղի 3–րդ արտակարգ համագումարում ընտրվել է նախագահ: Ըստ Հովակ Ստեփանյանի՝ նա 1918 թ. հոկտեմբերի 11–ին թուրքերի կողմից Շուշիից Զանգեզուր ուղարկված երեք հոգուց բաղկացած պատվիրակության ղեկավարն էր: 1918 թ. սեպտեմբերի 27–ին, Ջամիլ Ջահիդ բեյի հրամանի համաձայն, և Շուշի քաղաքի հանձնախմբի որոշմամբ այդ պատվիրակները մեկնում են Գորիս՝ «համոզելու» Անդրանիկին և Զանգեզուրի հայությանը՝ ընդունելու թուրքական հպատակություն և ենթարկվելու Ադրբեջանի իշխանությանը («ՎԷմ», 1936, հուլիս–հոկտեմբեր, էջ 67): Մնալով Զանգեզուրում՝ 1918 թ. նա դարձավ Զանգեզուրի Ազգային խորհրդի անդամ: 1919 թ. մարտի 31–ին Գորիսում (Ղափանի և Մեղրիի պատվիրակների բացակայությամբ) տեղի ունեցած «Զանգեզուրի հայ համագումարում» ընտրվել է Զանգեզուրի կենտրոնական ազգային խորհրդի նախագահ (ՀԱԱ, ֆ.252, ց.2, գ.18): Երբ «Զանգեզուրի Ազգային խորհուրդը» վերանվանվեց «Զանգեզուր–Ղարաբաղի Ազգային խորհուրդ», Մ. Զաքարյանը դարձել է նոր խորհրդի նախագահը, բայց Խորհրդում համերաշխության ոգի գոյություն չուներ, քանզի, հակառակ որ գյուղացիական համագումարներին գյուղացիությունը կողմ էր նրան, բայց Գորիսում խուլ պայքար կար նրա դեմ: Մուշեղի հանդեպ գորիսցիների հակակրանքը սկիզբ էր առել 1918 թ. հոկտեմբերից, երբ նա, որպես Շուշիից Զանգեզուր թուրքերի ուղարկված պատվիրակության ղեկավար, հանդես էր եկել և հորդորել սյունեցիներին ղարաբաղցիների նման ենթարկվելու թուրքերին, որի ընթացքում քիչ էր մնացել հաշվեհարդար տեսնեին պատվիրակության անդամների հետ: 1919 թ. հուլիսի 16–ին նրա փոխարեն Զանգեզուր–Ղարաբաղի Ազգային Խորհրդի նախագահ է ընտրվում Արշակ Շիրինյանը, իսկ Մ. Զաքարյանին հանձնվում է խնամատարության (այլ վկայությամբ՝ լուսավորության) գործը: Հետագայում Մ. Զաքարյանը հեռանում է կուսակցությունից և խռովություններ հրահրում: Այսպես, 1920 թ. Բռնակոթ գյուղը կազմակերպում և հանում է Դրոյի դեմ, որը քիչ էր մնում արյունահեղությամբ ավարտվեր: Բայց բանակցելով ժողովրդի հետ՝ Դրոյին հաջողվում է վերջ տալ գժտությանը: Զ. Յոլյանը գրում է. «Դրոն լուծարքի է ենթարկում Բռնակոթ գյուղում ծագած ըմբոստությունը Մուշեղ Զաքարյանի բանտարկությամբ և ղեկավարությամբ» («Ալիք», 1960, նոյեմբերի 29): Թե որքան վտանգավոր էր դարձել նրա գործունեությունը, հիշյալ հեռագրով ահազանգում է Սյունիքի գեներալ–կոմիսար Ս. Մելիք–Յոլչյանը. «Իմ կողմից հետապնդվող հայտնի պրովոկատոր և գրգռիչ Մուշեղ Զաքարյանը թաքնվել է Տերնացում և հրահրում է զանգվածներին, քաոս ստեղծում: Մուշեղին և իր կողմնակիցներին պատժելու իմ բազմիցս առաջարկները զինվորական իշխանություններին մնում են առանց կատարման: Դրա շնորհիվ կյանքը քայքայվում է, և քաոս է ստեղծվում: Կարգուկանոնի վերականգնման համար անհրաժեշտ է ուղարկել մի գումարտակ և ուժեղ ու անկախ լիազոր: Ստեղծված պայմաններում ես չեմ կարող աշխատել և մեկնում եմ Էրիվան: Դրոն գործում է անկախ և արդյունքը բացասական է» (ՀԱԱ, ֆ. 1022, ց. 8, գ. 51, թ. 2): Կարմիր բանակը Զանգեզուր մտնելու ժամանակ Մ. Զաքարյանը համագործակցում է բոլշևիկների հետ և նրանց հրահանգով 1920 թ. հուլիսի 21–ին Գորիսից նամակ է գրում Նժդեհին և Աշոտ

ակատար աջակցությունը, առաջարկում եմ աշխատանքը սկսել կենտրոնից: Դաշնակները նամակս բռնագրավում են: Մայիսի 29–ին Ռազմական խորհրդում, որին մասնակցում էին Դրոն, Կուռոն, Նժդեհը, Դոնդարովը[89] և Յապոնը[90], ինձ ձերբակալում են, հանձնում Ռազմադաշտային դատարան և դատապարտում մահվան: Բայց ինչպես հետագայում ինձ հաջողվեց պարզել, գնդակահարությունը չգործադրվեց շնորհիվ 3–րդ Հայկական գնդի հրամանատարի օգնական ընկ. Գառնիկ Վարդանյանի:

Ինձ պահում են բանտում և մայիսի 30–ին մի էսկադրոնի հետ ուղարկում են Էրիվան և նստեցնում են Էրիվանի բերդում, ընկ. Ֆիրգուլյանի, Բ. Դադաշյանի, Գր. Պայթունու[91] և 4–րդ գնդի սպաների հետ:

Հուլիսի 24–ին տեղի է ունենում դաշնակների արտակարգ դատավարությունը: Դատավճռը ներկայացված է ձեզ[92]:

Մելիք–Մուսյանին՝ համոզելով դադարեցնել կռիվը և Ղափանը ևս հանձնել բոլշևիկներին (ՀԱԱ, ֆ. 499, ց. 1, գ. 11, թթ. 1–3):

[89] Փոխգնդապետ Դոնդարովը Զանգեզուրի ընդհանուր հրամանատարի պաշտոնին նշանակված գեներալ Ղազարովի (Ա. Շահմազյանի Երևան վերադառնալուց հետո) շտաբի պետն էր:

[90] Անկասկած այստեղ նկատի ունի Հովհաննես Պարոնյան–Յապոնին (1878–1942 թթ.), ով այդ ժամանակ կարճ ժամանակով թողել էր Վայոց ձորի հրամանատարի իր պաշտոնը և Դրոյի զորախմբում էր: Մյուս նշանավոր գորիսեցի Յապոնի՝ Համբարձում Պետրոսի Սարգիսջանյանի (1878–1920) մասին Խ. Մալինցյանը հիշատակում է հենց Սաքո–Յապոն անվամբ:

[91] Գրիգոր Հմայակի (Իվանի) Բայթունի (Պայթունց). ծնվել է 1889 թ. Սեբաստիայի Մարզվան գյուղաքաղաքում: 1909 թ. ընտանիքով տեղափոխվել է Ռուսաստան՝ Եկատերինոդար: 1918 թ–ից՝ կոմկուսի անդամ: 1919 թ. ուղարկվում է Կարս՝ զորամասերում ընդհատակյա աշխատանք կատարելու: 1920 թ. մայիսին Կարսի կայազորում խռովություն կազմակերպելու համար ՀՀ արտակարգ դատարանի կողմից որպես հայրենիքի դավաճան դատապարտվում է 10 տարվա տաժանակիր աշխատանքի: 1920 թ. դեկտեմբերի 2–ին ազատվում է բանտից և ուղարկվում Վայոց ձոր՝ Դարալագյազ՝ բոլշևիկյան բջիջներ ստեղծելու և խորհրդային իշխանություն հաստատելու համար: 1921 թ. փետրվարին Յապոնի հրամանատարությամբ Լեռնահայաստանի զինված ուժերի կողմից Վայոց ձորը գրավելու և այնտեղ տեղակայված 11–րդ Կարմիր բանակի 20–րդ դիվիզիայի 180–րդ գնդի առաջին գումարտակի գլխովին կործանման համար կանչվել է Մոսկվա՝ պատասխանատվության: Ապա մինչև մահը՝ 1937 թ. (հավանաբար նա ևս բռնադատվել է), կուսակցական–պետական պաշտոններ է վարել Հյուսիսային Կովկասում:

[92] Վերոհիշյալ դատավճիռը դատական գործում չկա:

Հուլիսի 24–ին բանտից դուրս գալուց Սերգո Մանուցյանը մի շարք ընկերների առաջարկեց մեկնել Հյուսիսային Կովկաս՝ Գայի մոտ, բայց անզգուշության շնորհիվ իմանում են և ինձ վագոնով Էրիվանից հեռացնում են Թիֆլիս, Վրացական կառավարության տրամադրության տակ, որը «Թադլա» շոգենավով ինձ ուղարկում է ավելի հեռու՝ Կ. Պոլիս:

Ես Կ. Պոլիս եմ ժամանում սեպտեմբերի 17–ին և կանգ առնում Սամաթիայում[93]՝ իմ առաջին տաճկահայ կնոջ[94] ազգականների մոտ:

4. 1920 թ. հոկտեմբերից սկսած՝ Ամերիկայից՝ կնոջս հորեղբորից կանոնավոր կերպով փող էի ստանում:

Սկզբում ես ծանոթացա «Երկիր» թերթի խմբագիր Հրանտ Գալիկյանի, Գերագույն դատարանի նախագահի տեղակալ Ժիրայր Միրզախանյանի, Հողժողկոմի կոլեգիայի անդամ Զոփուրյանի հետ և հետագայում՝ Կ. Պոլսի Զավեն պատրիարքի[95] հետ, որն ինձ օգնեց մեկնել

---

[93] Մարմարա ծովի ափին տարածվող, մինչև վերջին ժամանակները հիմնականում հայերով բնակեցված Կ. Պոլսի թաղամաս:

[94] Գորիսում չեն մոռացել տաճկահայ երկարաձամ Ծիածանին, ում Խաչատուրը բերել էր Էրզրումից: Ըստ որոշ չստուգված տեղեկությունների՝ Ծիածանը խեղդվել է գետում (ըստ երևույթին մինչև Փարիզ ժամանելը, քանի որ Ֆրանսիա գալուց հետո Խ. Մալինցյանը միանգամից դադարում է նրա մասին հիշատակել): Հետաքննության ընթացքում քննիչները ևս նրա հետագա ճակատագրի մասին որևէ հարցում չեն անում:
Խաչատուրի երզնկացի կնոջ՝ Ծիածանի մասին վկայություն է տվել Օրդաքլուի գյուղից Հովհաննես Ղարիբյանը՝ Սևանի ափամերձ ապստամբ թուրքական գյուղախմբի դեմ կռիվների և Խ. Մալինցյանի մասին իր ցուցմունքներում. «…Մոռացա ասել, որ այդ ժամանակ Խ. Մալինցյանի կինը նույնպես մեր գյուղում էր և կոտորածի առաջին օրը, քանի դեռ լսելի չէր հրանոթների կրակոցները, ամբողջ ժամանակ նա անհանգստանում էր, բայց հենց որ հրանոթները «խոսեցին», նա սարկաստիկ և երանության տոնով ասաց. «Ա՜խ, շուտ սկսեին Է՜: Ահա հիմա լավ է, երկրի երեսից կմաքրենք այդ գյավուրներին»: Դրանից հետո նա ձի նստեց և մեկնեց մարտադաշտ: Այդ գյուղերի ոչնչացումից հետո գունդը նրանց ամբողջ անասունը, ունեցվածքը և այլն վերցրեց իր հետ և շարժվեց դեպի Ն. Բայազետ:
Հարց — Ի՞նչ ազգության էր Խաչատուրի կինը:
Պատ. — Նա հայուհի էր: Էլ ոչինչ չունեմ հայտնելու» (ՀԱԱ, ֆ. 1191, ց. 16, գ. 1923, թթ. 42–43):

[95] Զավեն արքեպիսկոպոս Տեր–Եղիայան (9.09.1868, Մոսուլ – 5.06.1947, Բաղդատ). Կ. Պոլսի Հայոց պատրիարքը՝ 31.08.1913–ից մինչև 1916 թ. հուլիսը և ապա՝ 1919 թ. փետրվարից մինչև 10.12.1922 թ.: Մինչ այդ նա եղել էր 1898–1906 թթ.՝ Կարինի, 1908–09 թթ.՝ Վանի, 1909–13 թթ.՝ Տիգրանակերտի (Դիարբեքիրի) թեմական առաջնորդը:

Փարիզ, Պողոս Նուբարին[96] ուղղված նամակով՝ իմ սովորելուն օժանդակելու առաջարկով: Մեկնեցի՝ ունենալով Վանի բնակչի անձնագիր:

Տեղ հասնելուց, փախած դաշնակ կառավարության անդամներ՝ Ա. Գյուլխանդանյանի[97], Ա. Խատիսյանի[98] կողմից ինձ առաջարկվեց մտնել «Հայաստանի Սպաների Միություն», բայց ես հրաժարվեցի և սպաներին տրվելիք 800 ֆրանկից իմ հրաժարականում գրեցի:

Կ. Պոլսում գտնվելիս սովորեցի ֆրանսերեն լեզուն:

«Երկիր» թերթի խմբագրության հետ ծանոթանալու նպատակն էր «Երկիր» թերթի միջոցով մի շարք հոդվածներ հրապարակել Զանգեզուրի և նրա իրադարձությունների մասին, չնայած դա ինձ չհաջողվեց դրամական միջոցների սղության պատճառով:

5. 1921 թ. հուլիսի 7–ին, «Մեհալի Էլլաս» շոգենավով մեկնեցի Մարսել և Փարիզ: Ամռանը ապրում էի Պալե–Ռոյալին մոտիկ Պտի–շան փողոցի վրա, աշնանը՝ Սեն–Ժերմենում:

Փարիզում հանդիպեցի Պետդումայի անդամ Միքայել Բաբաջանյա-

Հեղինակ է «Պատրիարքական յուշերս» գրքի, որն այդ շրջանի պատմության հարուստ վավերագրեր է պարունակում:

[96] Պողոս փաշա Նուբարյան (1851–1930). անվանի ազգային գործիչ՝ ծագումով Կապանի Շիկահող գյուղից Նուբար փաշայի որդին: 1906 թ. հիմնել է ՀԲԸՄ–ն: 1913 թ. Գևորգ Ե կաթողիկոսի կողմից նշանակվել է ազգային պատվիրակության նախագահ հայկական բարենորոգումների հարցը եվրոպական տերությունների առջև արծարծելու նպատակով: Նրա միջոցներով տարբեր գաղթավայրերում և Խորհրդային Հայաստանում բացվել են հիվանդանոցներ, մշակութային կենտրոններ, հիմնադրվել է Նուբարաշեն ավանը:

[97] Աբրահամ Գյուլխանդանյան (1875 թ. Էջմիածին–1945, Փարիզ). ՀՅԴ նշանավոր գործիչ: Մինչև 1918 թ. հիմնականում գործել է Բաքվում, 1905–1906 թթ. ակտիվ դերակատարություն է ունեցել Բաքվի և Գանձակի ինքնապաշտպանության կազմակերպման գործում: 1910–1912 թթ. ցարական իշխանությունների կողմից բանտարկվել է: 1918 թ. Բաքվի ինքնապաշտպանության ղեկավարներից էր: Եղել է ՀՀ պառլամենտի անդամ, Ներքին գործոց նախարար: Հուշագրությունների և այլ աշխատանքների հեղինակ է:

[98] Խատիսյան Ալեքսանդր (1874–1945). պետական–քաղաքական գործիչ, ՀՅԴ անդամ: 1909–1917 թթ. եղել է Թիֆլիսի քաղաքագլուխը, Կովկասյան քաղաքների միության նախագահ, 1917 թ.՝ Ալեքսանդրապոլի քաղաքագլուխը, ապա՝ ՀՀ վարչապետ: Գրել է «Հայաստանի հանրապետության ծագումն ու զարգացումը» և այլ հուշեր:

նին[99], իսկ հետագայում՝ Պողոս Նուբարին և Չոբանյան Արշակին[100]:

Ինձ ծանոթացրին գեներալ Դելակրուայի հետ, որն ինձ նախապատրաստում էր ռազմական գործին՝ Ակադեմիա ընդունվելու համար, բայց իմ ընդունվելս չհաջողվեց՝ իրական ուժեղներից աջակցություն չունենալու պատճառով, թեպետ Պողոս Նուբարը շատ ջանաց[101]:

Հետագայում ինձ առաջարկեցին ընդունվել ֆրանսիական բանակ՝ 5 տարով Մարոկկո մեկնելու պայմանով, բայց ես հրաժարվեցի:

Այդ ժամանակ էլ, Միխայիլ Սկոբելևի[102] հետ զրույցում, ում հետ հանդիպել էի Մ. Բաբաջանյանի միջոցով, ես թույլտվություն խնդրեցի մեկ-

---

[99] Միքայել Հովհաննեսի Պապաջանյան (1868, Երևան–1929, Թիֆլիս). 1912 թ. ընտրվել է 4–րդ պետդումայի պատգամավոր: 1917 թ. Անդրկովկասյան հատուկ կոմիտեի անդամ: Եղել է 1917 թ. ստեղծված Հայ Ժողովրդական կուսակցության հիմնադիրներից, իսկ նրա Ռամկավար–Ազատական կուսակցության մեջ մտնելուց հետո՝ ՌԱԿ–ի վարչության անդամ, ՀՀ պատվիրակության, ապա Ազգային պատվիրակության անդամ: 1926 թ. ընտրվել է Հայաստանի օգնության կոմիտեի Ֆրանսիայի շրջանի կենտրոնական վարչության նախագահ: 1929 թ. գործուղվում է Երևան, որտեղից վերադառնալու ճանապարհին՝ 1929 թ. դեկտեմբերի 23–ին, Թիֆլիսում մահացել է ուղեղի կաթվածից և թաղվվել Խոջիվանքի հայոց գերեզմանատանը:

[100] Արշակ Հովհաննեսի Չոպանյան (1872–1954). գրող, բանասեր, թարգմանիչ, հասարակական գործիչ: Մեծ աշխատանք է տարել հայ գրականությունը Եվրոպայում քարոզելու և հայ ժողովրդի դատը պաշտպանելու ուղղությամբ:

[101] Հարցաքննության ժամանակ Խ. Մալինցյանն այդ մասին նշել է. «Զավեն Պատրիարքը համաձայնություն հայտնեց օգնելու՝ գրելով Նուբար փաշային ուղված նամակ: Վերջինս իր կողմից ծանոթացրեց ֆրանսիական գեներալ Դելակրուայի հետ: Վերջինս էլ բանակցեց ինձ հետ իմ զինվորական ծառայության մասին՝ խոստանալով օգնել ինձ և առաջարկեց անցնել իր մոտ 3 շաբաթ անց: Գնացի նրա մոտ՝ տեղեկանալու գործի ընթացքին: Նա ինձ հայտնեց, որ հրաժարվել են ինձ ակադեմիա ընդունել, քանի որ օտարերկրացիներին դժվար են ընդունում և բացի դա՝ կա թեկնածու հայկական կառավարության կողմից՝ հանձինս նախկին դաշնակցական սպա Եղիազարյանի: Դրանով ավարտվեց իմ կապը Դելակրուայի հետ: Ակադեմիա ընդունվելու գործը տապալվելուց հետո Պողոս Նուբար փաշան առաջարկեց ինձ ընդունվել Ֆրանսիական գաղութային բանակ՝ որպես սպա, որը ես կտրականապես մերժեցի և հայտարարեցի, որ հետ կգնամ հայրենիք»:

[102] Սկոբելևը եղել է պետդումայի անդամ: Հարցաքննության ժամանակ Մալինցյանը պատմում է. «Պետդումայի նախկին պատգամավոր Միքայել Բաբաջանյանի միջոցով, որի հետ ծանոթացել էի Նուբար փաշայի մոտ, ես ծանոթացա Փարիզում ՍՍՀՄ առևտրական ներկայացուցիչ Սկոբելևի հետ, ում ասացի, որ ցանկանում եմ վերադառնալ հայրենիք: Նա այդ նպատակով ինձ նամակ տվեց՝ Բեռլինում ՍՍՀՄ առևտրական ներկայացուցչի անունով»:

նելու Միություն, բայց վերջինս տվեց անձնական նամակ Բեռլինում Խորհրդային լիազոր–հավատարմատար Կրեստինսկու անունով՝ Մոսկվա ուղարկելու միջնորդության խնդրանքով:

1922 թ. աշնանը ես մեկնեցի Բեռլին՝ ունենալով դաշնակցական անձնագիր և որպես վանեցի, քանի որ Պատրիարքից թուղթ էի ստացել որպես վանեցի:

6. Գալով Բեռլին՝ ես մնացի մի քանի օր: Կանգ առա Ունտեր Դեն Լինդմում, ապրեցի մոտ երկու շաբաթ: Դիմեցի Խորհրդային դեսպանորդ ընկ. Կրեստինսկուն՝ ինձ Մոսկվա ուղարկելու խնդրանքով: Լիազոր հավատարմատարը ինձ խորհուրդ տվեց գնալ Վարշավա՝ ընկ. Կարախանի[103] մոտ, որտեղ հեշտ կլիներ մեկնելու իրավունք ձեռք բերել, քանզի անհրաժեշտ էր ՍՍՀՄ Կենտգործկոմի թույլտվությունը:

Դեսպանատանը ես հանդիպեցի Էսէռ Սաքո Սահակյանին[104], ում մոտ եղա երեք թե չորս անգամ՝ որպես համերկրացի գորիսեցի: Նա ընտանիքով ապրում էր Բեռլինում:

7. 1922 թ. դեկտեմբերի սկզբին ես մեկնեցի Վարշավա, կանգ առա սկզբում՝ Վսպուլնի փողոցի հ. տանը՝ պանսիոնում[105]: Երկու օրից հետո, դիմեցի լիազոր հավատարմատար Օբոլենսկուն, որը հարցուփորձ արեց ինձ՝ ՍՍՀՄ մեկնելու նպատակների և պատճառների մասին[106], և

---

[103] Կարախան Լևոն Միքայելի (1889–1937). դիվանագետ: 1921–1923 թթ. եղել է ՌՍՖՍՀ լիազոր ներկայացուցիչը Լեհաստանում:

[104] Սահակյան Սաքո (Սեմյոն) Սարգիսի (1884–1937). տնտեսագետ, Անդրկովկասի էսէռների առաջնորդը: Եղել է Անդրկովկասյան Սեյմի Էսէռական ֆրակցիայի 4 հայ պատգամավորների խմբում, ՀՀ Երկրորդ խորհրդարանի անդամ (1919 թ. նոյեմբերին չվերադառնալու պատճառով նրան փոխարինել է Վահան Մինախորյանը):

[105] Հարցաքննության ժամանակ տալիս է նաև անունը՝ «Վսպուլնիյ փողոցում, կարծեմ Ստախովիչի մասնավոր պանսիոնում»:

[106] Նման բացատրական Խ. Մալինցյանը տալիս է նաև ԽՍՀՄ ԱԳ կոմիսարին ուղղված խնդրագրում. «Հայտնում եմ, որ 1916 թ. ապրիլից մինչև 1917 թ. դեկտեմբերի 27–ը ծառայել եմ Հայկական հրաձգային գնդում՝ Կովկասյան ճակատում: 1918 թ. հունվարին նշանակվել եմ Ելիզավետապոլի նահանգի Զանգեզուրի գումարտակի հրամանատար, ուր ժամանել եմ 1918 թ. մայիսի 26–ին: Գտնվելով Զանգեզուրում՝ կարևոր և նշանակալից դեր եմ խաղացել ինչպես վարչական, այնպես և զինվորական ասպարեզներում՝ ունենալով մի շարք փայլուն մարտեր նախկին Ադրբեջանի մուսաֆաթիստական հանրապետության զորքերի դեմ, տարբեր ժամանակներում լինելով գլխավոր հրամանա-

թե ինչու եմ ես հայտնվել Փարիզում և Եվրոպայում:

Ես բացատրեցի բոլոր պատճառները՝ ցույց տալով դաշնակների «Արտակարգ դատարանի» դատավճիռը, տվեցի դիմում ՍՍՀՄ Կենտգործկոմի անունով՝ նշելով Էրիվանից մի շարք պատասխանատու կոմունիստ ընկերների, ինչպես՝ Ե. Բակունցի, Հ. Տատյանի[107], Ա. Կարինյանի[108] և Հայաստանում ուրիշների. և որքան հիշում եմ, տվեցի անուններ նաև Հայ ՊՔՎ–ից:

Այդ ընթացքում դեսպանատունը Վարշավայում ինձ մի շարք գաղտ-

տար, գավառային միլիցիայի պետ, պարետ՝ մինչև 1920 թ. մայիսի 29–ը: 1920 թ. մայիսի 29–ին, երբ ռուսական կարմիր բանակը առաջացավ դեպի Անդրկովկասի խորքերը, ես համարվում էի համակիր և մոլի պաշտպան կոմկուսի ընկերներին: Բազմիցս փրկել էի նանց տանջանքներից, գնդակահարությունից և կախաղանից: Իմ մի գրավոր կարգադրությունը Բռնակոթի ապստամբներին, որպեսզի հեղաշրջում կատարեն հօգուտ սով. իշխանության, նախկին իշխանության պաշտոնյաների կողմից ճանապարհին բռնվեց: 1920 թ. մայիսի 29–ին ես ձերբակալվեցի ու շտապ ուղարկվեցի Երևան և հանձնվեցի ՀՀ արտակարգ դատարանին: Մինչև 1920 թ. հուլիսի 24–ը ամբողջ ժամանակ կալանքի տակ էի Երևանի ռազմական բանտում ուրիշ սպաների և կուսակցական ընկերների հետ: 1920 թ. հուլիսի 24–ին տեղի ունեցավ դատավարությունը: Ի շնորհիվ մի շարք հանգամանքների՝ պառլամենտի որոշ անդամներ հաշվի առան իմ մեծ ծառայությունը Զանգեզուրում, հատկապես 1919 թ. նոյեմբեր ամսի կռիվները, ուր ջախջախվեց Ադրբեջանի բանակը և Կովկասի արտակարգ կոմիսար Լեգրանի պահանջով ես ազատ արձակվեցի, բայց առանց Հայաստանի սահմաններում ապրելու իրավունքի: Ես արտաքսվեցի Վրաստանի վրայով Կ. Պոլիս: Երկար քաշքշուքից հետո, որպես Վան քաղաքի հայ, հաջողվեց մեկնել Փարիզ, իսկ ավելի ուշ՝ Վարշավա: Կալանքի ժամանակ ինձ հետ էին 4–րդ գնդի սպաներ Մելիք–Դադայանցը, Գրիգոր Պայթունցը, Գրիգորյանցը և ուրիշներ: Հայտնելով վերոշարադրյալը՝ խնդրում եմ ԱԳ կոմիսարիատին չմերժել ինձ վերադառնալու Սով. Ռուսիա և պնդում եմ, որ ես ունեմ դրա անուրանալի իրավունքը և ուստի համոզված եմ, որ որպես լավագույն կազմակերպիչ և զինվորական, որն ունի մեծ և փառավոր ռազմական փորձ, որը լավագույնս ապացուցել է մարտադաշտում, կարող եմ իմ երիտասարդ տարիները տալ թանկագին հեղափոխությանը և հանձինս ինձ կգտնեք ազնիվ աշխատողի: Հավելյալ ներկայացվում է Հայաստանի արտակարգ դատարանի դատավճռի պատճեն, անձնագրի երկու պատճենները: Զանգեզուրի զինված ուժերի նախկին գլխավոր հրամանատար՝ գնդապետ Խաչատուր Մալինցյան, 1–ը հուլիսի, 1922 թ., ք. Վարշավա» (ՀԱԱ, ֆ. 1191, ց. 16, գ. 1923, թ. 89):

[107] Տատյան Հայրապետ Գալուստի (1896, Գորիս–1937, Մոսկվա). ԽՄԿԿ անդամ 1917 թ., կուսակցական–պետական աշխատող:

[108] Կարինյան (Գաբրիելյան) Արտաշես Բալասիի (1886–1982). 1918 թ. Բաքվի կոմունայի արդարադատության կոմիսար, կուսակցական–պետական գործիչ, գրականագետ, պատմաբան:

նի հանձնարարություններ տվեց և ես աշխատեցի «Լուսին» ծածկանունով: Ես ստիպված էի վերաբնակվել Վարշավայի մոտիկ Վոլոշինում, որտեղ շարունակեցի աշխատել՝ պարզելու, թե վրաց քաղաքացիներից ովքեր են ընդունվել Լեհական Բիդյուշչսկի Ռազմական դպրոցը և հնարավորության դեպքում կապ պահպանել լեհական բանակի մի շարք վրացի սպաների հետ[109]:

Հետագայում զանգվածների առջև իմ ելույթների միջոցով ծանոթություններ հաստատեցի լեհ հասարակության հետ, ուր կային հսկայական քանակով կաթողիկե հայեր, ինչպես Վարշավայում, նույնպես և Լվովի, Ստանիսլավովոյի և Գալիցիայի շրջանում:

1923 թ. փետրվարի 23–ին տեղի ունեցավ իմ առաջին զեկույցը Հայաստանի և նրա քաղաքականության մասին՝ տեսապատկերմամբ:

Չնայած հաջողությունը մեծ էր, բայց իմ հետագա ելույթները Լեհաստանի Ներքին գործերի և արտաքին գործերի նախարարների կողմից արգելվեցին, որոնք ինձնից ստորագրություն վերցրին՝ այլևս ելույթ չունենալ և ինձ կարճ ժամկետ տվին՝ թողնելու Լեհաստանի սահմանները:

Միաժամանակ իմ մոտ խուզարկություն կատարվեց, կանչեցին Ռաձինսկիի ոստիկանական բաժին, ստորագրություն վերցնելով չհեռանալ, մինչև պարզեն իմ ինքնությունը:

Ես դիմեցի հայ կաթողիկե արքեպիսկոպոսին՝ Թեոդորովիչին[110], խնդրելով միջոցներ ձեռնարկել ու աջակցել և վերջինս նամակ գրեց ՆԳ նախարարին, որպես հայի՝ իմ ժամկետը երկարացնել ու չարտաքսել:

Միաժամանակ ես օգնության խնդրանքով դիմեցի Խորհրդային դեսպանատուն՝ հայտնելով իմ հնարավոր արտաքսման մասին:

---

[109] Հարցաքննության ժամանակ նա հայտնում է այդ մասին. «Դեսպանատուն մի քանի այցերից հետո ընկերներից մեկը (ազգանունը չեմ հիշում) ինձ հանձնարարություն տվեց կապվելու վրաց սպաների հետ և պարզելու, թե ինչ ճանապարհով են նրանք փոստը ուղարկում ՍՍՀՄ: Էական ոչինչ ես չկարողացա պարզել և իմ կապն այդ ընկերոջ հետ կտրվեց 1922 թ. մարտ թե ապրիլ ամսին»:

[110] Հովսեփ Թեոֆիլ Թեոդորովիչ (25.08.1864, Ժիվաչև–4.12.1938, Լվով). 1901 թ–ից Լվովի հայ կաթողիկե թեմի վերջին արքեպիսկոպոս: Զբաղվել է ակտիվ հասարակական գործունեությամբ: 1902–1918 թթ. եղել է Ավստրոհունգարական պառլամենտի, 1919–1922 թթ.՝ Լեհաստանի սահմանադիր սեյմի պատգամավոր, 1922–1923 թթ.՝ սենատոր:

Դեսպանատան քարտուղար Լորենցը և հյուպատոս Լիպսկին խոստացան արտաքսման պարագայում ինձ ուղարկել Միություն նույնիսկ առանց իմ մեկնման թույլտվության փաստաթղթերի:

Հուլիսի սկզբներին իմ ելույթները դադարեցվեցին և թույլ չտվին ելույթ ունենալ, ուստի և կնոջս հետ խորհրդային փաստաթղթերով ուղարկվեցի Մոսկվա, սակայն իմ հին անձնագիրը չվերցրին. այն թողեցին ինձ:

Իմ հետագա ելույթներն արգելելուն առիթ ծառայեց այն, որ ես զեկուցմանս մեջ անդրադառնալով Եվրոպական մեծ տերությունների ու Հայկական հարցի փոխառնչություն–ներին՝ ընդհանրապես և մասնավորապես մեծ պատերազմին նրանց մասնակցությանը, որտեղ հայ բուրժուազիայի ու դաշնակների խորին հիմարության հետևանքով պատերազմի նպատակներին հայ ժողովուրդը տվեց 1 500 000 զոհ, որ սպիտակ ձեռնոցներով և ֆրակներով եվրոպական դիվանագետները ստորագրեցին պարտված ժողովուրդների դատավճիռը՝ ոսկյա գրիչը թաթախելով Վերսալյան բարձր ատյանի թանաքամանում:

Մոռացել են, որ նրանք իրենց այդ ստորագրությունը դրել են դժբախտ հայ ժողովրդի կարմիր արյան մեջ թաթախելով և որ իրենց այդ ձեռնոցներն ու ֆրակները արյունոտված են մեր արյունով և այդ արյունը մեր կողմից չի մոռացվելու: Գալու է ժամը, որ փոխհատուցում ենք պահանջելու:

Վարշավայից մեկնեցի 1923 թ. հուլիսի 16–ին: Մոսկվա հասա 1923 թ. հուլիսի 23–ին և կանգ առա Բոլշայա Յամսկայա փողոցում, Հ– տանը՝ «Տվեր» Հյուրանոցում:

Հնարավորություն չունենալով շարունակել հյուրանոցում ապրել՝ ես տեղափոխվեցի իմ հեռավոր ազգականուհի Վարսենիկ Մամուլյանի ամուսնու՝ Ավանես (Հովհաննես) Գևորգովի մոտ՝ Բոլշոյ Նիկինսկի (Պրավդայի) փողոց, շենք 14, բնակարան՝ 44:

Վերջինս բամբակ էր մատակարարում Մոսկվայի Պետկոմբինատին և ինձ առաջարկեց ընդունվել իր մոտ ծառայության՝ որպես Մոսկվայի լիազոր:

Ես համաձայնվեցի և նրա մոտ աշխատեցի մինչև 1924 թ. սեպտեմբերը: Այստեղ ես հանդիպեցի առևտրական դեմքերի՝ խոշոր առևտրա-

կաններ Ժովոտովսկուն, Խաչատուրովին, որոնք Գևորգովից գնում էին Գուսկոմբինատից ստացված ամբողջ ապրանքը, քանի որ Գևորգովը բամբակը հանձնում և փոխարենը ստանում էր բիյազ–գործվածք, այսինքն՝ ապրանքափոխանակություն էր կատարում:

Աշխատանքի մեջ մենք հաճախ էինք տարաձայնություններ և բախումներ ունենում. այդ մարդը շվայտ կյանքով էր ապրում և ես ստիպված էի հեռանալ: Մոսկվայում ես հանդիպեցի զինվորական շրջանակի ընկերների հետ: Իմ գալու սկզբում ես մտադիր էի ընդունվել բանակ: Իմ առաջին ծանոթությունը եղավ ՀՊՔՎ–ի աշխատակիցներ՝ Միրումյան Լևոնի[111] և Միրումյան Միրումի հետ՝ որպես գորիսեցի համերկրացիների, իսկ հետագայում՝ Ռազմական ակադեմիայի կուրսանտների բջջի քարտուղար, համերկրացի Խնձորեսկ գյուղից Գարեգին Ծատուրյանի հետ: Վերջինիս մոտ ծանոթացա նույն ակադեմիայի կուրսանտ Վլադիմիր Ենուկիձեի հետ: Զրույցների ընթացքում նրանց հաղորդակից էի դարձնում իմ իմացած ֆրանսերենին: Ես խնդրեցի նրանց աջակցությունը՝ բանակում ծառայության ընդունվելու համար:

Դեռ սկզբում, երբ այդ ընկերները հետաքրքրվեցին իմ դրությամբ և ես ցույց տվեցի իմ փաստաթղթերը: Նրանք նկատեցին, որ ես «ապահովված եմ» սպիտակգվարդիական գնդապետի փաստաթղթերով և ինձ բացատրեցին, որ դրությունս շատ վատ է, որ սպիտակգվարդիական համարվում են բոլոր նրանք, ովքեր Սպիտակ բանակի շարքերում մարտնչել են խորհրդային իշխանության դեմ, սակայն ես՝ որպես դաշնակների կողմից դատված և արտաքսված անձ՝ չպիտի պատկանեմ այդպիսի հաշվառման և պետք է, որ ինչքան հնարավոր է շուտ դուրս գամ այդ կարգավիճակից:

Ես ծանոթացա Գայի[112] հետ և խնդրեցի նրա օգնությունը: Գայը նշեց,

---

[111] Լևոն Գալուստի Միրումյան, Համկ(բ)կ անդամ, հիշյալ ժամանակ, ըստ Մալինցյանի լրացուցիչ ցուցմունքների (ՀԱԱ, ֆ. 1191, ց. 16, գ. 1923, թ. 108), եղել է ՀՊՔՎ–ի տնտեսական բաժնի աշխատակից, որին, թեպետ նա եղել է Գորիս քաղաքից, սակայն ինքը նախկինում չի ճանաչել և ծանոթացել է Գևորգովի միջոցով:

[112] Հայկ Բժշկյանց (1887–1937). ծնվել է Թավրիզում: 1914 թ–ից 6–րդ կամավորական ջոկատի հեծյալ վաշտի, ապա ջոկատի հրամանատար: Կարմիր բանակի «երկաթյա դիվիզիայի» հրամանատար, 1922–23 թթ.՝ ՀԽՍՀ ռազմական ժողկոմ: Բռնադատվել է:

որ տվյալ պարագայում օգնել կարող են միայն քաղաքացիական իշխանությունները: Եվ պատահականորեն իմանալով, որ Սահակ Տեր–Գաբրիելյանը[113], Երեմ Բակունցը, Սաքո Համբարձումյանը[114] եկել են Մոսկվա, ես անմիջապես դիմեցի նրանց՝ փաստաթղթերս ցույց տալով նրանց: Նրանք նույնպես ընդունեցին, որ, ըստ երևույթին, ես պարզապես թյուրիմացաբար եմ ընկել ՀՊՔՎ–ի հատուկ հաշվառման մեջ և առաջարկեցին դիմել ՍՍՀՄ Կենտգործկոմ, ՀՊՔՎ–ի նախագահին և ՀայՊՔՎ–ին՝ ներկայացնելով կենսագրությունս, թե որտեղ եմ մասնակցել մարտական գործողությունների, այդ մարտական գործողությունների նկարագրությունը, թե ինչպես եմ ձերբակալվել, երբ և ում կողմից եմ արտաքսվել և որից հետո միայն կարելի է մտածել իմ հետագա ծառայության մասին:

Ես անմիջապես դիմում տվեցի վերոհիշյալ հաստատություններին՝ մատնանշելով զինվորական և քաղաքացիական գծով ինձ ճանաչող մի շարք պատասխանատու ընկերների՝ ինչպես Անդրկովկասում, այնպես էլ Մոսկվայում:

Միաժամանակ, ընկ. Ս. Տեր–Գաբրիելյանի, ՀՊՔՎ–ի անդամի հետ անձնական խոսակցությունից և կոնկրետ մի շարք դեպքերի հաստատումից հետո, երբ դեռ այն ժամանակ ընկ. Ս. Տեր–Գաբրիելյանը Անդրկովկասյան կառավարության ներկայացուցչի անունից պաշտոնապես գրեց ՀՊՔՎ–ին՝ նկարագրելով իմ անձը, իմ աշխատանքը Անդրկովկասում 1905–1909 թթ. օրերին և դաշնակների ժամանակ և որ ես՝ որպես Անդրկովկասում խորհրդային իշխանության վերահաստատման եռանդուն պաշտպան, դաշնակների դեմ պայքարելու համար ձերբակալվել եմ, դատվել և որպես վտանգավոր տարր արտաքսվել եմ վտարանդիություն:

Դիմում տալուց հետո ես ոչ մի կերպ չկարողացա ծառայության ընդունվել, քանզի փաստաթղթերս խիստ կասկածելի էին այդ հաստատությունների համար և ես ստիպված էի ընդունվել «Մոսկովյան Արևե-

---

[113] Տեր–Գաբրիելյան Սահակ Միրզայի (1886, Շուշի–1937). 1928–1935 թթ. եղել է ՀՍՍՀ Ժողկոմխորհի նախագահ:

[114] Համբարձումյան Սարգիս Իսահակի (1870, Շուշի–1944, Մոսկվա). 1922–25 թթ.՝ ՀՍՍՀ ԿԳԿ, 1925–28 թթ.՝ Ժողկոմխորհի նախագահ:

լյան փոխատվական ընկերություն» հաշվետարի պաշտոնով: Բայց բանվորական կոմիտեի (բանկոմ) շնորհիվ «Միության» անդամ չլինելուս պատճառով ինձ հանեցի աշխատանքից:

Նորից դիմեցի ընկ. Ս. Տեր–Գաբրիելյանին՝ ծառայության ընդունվելու կամ միջնորդություն ներկայացնելու՝ ինձ Հայաստան վերադարձնալու խնդրանքով, քանզի ես Մոսկվայից դուրս մեկնելու թույտվություն չունեի:

Ինչպես հիշում եմ, ընկ. Ս. Տեր–Գաբրիելյանը նորից գրեց ՀՊՔՎ–ին և Սոկոլնիկի շրջանի «Միությանը»՝ խնդրելով թողնել ինձ՝ վտարանդուս բանկում ծառայության, բայց «Միությունը» չթողեց և ես դեռ երկար ժամանակ մնացի առանց ծառայության:

Ժամանակ առ ժամանակ ես գործ էի վերցնում փեսա Գևորգովից կամ ինչ–որ բան էի վաճառում:

Այդ ժամանակ ես ապրում էի Մերձմոսկովյան Կունցևոյում: Մոտավորապես երեք ամիսներ ես բանկի նախագահ Նարիման Լևոնյանի երաշխավորությամբ ընդունվեցի առևտրական Ղազանչյանի մոտ ծառայության, որը Բոլոտնոյի կողմերում տանձի և խնձորի մեծածախ առևտրով էր զբաղվում: Նրա առևտուրը փակվեց և ես նորից մնացի առանց աշխատանքի:

Գտնվելով խորը վիատության մեջ, ՀՊՔՎ–ին, ՍՍՀՄ ԿԳԿ–ին, ՀՍՍՀ ԿԳԿ–ին, ՍՍՀՄ կառավարությանը ուղղված իմ արդեն կրկնակի դիմումների պատասխանն էլ չստանալով՝ որոշեցի անմիջականորեն խոսել Կենտգործկոմի նախագահ ընկ. Կալինինի[115] հետ:

Առաջին օրը մեծ հերթի պատճառով ինձ չհաջողվեց ընկնել նրա մոտ և պարետը առաջարկեց ուրիշ խնդրատուների հետ հավասար հերթական համար վերցնել և նախազգուշացրեց, որ հերթը հասնելու է 7–10 օրից:

Մի քանի օր հետո ես մոտեցա պարետին և ֆրանսերեն լեզվով խոսակցությունը վարելով՝ խնդրեցի հանդիպում Կալինինի հետ: Եվ նույն օրը՝ մի ժամ անց, ինձ թողեցին նրա մոտ՝ Նեգլիննիյ փողոցի վրա:

Խոսակցության սկզբում ես նկարագրեցի կացությունս, կենսագրությունս, իմ թափառումները, հատուկ հաշվառումը, միջնորդությունը և

---

[115] Կալինին Մ. Ի. (1875–1946). 1919 թ–ից՝ ՀամԿԳԿ, 1938–46 թթ.՝ ԽՍՀՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ:

հատուկ հաշվառման մեջ անարդար դրությունը, խնդրեցի իմ քաղաքացիական իրավունքների վերականգնման համար շտապ միջոցներ ձեռնարկել, քանի որ ես ոչ թե խորհրդային իշխանության հակառակորդ եմ, այլ ընդհակառակը՝ պաշտպան, բայց զուրկ մի շարք ընկերների աջակցությունից:

Կենտգործկոմի նախագահ ընկ. Կալինինը բացատրեց իմ այդ վիճակի պատճառները, որ Խորհրդային իշխանությունը ստիպված է շատ զգույշ լինել այն անձանց նկատմամբ, որոնք վերադարձել են արտասահմանից: Սակայն, քանի որ ես մատնանշել էի Մոսկվայի և Հայաստանի մի շարք ընկերների անուններ, ինքը՝ Կալինինը միջոցներ կձեռնարկի ճշմարտությունը հաստատելու համար:

Ընկ. Կալինինը իմ ներկայությամբ իմ մասին հեռախոսով խոսեց Ֆելիքս Էդմոնդովիչ Ձերժինսկու[116] հետ՝ խնդրելով միջոցներ ձեռնարկել պարզելու իմ անձը ու տեղեկացնել իրեն դրությունը:

1925 թ. սեպտեմբերի 19–ին ես կանչվեցի ՀՊՔՎ՝ Լյուբյանկա՝ ընկ. Ձերժինսկու մոտ և մեր զրույցում մանրամասն բացատրություն տվեցի իմ անձի, Եվրոպա գնալու առիթի, վերադարձի և Խորհրդային Միությունում աշխատելուս հետագա հեռանկարների մասին: Ընկեր Ձերժինսկին ինձ մի շարք հարցեր տվեց Խորհրդային բանակում ազգային հարաբերությունների վերաբերյալ իմ քաղաքական պլատֆորմի մասին:

Երբ շարադրեցի այդ պահերը, ընկ. Ձերժինսկին խոստացավ հնարավորինս շտապ պարզել իմ վիճակը:

Որոշ ժամանակ անց, ՀՊՔՎ–ի և ՀՍՍՀ Կենտգործկոմի միջոցով պաշտոնապես հայտնեցին հատուկ հաշվառումից ինձ հանելու, իմ իրավունքները վերականգնելու և ինչպես Հայաստան, այնպես էլ Միության այլ քաղաքներ մեկնելու թույլտվության մասին:

1926 թ. հունվար ամսին ես մեկնեցի Հայաստան:

Մոսկվայում ապրելու օրերին հայ կամ ռուս հասարակության ուրիշ խավերի հետ բացարձակ կապված չեմ եղել և չեմ շփվել ոչ մի ուրիշ կազմակերպության կամ թեկուզ անձանց հետ: Իմ աշխատանքը ընթա-

---

[116] Ձերժինսկի Ֆ. Է. (1877–1926). 1917 թ–ից Համառուսաստանյան արտակարգ հանձնաժողովի (ՎՉԿ) նախագահ:

ցել է միայն Գևորգովի մոտ, 2 ամիս բանկում, 3 ամիս Ղազանչյանի մոտ: Շրջապատը, որոնց հանդիպել եմ, դրանք մեծ մասամբ Մոսկվայի կոմունիստներ էին, որոնց ես նշեցի և որոշ դեպքերում՝ Անդրկովկասից եկածներ, նույնպես կոմունիստներ, ինչպես Ղարաբաղի Կենտգործկոմի նախագահ Կարակոզովի[117], Զանգեզուրի գործկոմի նախագահ Հարություն Բագրատյանի, ներկայումս ՀՍՍՀ հողժողկոմի նախագահ ընկ. Ա. Կարինյանի, Պռոշյանի, Բակունցի, Համբարձումյանի և ուրիշների հետ՝ հաշվառման հարցով: Եվ մի անգամ էլ հանդիպել եմ Հայկական դիվիզիայի զինկոմ ընկ. Գ. Սաֆրազբեկովի[118] հետ զինվորական ծառայության մեջ իմ մտնելու և ընդհանրապես որպես նախկին զինվորական աշխատողի իմ հեռանկարների հարցով, որի մասին այդ ընկերները ընդհանրապես ունեին լավ կարծիքներ և նրանք այդ ներկայացրին Հայ ՊՔՎ–ին:

Ընդհանրապես, որքան հիշում եմ, Մոսկվա գալու և այնտեղից մեկնելու ընթացքում, արտասահմանի հետ նամակագրություն չեմ ունեցել՝ ոչ մի կազմակերպության հետ, նույնիսկ իմ ծնողների[119] հետ, թեպետ

---

[117] Ղարագյոզյան Արմենակ Մկրտչի (1890–1937). հայրը Խնձորեսկ գյուղից էր, Հնչակյան կուսակցության ակտիվ անդամ, ընտանիքով վերաբնակվել էր Գորիսում: 1917 թ. ավարտել է Պետրոգրադի համալսարանը, մենշևիկից դարձել բոլշևիկ, վերադարձել Գորիս և սկսել կուսակցական աշխատանքը: 1917–20 թթ. եղել է Զանգեզուրի բոլշևիկյան կազմակերպության ղեկավարներից: Ադրբեջանի խորհրդայնացումից հետո նշանակվել է 11–րդ Կարմիր բանակի Ղարաբաղ–Զանգեզուրի գործերի ժամանակավոր արտակարգ լիազոր: 1918 թ. հոկտեմբերի 11–ին Շուշիից եկած պատվիրակների կողմից Ադրբեջանին ենթարկվելու առաջարկը քննելու համար Գորիսում հրավիրված ժողովում «խաղաղության», այսինքն՝ Զանգեզուրը թուրքերին ենթարկելու ակտիվ կողմնակիցներից էր: Հենց նրա գլխավորությամբ Ղարաղշլաղ գյուղի անասունների ձմեռնոցում՝ Ծակերի քարայրում, բոլշևիկները գնդացրով գազանաբար կոտորեցին բանտարկված դաշնակցական, ազգային համարվող մոտ 65–78 հոգու: 1922 թ–ից՝ ԼՂԻՄ–ի Ժողկոմխորհի նախագահ:

[118] Սաֆրազբեկյան Գևորգ Մադաթի (1900–1937). Բռնակոթի իշխան Մելիք–Սաֆրազբեկյանների իշխանական տոհմից: 1926–1928 թթ.՝ Հայկական դիվիզիայի կոմիսար, 1932–1937 թթ. պատասխանատու պաշտոններ է վարել Կարմիր բանակի Գլխավոր քաղվարչությունում: Բռնադատվել է:

[119] Ըստ Խաչատուրի եղբայր Ավանեսի թոռ Սամվել Արսենի Մալինցյանի՝ Հին Գորիս գյուղի գերեզմանատանը պահպանվում է Խաչատուրի ծնողների տապանաքարը, որի մի երեսին գրված է. «Հարություն Հասրաթի Մալունց, մահացել է 1909 թ.», իսկ հակա-

նրանք հաճախ էին դժգոհում իմ կողմից այդպիսի վերաբերմունքի համար և դա հնարավոր է գտնվեն նամակներում, որոնք ստացվել են կնոջս կողմից:

Ես Մոսկվայում ապրել եմ առանց դուրս գալու, միայն մեկ անգամ՝ դեռևս 1924 թվին, ծառայության գործերով մեկնեցի Գուս–Խրուսնի՝ Պետկոմբինատին բամբակ հանձնելու:

Ընկերների վերաբերմունքը իմ հանդեպ շատ վայելուչ էր և իմ իրավունքները վերականգնելուն և զինվորական ծառայության անցնելուն հաճախ էին աջակցում:

8. Մասնավոր այցելություններ եմ արել Լևոն Միրումյանին, նրա հարազատ մորն ու քրոջը, որտեղ հանդիպել եմ Ե. Բակունցի հետ:

Անձնական առևտրով և այլ զբաղմունքներով երբեք չեմ զբաղվել: Խ. Միությունում երբեք ձերբակալված կամ դատված չեմ եղել:

1925 թ. հաշվառումից հանելուց հետո ես ցանկացա ընդունվել կուսակցության մեջ՝ կարծելով, որ ընկերները աջակցություն ցույց կտան, բայց ամենից մեծ հակառակորդներից մեկը հանդիսացավ Երեմ Բակունցը, երբ իմացավ, որ ես ցանկանում եմ բարձրացնել Զանգեզուրում 1918 թ. սեպտեմբերի բանակցությունների հարցը, երբ դաշնակները ստեղծել էին գնդապետ Մելիք–Շահնազարովի դիկտատուրան[120]՝ օգ-

ռակ կողմում գրված է. «Հերիքնազ Խուրշուդի Մալունց, մահացել է 1912 թ.»:

[120] Զանգեզուրի Ազգային խորհուրդը, 1918 թ. սեպտեմբերի 17–ին քննարկելով ստեղծված իրադրությունը, գավառում հայտարարեց պաշարողական դրություն և զինվորական դիկտատոր նշանակեց գնդապետ Մ. Հ. Մելիք–Շահնազարյանին, ով սեպտեմբերի 18–ի առաջին հրամանում իր օգնականներ է նշանակում կապիտան Յ. Ռ. Բորտին և Սաքո–Յապոնին: Հ. Սիմոնյանը իր «Անդրանիկի ժամանակը» գրքում դա բացատրում է թուրքերի կողմից Բերդաձորի (Ղարաղշլաղի) հայկական գյուղերը գրավելուց հետո Զանգեզուրի վրա թուրքական հարձակման սպառնալիքով: Սակայն լուրջ վտանգ էր նաև Գորիսի բնակչության մի մասի, այդ թվում՝ նաև Զանգեզուրի Ազգային խորհրդի որոշ անդամների՝ Ադրբեջանին ենթարկվելու պարտվողական տրամադրությունը:

նականներ Յապոն–Սաքոյի[121], կապիտան Բորտի[122] հետ, հենց այդ ժամանակ պիտի իրականացվեին մի շարք ռազմական գործողություններ Զանգեզուրում, գեներալ Անդրանիկի ժամանումը և Սիսիանում Աղուդի–Վաղուդիի կիրճում մարտական գործողության արագացումը:

Երբ Գորիսի գիմնազիայի նոր շենքում իմ քաղաքական զեկույցի միջոցով ես դրեցի այդ հարցը, առաջարկեցի հեղաշրջում կազմակերպել, որտեղ պիտի տեղի ունենար Ազգային Խորհրդի անդամների ձերբակալումը և իշխանության անցումը բոլշևիկներին:

Սակայն դաշնակները, այդ մասին իմանալով, ստեղծում են այդ եռյակի դիկտատուրան, պոկում են իրադարձությունների առթիվ ժամը 9–ի իմ զեկույցի հայտարարությունը և հենց գիշերը նախազգուշական միջոցներ են ձեռնարկում: Գնդապետ Մ. Մելիք–Շահնազարովը, որն այդ ժամանակ կենում էր իր ազգական Տիգրան Մելիք–Շահնազարովի[123]

---

[121] Սաքո–Յապոն կամ Յապոնացի (Համբարձում Պետրոսի Սարգիսջանյան՝ 1878–1920). ծնվել է Հին Գորիս գյուղում: Զանգեզուրում ՀՅԴ հիմնադիրներից է: 1903 թ. կազմակերպում է բողոքի ցույցեր ընդդեմ Հայ եկեղեցու ունեցվածքի բռնագրավման, և Գորիս եկած «Եկեղեցական կալվածքները ցուցակագրող հանձնաժողովին» հետ են վերադարձնում Շուշի և Գանձակ: 1905–1906 թթ. ակտիվ մասնակցել է ինքնապաշտպանության կազմակերպմանը Ղարաբաղում, Ղափանում և Զանգեզուրի այլ շրջաններում: Կատարել է հայերի կոտորածների պատասխանատու ռուս չինովնիկների ահաբեկումներ: 1908 թ. ձերբակալվում է և Լիժինի տխրահռչակ դատավարության ժամանակ (թիվ 129 մեղադրյալն էր) դատապարտվում տաժանակիր աքսորի (ՀԱԱ, ֆ. 1457, ց. 3, գ. 4, էջ 3447–3448), որից ազատվում է միայն 1917 թ.: Վերադառնալով հայրենիք՝ մինչև իր եղեռական մահը կրկին զինվորագրվում է Սյունիքի ինքնապաշտպանությանը: 1917 թ. ընդգրկված է եղել Ռուսաստանի սահմանադիր ժողովի ընտրությունների ՀՅԴ–ի 18–հոգանոց թեկնածուների ցուցակում: Զանգեզուրի Ազգային խորհրդի կողմից ընտրված զինվորական դիկտատոր գնդապետ Մ. Մելիք–Շահնազարյանը նշանակել է օգնական: 1920 թ. նոյեմբերին դաժանաբար սպանվել է բոլշևիկների կողմից Գորիսի բանտում («Դրոշակ», 1927, թ. 10):

[122] Բորտ Յակով Ռոմանովիչ. Անդրանիկի «Հայկական Առանձին Հարվածող Զորամասի» 1–ին գումարտակի հրամանատար: Միայն 1918 թ. աշնանը՝ թուրքական զորքերի նահանջից հետո, Անդրանիկից բաժանվելով՝ մեկնել է Երևան: Ռուսալեզու թերթերում անաչառ ներակայացրել է այդ շրջանի դեպքերը:

[123] Տիգրան Մելիք–Շահնազարյանի մասին Հովակ Ստեփանյանը հիշատակում է («Հայրենիք», 1935, փետրվար, էջ 96) մեկ որպես «շրջանի կոմիսար», մեկ՝ «Գորիսի Ազգային Խորհրդի պատգամավոր» («Հայրենիք», 1935, փետրվար, էջ 97): 1920 թ. եղել է Զանգեզուրի անտառապետը (ՀԱԱ, ֆ. 525, ց. 2, գ.50, թ.1): Տեսնելով Զանգեզուր

մոտ, նույնիսկ զինվորներից պահանջում է մարտական պատրաստվածություն և խնդրում, իր մոտ՝ տուն ուղարկել 2 ժուպկա փամփուշտներ՝ եթե պաշտպանվելու կարիք լինի:

Եվ դա քաջ հայտնի էր Մկրտիչ Մաշուրյանին[124], Քրիստափոր Մկրտչյանին, Միրում Միրումովին և որքան հիշում եմ նույնիսկ Մուշեղ Օհանովին, որոնք հենց այն ժամանակ խոսում էին Մելիք–Շահնազարովի գիշերային հեղաշրջման և ցեյգհաուզից փամփուշտների ստացման մասին:

Այդ ձախողման օրը, երբ ինձ թույլ չտվին ելույթ ունենալ, ես ժողով արեցի Միրում Միրումովի տանը, որտեղ էին Քրիստափորը, Արսեն Կարունցը[125], Մկրտիչ Մաշուրյանը և ուրիշներ ու շարադրեցի ձախողման հանգամանքները և կարգադրեցի գյուղերի իմ կողմնակիցներին ելույթ չունենալ:

Ահա այդ նկատառումներից առաջացավ մի մթնոլորտ, որտեղ ինձ համար անհնար էր խոսել կուսակցության մեջ իմ ընդունվելու մասին:

Վաղուդիի ռազմական գործողությունը տեղի ունեցավ Ե. Բակունցի օրհնանքով, ինչպես և Շուռնուխի ռազմական գործողությունը՝ 1920 թվին, երբ նա Ազգային Խորհրդի անդամ էր: Իսկ ես այդ գործողություններին չմասնակցեցի՝ համարելով դա հալածանք:

Իսկ 1919 թ. հունիսի 12–ին, հենց ռազմական գործողությունների օրերին, երբ ես որպես գլխավոր հրամանատար, Տեղ գյուղից մեկնեցի Խնձորեսկ՝ հաղթանակի հանդիսությանը մասնակցելու, Երեմ Բակունցը, որը նշանակված էր Խնձորեսկում հաղթահանդեսը անձամբ կազմակերպելու և ճակատի համար, այդ օրը ինձ դիմավորեց հոգևո-

---

մտած միացյալ թուրք–բոլշևիկյան զորքի վայրագությունները հայ խաղաղ բնակչության հանդեպ՝ ինքնասպան է եղել:

[124] Մկրտիչ (Մակիչ) Մանուչարի Մաշուրյան. ծնվել է Գորիսում 1897 թ.: Եղել է Զանգեզուրի բոլշևիկյան կազմակերպության ղեկավարներից: Մասնակցել է 1920 թ. սեպտեմբերին Բաքվում Հայկոմկուսի կազմակերպությունների կոնֆերանսին: 1920 թ. ամռանը՝ բոլշևիկների կողմից Զանգեզուրի առաջին գրավման ժամանակ, Գորիսի միլպետն էր: Սպանվել է 1920 թ. նոյեմբերի 20–ին: Նրա կերպարն է իբր հանդիսացել «Զանգեզուր» ֆիլմի Մակիչի նախատիպը:

[125] Կարունց Արսեն Ասրիի (1894, Գորիս–1944). կոմկուսի անդամ 1920 թ. մայիսից: Քաղաքացիական կռիվների մասնակից, վարել է տարբեր տնտեսական, վարչական պաշտոններ Գորիսում:

ռականների շքախմբի հետ՝ մաղթանքներով, օրհնաբանությամբ և մեծ ճառով՝ Զանգեզուրի պաշտպանության, ադրբեջանական մուսաֆաթիստների դեմ իմ տարած վերջնական հաղթանակի գովքով: Սակայն նույնիսկ այդ գործում, նա մեծ թշնամի դուրս եկավ, չնայած, իհարկե, ես ժամանակին գրեցի ուր որ հարկն էր, որի համար և հիմա ես հանդիպում եմ Ե. Բակունցի ամենայն հակազդեցությանը՝ ինչպես զինվորական, նույնպես և քաղաքացիական գծով:

9. Վերադառնում եմ Հայաստան, տեղ եմ հասնում 1926 թ. հունվարին: Դիմում եմ ընկ. Ե. Բակունցին, վերջինս ինձ աշխատանքի է ուղարկում ՆԳԺԿ՝ խնդրելով ինձ գործ տալ վարչապարատում: ՆԳ ժողկոմ Դուրգարյանը սկզբում ինձ առաջարկեց թարգմանչի գործ՝ կոմիսարիատում, մինչև միլիցիայում տեղի բացվելը: Իսկ հետագայում, երբ իմացան, որ ես հաշվապահ եմ, ինձ նշանակեցին հաշվետար:

Սեպտեմբերին Բասարգեչարում նոր շինարարությունների կարգավորման նպատակով ինձ առաջարկեցին մեկնել այնտեղ, բայց չուզեցին բավարարել հոդված 82–ի պայմանները, որի պատճառով էլ ես հրաժարվեցի Բասարգեչար մեկնելուց:

Ընդունվեցի Գյուղատնտեսական բանկ հսկիչի ժամանակավոր պաշտոնի և ծառայեցի մինչև 1927 թ. հունվարի 1–ը: Այստեղ ծանոթացա Ռուբեն Սաֆրազբեկովի հետ, իսկ ՆԳԺԿ–ում ոչ մեկին չգիտեի:

Տատյանի հանձնարարականով ընդունվեցի Արազդայանի[126] տոհմային տնտեսություն՝ ավագ հաշվետարի պաշտոնով ու ծառայեցի մինչև 1927 թ. մայիսի 27–ը և գյուղատնտեսության աշխատանքների դադարեցման հետևանքով ես ազատվեցի ծառայությունից:

Գալով Երևան՝ Աշխատանքի Բիրժան Հանրապետական հանձնաժողովի միջոցով ինձ ուղարկեց Երևանի քաղգործկոմ՝ հաշվապահի պաշտոնով, ուր ես աշխատեցի մինչև հոկտեմբերի 10–15–ը: Եվ քանի որ աշխատանքը բյուջետային էր, իսկ ես՝ արտադրության բնագավառի աշխատող էի, խնդրեցի ինձ ազատել:

Գործկոմի աշխատանքից ազատվելով՝ մինչև 1928 թ. փետրվարը ես մնացի անգործ:

---

[126] Այժմ՝ ՀՀ Արարատի մարզի Երասխ ավանը:

Բազմիցս դիմեցի Տարածքային կառավարման պետ Ստալինին՝ խնդրելով ինձ ծառայության ընդունել, բայց վերջինս պնդեց ու հավաստիացրեց, որ Հանրապետական հանձնաժողովը պետապարատում նախ և առաջ տեղավորում է զորացրվածներից և հետո միայն 1–ին կարգի պահեստայիններից, իսկ հնարավորության դեպքում՝ պահեստից ուրիշների ևս:

Այդ պահին իմանալով, որ ես իբր 1–ին կարգի չեմ, տուն եկա և պարզեցի, որ ես գտնվում եմ 3–րդ կարգի պահուստում, որը քաղաքականապես վտանգավոր կարգ էր: Ես դիմեցի Հեղ. ռազմ. խորհուրդ՝ խնդրելով տեղափոխել ինձ 1–ին կարգ, որն արվեց 1929 թ. մայիս ամսին:

Մինչ այդ աշխատանքի բիրժայի միջոցով ինձ հաջողվեց հաշվապահի պաշտոնով՝ ամսեկան 120 ռուբլի ռոճիկով, ծառայության մտնել «ЗакВоенПО», ուր աշխատեցի 1928 թ. մարտի 5–ից մինչև մայիսի 24–ը: Իմ աշխատավարձը կրճատեցին 20 ռուբլով, որի համար ես ծանր խոսակցություն ունեցա վարիչ Էրմանի հետ, որն ինձ անվանեց դաշնակ և ես այդ հարցը բողոքարկեցի Զինկոմին ու Հայ ՊՔՎ–ի Հատուկ բաժնին՝ խնդրելով միջոցներ ձեռնարկել՝ ինձ ազատել «ЗакВоенПО»–ի իմ աշխատանքից:

Հետո ես աշխատանքի բիրժայի միջնորդությամբ ուղարկվեցի աշխատանքի «Սևան–Երևանի սառնարանային տնտեսություն»՝ հաշվապահի պաշտոնով, որտեղ աշխատեցի մինչև նոյեմբերի 1–ը և աշխատանքը ավարտելուց և հանձնելուց հետո 1929 թ. նոյեմբերի 1–ից ես կրճատվում եմ:

1929 թ. դեկտեմբերի 10–ին հաշվապահի պաշտոնով ընդունվում եմ Պետթատրոն, ուր աշխատում եմ մինչև 1930 թ. նոյեմբերի 12–ը և հեռանում եմ պաշտոնից բանակ զորակոչվելու առիթով, 1930 թ. հունիսի 1–ից մինչև հուլիսի 15–ը՝ Ղարաքիլիսայում[127], Առաջին Հայկական հրաձգային գնդում զինվորական վերապատրաստման համար:

Բանակից վերադառնալուց հետո ես ընդունվում եմ ծառայության Ալագյազի սովխոզ–ոչխարաբուծական տրեստ, 1930 թ. սեպտեմբերի մեկից մինչև 1931 թ. մարտի մեկը, սովխոզի ավագ հաշվապահի պաշ-

[127] Այժմ՝ ՀՀ Լոռու մարզի Վանաձոր քաղաքը:

տոնով, 1930 թ. տարեկան հաշվետվության կազմելը ավարտելուց և հանձնելուց հետո:

Սովխոզում իմ աշխատանքի ընթացքում ես հանդիպեցի մի շարք հրահանգներ մատյաններում չգրանցելու և ոչ պարզ հաշվետվության դեպքերի:

Հետագայում ազատված տնօրեն Ապրիյանը տրեստի պահանջով դատի տրվեց՝ 4000 ռուբլու գերածախս տալու համար: Բայց ես դեմ էի նրան դատի տալուն՝ մինչև փաստաթղթերում պարզություն մտցնելը, թեպետ տրեստը պնդեց իրենը:

Ես ստիպված էի գործը ուղարկել ՊՔՎ՝ տնտեսական բաժին: Միաժամանակ իր հաշիվները պարզելու համար հեռախոսով նրան (Ապրիյանին) կանչեցի «Ալագյազ»: Ապրիյանի գալուց հետո ստուգելով նրա հաշիվները՝ միության կազմակերպումից մինչև հանձնումը՝ ես պարզեցի, որ նա գումարները մուտք է տվել և ծախսել ճշգրտորեն: Թյուրիմացությունը կատարվել է հին հաշվապահի կողմից, որը սխալմամբ այդ գումարը՝ 4000 ռուբլին, գրել էր Ապրիյանի դիմաց, չնայած որ նա Երևանում տրեստի լիազոր Տեր–Սարգսյանից այդ փողերը ստանալով՝ մուտք է տվել Միության դրամարկղ:

Սակայն, իմ այդ աջակցությունը, ընդհակառակը, տրեստին դուր չեկավ և իմ դեմ ստեղծեցին զրպարտանք՝ «Բանսարկություն Ապրիյանի պաշտպանության համար, որպես հին տնօրենի»: Իսկ նոր տնօրենը իմանալով, որ ես նախկին գնդապետ եմ, ուժեղացրեց իր պայքարը՝ հասցնելով այնտեղ, որ դեկտեմբեր ամսին, Միության ընտրություններում, ինձ զրկեց ընտրելու իրավունքից (չնայած իմ ձեռքին էր զինվորական հաշվառման գրքույկը) և չցանկացավ թեկուզ մի անգամ հարցնել իմ զինվորական կարգավիճակի մասին: Եվ դա արվեց միտումնավոր, այն օգնության համար, որը արել էի մարդուն՝ որը պետք է անեի՝ ըստ իմ ծառայողական պարտականության:

Ես պարտք եմ համարում, մանրամասն նշել այդ անձանց ազգանուններ՝ ըստ Հայաստանի հաստատությունների:

1. ՆԳ ժողկոմիսարիատում անձնական ծանոթներ չունեի, և այնտեղ

արդեն բոլորովին նոր մարդիկ էին՝ Դուրգարյան, Բերբերյան[128], Հովհաննես Դավիդյան, Գարեգին Աշրաֆյան, Անդրանիկ Իսահակյան, Նիկոլայ Կոստանյան և ուրիշներ:

2. Արազդայանի «Հայբամբակկոմ»–ում՝ Բ.Հարությունյան, Զաքար Մելիք–Թանգյան[129], Մակար Պոպովյան, Բարսեղ Ասատրյան:

3. Երևանի քաղգործկոմում՝ Արամ Կոստանյան, Շուշանջյան, Գարագաշ, Ստեփանյան:

4. «Սառնարանում»՝ Ս. Հարությունյան, Զուրաբ Սողոմոնյան:

5. «Заквоенпо»–ում՝ Էրմոյան, Ծատուրով, Խաչիկյան:

6. Ալագյազ սովխոզում՝ Միքելաձե, Դավիթ Կիզիլբոզժյան:

Այդ անձանց ճանաչել եմ աշխատանքի բերումով, իսկ նախապես ես քիչ գիտեի և նույնիսկ պետք է ասել, որ ոչ մեկին չեմ իմացել: Իհարկե, աշխատանքների ընթացքում հանդիպում էի ժամանակավոր եկող և շուտ էլ հեռացող աշխատողների:

10. Ինչպես ես բացատրել էի, ինձ ձայնի իրավունքից զրկումը տեղի էր ունեցել 1930 թ., Ալագյազ սովխոզում, շնորհիվ նրա, որ մարդիկ նույնիսկ չհետաքրքրվեցին, թե ով եմ ես, չնայած, որ հենց նոր էի վերադարձել Կարմիր Բանակից: Իսկ մեր բանակը այնքան զգույշ է, որ իր շարքերում չէր պահի կասկածելի անձանց՝ հատկապես բարձր հրամանատարական կազմում:

«Ալագյազում» ծառայության ավարտից հետո Անդրկովկասի լիազորի առաջարկով, սովխոզում տարեկան հաշվետվության շտապ հանձնման կապակցությամբ, ուր պարգևավճար էի ստացել մի ամսվա ռոճիկի չափով՝ 300 ռուբլի, մարտ ամսին ես մեկնեցի Թիֆլիս՝ Տրեստի մի այլ սովխոզ ուղարկվելու համար:

Նկատի ունենալով լիազորի բացակայությունը Մոսկվայում՝ ես

---

[128] Բերբերյան Անանիա Ռափայելի (1886, Ն. Նախիջևան–1958). ՍՄԿԿ անդամ 1918 թ–ից (վտարվել է 1937 թ.): 1922–25 թթ. եղել է Երևանի քաղաքային և գավառական, ապա՝ Ալեքսանդրապոլի միլիցիայի պետ: Այնուհետև՝ ՆԳԺ կոմիսարի տեղակալ, Բանվորագյուղացիական միլիցիայի պետ: Նա 1930 թ. Վայոց ձորի հակակոլխոզային զանգվածային շարժման ճնշման ղեկավարներից էր, որից հետո դարձավ Միկոյանի, այնուհետև Ազիզբեկով շրջգործկոմի նախագահ:

[129] 1920 թ. եղել է Հայաստանի անդրանիկ համալսարանի ուսանող:

ստիպված էի տրեստի վարչությունում աշխատել մինչև 1930 թ. ապրիլի 12–ը և որից հետո վերադարձա տուն՝ Երևան:

Ձայնի իրավունքից զրկելու և հետո Բանակի հաշվառումից ինձ դուրս հանելու առիթով, ինչպես Հայաստանի Հեղռազմխորհուրդ, Հայ ՊՔՎ–ի Հատուկ բաժին, իմ բողոքարկումները նկատի առնելով՝ նախքան ձայնիս իրավունքի վիճակի պարզումը, ես ոչ մի տեղ աշխատանքի գնալ չէի ցանկանում: Եվ դիմել էի ՀՍՍՀ Ժողկոմխորհի նախագահին, Կենտգործկոմին: Եվ դա երկար տևեց՝ մինչև մայիսի 25–ը:

ՆԳԺԿ կադրերի բաժինը, իմանալով որ ես պարապ եմ, կանչեց և ուղարկեց «Հայձուկ» տրեստ աշխատանքի, չնայած ես գրանցմամբ[130] էի և նրանց նախազգուշացրեցի, որ ես ձայնի իրավունքից զրկված եմ և որ աշխատանքն ինձ համար կստեղծի տհաճ պայմաններ, երբ իմանան, որ ես ձայնազուրկ եմ: Պետք է ասեմ, որ այդ մասին նախազգուշացված էին՝ ինչպես Հայաստանի Ժողկոմիսարիատը, այնպես էլ տրեստի կառավարիչ Օսիպովը, բայց և այնպես նրանք նույնպես պնդեցին ծառայել «Հայձուկ»–ում:

Այնտեղ աշխատանքը և հաշվապահությունը հետամնաց էր, աշխատում էին երկու գլխավոր հաշվապահներ՝ Էլոյանը և Պոպովյանը, մեկը՝ տարեկան հաշվետվության կազմելու համար, իսկ մյուսը՝ ընթացիկ–հաշվային աշխատանքների համար:

1931 թ. հունվարից սկսած ոչինչ չէր արված: Ես անցա աշխատանքի հունիսի մեկից, սակայն կատարելով իրենց աշխատած ժամանակվա, այսինքն՝ հունվարից սկսած աշխատանքները:

Առաջին հաշվետվությունը հանձնեցի սեպտեմբերի 15–ին, երկրորդ հաշվետվությունը՝ հունիսի 1–ից մինչև նոյեմբերի 25–ը և պատրաստվեցի 3–րդ եռամսյակին: Եվ հենց այդ պահին էլ սկսվեց վարչական ապարատի զտումը: Դրա հետևանքով ես հրաժարվեցի՝ պատճառաբանելով, որ ձայնի իրավունքից զրկված եմ և առանց դրա էլ զտման ենթակա չեմ: Սակայն հանձնաժողովը պնդեց իրենը և պաշտոնապես պահանջեց և ես իհարկե ստիպված էի ենթարկվել ու մասնակցել ապարատի զտմանը: Ինձ հանեցին առաջին հերթին՝ ձայնի իրավունքից զրկված լինելու պատճառով՝ որպես նախկին վտարանդի և թաքնված տարրի:

---

[130] Անձնագրի վրա հատուկ նշում:

Ամսվա վերջին ես եկա Երևան և դիմեցի ՐԿԻ[131] ժողկոմին, զեկուցեցի իրավիճակի մասին՝ խնդրելով ազատել ինձ: Հարցը կտրուկ կերպով դնելով և սպառնալով ինքնակամ հեռանալ ծառայությունից (չնայած այդ մասին ես անձամբ խոսել էի նաև Ախտայի շրջանի ՊՔՎ–ի լիազոր ընկ. Սերյոժա Միրզոյանի հետ, բայց որն ինձ նախազգուշացրել էր, որ ինքնակամ հեռանալը համարվում է աննպատակահարմար, հատկապես, որ համարվում եմ տրեստի պատաս–խանատու աշխատող և տարեկան հաշվետվության կազմելու լուրջ աշխատանքների ժամանակահատվածում):

ՐԿԻ ժողկոմը հեռախոսով խոսեց ընկ. Դաշտոյանի հետ իմ ձայնի իրավունքի առիթով և պատասխան ստացավ, որ իմ ձայնի իրավունքը վերականգնվել է դեռևս 1931 թ. հունիսի 3–ին: Ինձ հարկավոր է գնալ և ստանալ ՀՍՍՀ Կենտգործկոմի այդ որոշումը:

Միաժամանակ այդ մասին հաղորդեց տրեստի կառավարիչ ընկ. Օսիպովին, որը դեռ դեկտեմբերի 23–ին ասել էր, որ դրանից հետո ոչ մի կերպ ինձ չի ազատի, չնայած ես հենց այդտեղ խնդրեցի, որ տարեկան հաշվետվությունը հանձնեմ, բայց համենայն դեպս խնդրում եմ ազատել ինձ, քանզի այդպիսի պայմաններում իմ հետագա աշխատանքը նրանց մեջ համարում եմ ինձ համար անհնարին, հատկապես այն ժամանակ, երբ մի շարք պատասխանատու աշխատակիցներ, ինչպես Բանկոմ Եղիազար Մանուկյանը, կառավարչի տեղակալ Կամարյանը և ուրիշներ, ամեն պահի, ամեն մի առանձին հարմար և հրապարակային տեղում անվանում են «լիշենեց», «ձայնազուրկ», «հակահեղափոխական», «գնդապետ» ու այդ դրությունը շարունակվում է և ներկայումս՝ վերականգնումից հետո էլ, չնայած նրան, որ հիմնարկությունը պաշտոնապես ստացել է Կենտգործկոմի գրությունը և հենց նույն Կամարյանի ձեռքով գրվել է «ի գիտություն ղեկավարությանը» և նույնիսկ հաղորդվել է տրեստի ձկնորսարաններին, բայց ես անտրտունջ աշխատեցի, հանձնելով հուլիսի 1–ից մինչև դեկտեմբերի 1–ը ընկած ժամանակահատվածի հաշվեկշիռը: Եվ այդ դրությունը հատուկ ընդգծվեց կոլեկտիվի փետրվարի 14–ի նիստում, բջջի քարտուղարի, բանվորական կոմիտեի և բանվորների կողմից:

[131] Բանվորագյուղացիական տեսչություն:

Հաշվապահությունը վերցրել էր ամենից հարվածային տեմպեր և իրեն հայտարարել հարվածային՝ խոստանալով մարտի 15–ին հանձնել տրեստի տարեկան հաշվետվությունը: Այդպիսի աշխատանքը տրեստի համար նշանակելու էր մեծ խոշոր ձեռքբերում՝ համեմատած 1930 թ. հաշվետվության հետ, որը հանձնվել էր միայն հոկտեմբեր ամսին, այն աշխատանքի համար, որը սկսվել էր այդքան ուշ՝ հունիսի 1–ից, ավարտում է և հաշվետվությունը հանձնում է ժամկետում: Իհարկե բոլորը գոհ էին:

11. Հայաստանում գտնվելուս ընթացքում՝ 1926 թ. հունվարի 26–ից մինչև այսօր բացի Արազդայանի խորհտնտեսությունից, որտեղ գտնվում էի ծառայության մեջ, 1931 թ., ես երկու անգամ ծառայության գործերով գտնվել եմ Թիֆլիս գործուղման մեջ, առաջին անգամ՝ մարտի 20–ից մինչև ապրիլի 13–ը, և երկրորդ անգամ՝ նույնպես Թիֆլիս տրեստի գործերով՝ Անդրֆեդերացիայի մատակարարման կոմիսարիատ, ֆինպլանի և 1931 թ. 4–րդ եռամսյակի շրջանառու միջոցների կազմման համար՝ 1931 թ. հոկտեմբերի 29–ից մինչ նոյեմբերի 7–ը:

Ելենովկայում ծառայության մեջ գտնվելու ընթացքում 5–6 անգամ մեկնել եմ գործուղման Պետբանկի և Մատակարարման ժողկոմիսարիատի գործերով՝ իրենց պահանջով:

Անձնական գործերով ոչ մի անգամ չեմ մեկնել[132] և վերջին անգամ 1932 թ. հունվարի 1–ի գույքագրման առիթով ես մեկնել եմ մեր ձկնորսարանները՝ Նորադուզ[133], Նոր–Բայազետի ձկնագործարան, Ադիա-

[132] Հարցաքննության ժամանակ Մալինցյանը կարծես հակասող բան է ավելացնում. «1931 թ. կինս մտադրվեց գնալ Լեհաստան տեսակցելու ծնողներին: Այդ նպատակով, գտնվելով Թիֆլիսում, ես կնոջս հետ այցելեցի լեհական հյուպատոսարան, որտեղ անձամբ հյուպատոսի հետ զրույց ունեցանք Լեհաստան մեկնելու հնարավորության մասին: Դրան հյուպատոսը ասաց, որ դա շատ դժվար կլինի, քանի որ անհրաժեշտ կլինի վերականգնել լեհական հպատակությունը և որ հարկավոր է դիմում տալ: Այդ այցից բացի՝ էլ ոչ մի անգամ չենք եղել հյուպատոսի մոտ և դիմում էլ չտվեցինք»:

[133] Նորատուս. գյուղ ՀՀ գեղարքունիքի մարզում՝ գավառ քաղաքից 5–6 կմ հյուսիս–արևելք՝ լճի ափին:

ման[134], Քոլաղռան[135], Զաղալու[136], Կրխբուլաղ[137] և Շորժա[138]՝ դեկտեմբերի 29–ից մինչև հունվարի 15–ը՝ հսկելու գույքագրման արագությունը և ճշգրտությանը, ստուգելու տեղամասերում կատարված աշխատանքները ու տնտհաշվարկի անցկացումը 1932 թ. և պարզելու մեր հաշվային աշխատողների ուժերը և թե ինչպիսի պահանջներ պիտի ունենանք 1932 թ. և ինչպես են Սևանի Բանկոոպի կողմից բաշխվել ֆոնդերը:

Այլ շրջաններում և քաղաքներում ես երբևէ չեմ եղել:

ՀԱԱ, ֆ. 1191, g. 16, գ. 1923, թթ. 9–21

[134] Այժմ՝ Ներքին Գետաշեն. գյուղ ՀՀ Գեղարքունիքի մարզում՝ Մարտունի քաղաքից 3 կմ արևմուտք:

[135] Այժմ՝ Ծովինար. գյուղ ՀՀ Գեղարքունիքի մարզում՝ Մարտունի քաղաքից 15 կմ հյուսիս–արևելք: Գյուղի նախկին օտարահունչ անունը առաջացել է այստեղ բնակություն հաստատած քոլանի կոչվող թուրք ցեղի անունից:

[136] Այժմ՝ Ծովակ. գյուղ ՀՀ Գեղարքունիքի մարզում՝ Վարդենիս քաղաքից 9 կմ արևմուտք՝ Սևանի ափին:

[137] Այժմ՝ Ակունք. գյուղ ՀՀ Գեղարքունիքի մարզում՝ Վարդենիս քաղաքից 2 կմ հարավ: Հնում կոչվել է Վարդանաբակ:

[138] Շորժա Ներքին. գյուղ ՀՀ Գեղարքունիքի մարզում՝ Վարդենիս քաղաքից 13 կմ հարավ–արևելք:

ԹԻՎ 2
(1933 թ. հունվարի 10[139])

Ես Կ. Պոլիս հասա 1920 թ. սեպտեմբեր ամսին «Թադ–լա» շոգենավով: Կանգ առա «Թոքատլյան» հյուրանոցում:

Իմ գալու օրը նավի վրա հարցազրույց տվեցի «Ճակատամարտ» թերթի թղթակցին՝ Հայաստանի քաղաքական դրության և Լենինականի ու Սուրմալուի ուղղությամբ թուրքական հարձակման մասին և ասացի, որ եթե կառավարությունը չկարողանա ազատ զորամասերը արևելյան ճակատից նետել Կարս ու Սարիղամիշ, ապա պաշտպանվելը դժվար կլինի և անշուշտ Կարսը կհանձնվի:

Երրորդ օրը Պոլսում ես կանչվեցի գեներալ Շատելվորդի մոտ, որն ինձ գիտեր Զանգեզուրի ժամանակներից, երբ 1919 թ. հունիսին[140], նա՝ մայոր Գիպոնի, Ադրբեջանում Հայաստանի կառավարության ներկայացուցիչ իշխան Դոլգորուկիի[141], թարգմանիչ Չերազի[142] հետ եկավ և պահանջեց Զանգեզուրը հանձնել Ադրբեջանին:

Մտանք գեներալ Շատելվորդի մոտ[143]: Ինձ ներկայացրեց մի ռուս,

---

139 Ցուցմունքներն ավարտելուց հետո խնդրագիր է գրում քննիչին. «Լիազոր Իզվեկովին, Իմ գործով հարցաքննության արձանագրությունը ավարտել եմ դեռ 5 օր առաջ, խնդրում եմ Ձեր զեկույցը և հանդիպում: Մալինցյան Խ., 15.01.1933 թ., բանտախուց հ–11» (ՀԱԱ, ֆ. 1191, ց. 16, գ. 1923, թ. 141):

140 «1919 թ. մայիսի 18–ին գեներալ Շատելվորդը եղավ Գորիսում և մեկ անգամ ևս պահանջեց ենթարկվել Ադրբեջանի իշխանությանը, որ Զանգեզուրից հեռանան Արսեն Շահմազյանն ու Ազգային խորհրդի անդամները»: Վլ. Ղազախեցյան, Զանգեզուր–Ղարաբաղի ինքնապաշտպանության մեկ դրվագի շուրջ, ԲՀԱ, 2006, թ. 1, էջ 253:

141 Հովսեփ Արղության Երկայնաբազուկ (1863–1925). ազգային–ազատագրական շարժման անվանի գործիչ: Առաջին աշխարհամարտում 7–րդ կամավորական ջոկատի հրամանատարը: 1918 թ. եղել է ՀՀ պառլամենտի անդամ, ապա՝ իրանում ՀՀ դեսպանը:

142 Մինաս Չերազ (1852–1929). հասարակական գործիչ: 1878 թ. Բեռլինում Հայոց պատվիրակության թարգմանիչը: 1912 թ. ընդգրկվել է Պողոս Նուբարի ազգային պատվիրակության կազմում:

143 Հարցաքննության ժամանակ ևս Խ. Մալինցյանն անդրադառնում է այդ հանդիպմանը. «Հետագայում գեներալ Շատելվորդին ես հանդիպեցի Կ. Պոլսում: Կանգ առնելով «Թոքատլյան» հյուրանոցում, երկրորդ թե երրորդ օրը անգլիական «Ինտելիջենս–սերվիս»–ի մի սպա փողոցում մոտեցավ ինձ և ասաց, որ գեներալ Շատելվորդը

որին ես չգիտեի և չհետաքրքրվեցի էլ, թե ով է նա:

Զրույցը վերաբերում էր Հայաստանին, Զանգեզուրին, թե ինչպես անցան 1919 թ. ռազմական գործողությունները Ադրբեջանի դեմ, ինչպեսին է բնակչության տրամադրությունը, ըստ իմ կարծիքի՝ ինչո՞վ կվերջանան թուրքերի հարձակումները Կարս–Արդահանի և ընդհանրապես Հայաստանի վրա[144]:

Թարգմանչի միջոցով ես նաև ասացի, որ Զանգեզուրը Ադրբեջանի դեմ ռազմական գործողությունները փայլուն է ավարտել՝ նա չի զիջել իր տարածքները և հաղթելուց հետո էլ չի հետապնդել հակառակորդին՝ չնայած, որ մենք ունեինք դրա բոլոր հնարավորությունները: Նույնիսկ դա պնդում էին կառավարության կոմիսար Ա. Շահմազյանը և Զանգեզուրի Ազգային խորհուրդը:

ցանկանում է տեսնել ինձ՝ առաջարկելով գնալ իր հետ անգլիական շտաբ: Մտնելով շտաբ՝ ես այնտեղ նկատեցի գեներալ Շատելվորդին, որը սկսեց հարցաքննել ինձ Զանգեզուրի և Հայաստանի դրության մասին, Թուրքիայի հետ Հայաստանի պատերազմի և բոլշևիկների դերի մասին:

Դրան ես պատասխանեցի, որ քանզի Թուրքիայի ուժերը չափից ավելի են գերազանցում, ապա անկասկած Կարսը գրավվելու է թուրքերի կողմից:

Նա հետաքրքրվեց, թե բոլշևիկները կվերցնեն Հայաստանը, և ինչ չափով է բոլշևիկների գործունեությունը ծավալված Հայաստանում: Բոլշևիկները չեն խանգարելու հայերին կռիվ մղելու թուրքերի դեմ: Ես նրան տեղեկացրի, որ տվյալ պահին բոլշևիկները գտնվում են Զանգեզուրի շրջանում և որ դժվար թե նրանք կարողանան ինչ–որ բան անել կանխելու համար Կարսի անկումը: Եվ որ Հայաստանն ի վերջո սովետիզացիայի է ենթարկվելու, որ Կարսի մոտակայքում կռիվներ են ընթանում և որ թուրքերի ճնշման տակ Հայաստանը դիմադրել չի կարողանալու: Որ հայ ժողովուրդը ռուսների դեմ ընդհանրապես չի կռվելու:

Բացի այդ Շատելվորդը հետաքրքրվեց ադրբեջանական մուսաֆաթիստների հետ մեր կռիվներով:

Դրանից հետո նա հարցրեց, թե ինչ եմ ես մտադիր հիմա անել: Ես պատասխանեցի, որ պետք է բուժվեմ և ոչ մի գործով չեմ զբաղվելու: Եվ, ի միջայլոց, թաքցրեցի նրանից այն փաստը, որ ես դաշնակների կողմից արտաքսվել եմ Հայաստանից՝ որպես բոլշևիզմի մեջ կասկածյալի:

Ինչքան հիշում եմ, ուրիշ հարցեր չտրվեցին:

Դրանից հետո գեներալ Շատելվորդի հետ էլ այլևս չհանդիպեցի: Եվ ոչ մեկից ոչինչ նրա մասին չլսեցի»:

[144] 1920 թ. սեպտեմբերին Թուրքիայի սանձազերծած պատերազմը:

Վերջապես Թուրքիայի հարձակման առթիվ ասացի, որ Թուրքիան հարձակվում է հսկայական ուժերով, ավելի պատրաստված է կռիվներին և գտնվում է լավագույն պայմաններում. ունի ավելի պատրաստված հրամանատարական կազմ, քան թե մենք՝ հայերս, որտեղ մինչև վերջին պահն էլ կառավարությունը չկարողացավ բանակը դնել անհրաժեշտ բարձրության վրա, որ կարգապահությունը անբավարար է, սպայությունը համարյա արհամարհված է ու հալածյալ վիճակում և իշխանությունը փաստորեն գտնվում է «խմբապետների»՝ թուրքահայ զորապետների ձեռքին, որոնք լայնամասշտաբ ռազմական գործողություններին բացարձակ անպատրաստ են. ստեղծված է անհաշտելի հակամարտություն՝ սպայական կազմի և խմբապետների միջև:

Եվ վերջապես՝ այն հսկայական ներհակությունը թուրքահայերի և ռուսահայերի միջև, որտեղ հրամանատարական բարձունքները տրված են խմբապետությանը ոչ միայն բանակում, այլ նաև պառլամենտում և կառավարությունում:

Եվ վերջապես՝ ժողովրդի զանգվածային դժգոհությունները, որը դարձել է խմբապետների թալանի, բռնությունների և բռնաբարությունների օբյեկտ:

Ահա թե ինչու, իմ կարծիքով (և հանգամանքներն են այդ ասում), որ թուրքերի հետ ռազմական գործողություններում հաջողություն չի ակնկալվում և պատերազմն ավարտվելու է, այսպես թե այնպես, ոչ մեր օգտին, և մենք պարտվելու ենք, չնայած նրան, որ ժողովրդի զանգվածը ազգասիրական տեսակետից պատրաստ կլինի ամեն ինչ տալ թուրքերի դեմ կռվին, քանի որ լավ գիտեն, որ թուրքերի հաղթանակը իր հետ բերելու է ավերումներ, սպանություններ և թալաններ:

Շատելվորդի հարցին, թե հայ–թուրքական ռազմական գործողությունների ընթացքում ռուս բոլշևիկները կխանգարեն և հանդես կգան ընդդեմ հայերի, ես դրան ասացի, որ չեմ կարծում, որ Խորհրդային պետությունը խառնվի այդ պատերազմին ոչ միայն պաշտոնապես, այլև՝ կիսապաշտոնական կերպով, քանի որ դրա առիթը չկա: Ընդհակառակը՝ Խորհրդային պետությունը մի քանի անգամ առաջարկել է իր ծառայությունները Հայաստանի կառավարությանը՝ միջնորդելու Թուրքիայի

և Հայաստանի միջև կոնֆլիկտի լուծման գործում, սակայն խմբապետների կողմից գլխավորվող հայկական կառավարությունը ավելի լավ համարեց լեզու գտնել հենց թուրքերի հետ, կամ թե նրանց դեմ կռիվը, քան թե ռուս–խորհրդային պետության միջնորդությունը: Ուստի և Կարսի գործողությունների ժամանակ Հայաստանը արևելյան ճակատը ոչ միայն չի մերկացրել, այլ ընդհակառակը՝ ուժեղացրել է նոր զորամասերով և այդ ճակատի հրամանատար է նշանակվել խմբապետ Սեպուհը[145], որը հարգանք չէր վայելում ոչ միայն բնակչության կողմից, այլև հատկապես բանակի:

Հետևաբար այսպիսի իրավիճակում Թուրքիայի հետ ճակատում հաղթանակի սպասելն ապարդյուն է և իմ կարծիքով պարտվելու ենք:

Դրանով մեր զրույցը ավարտվեց և Կ. Պոլսում այլևս ոչ միայն Շատելվորդի, այլև դաշնակիցների բանակի այլ դեմքերի հետ ոչ մի այլ հանդիպում չեմ ունեցել:

Ես կարծում եմ գեներալ Շատելվորդի հետ մեր հանդիպման առիթը եղել էր «Դաշնակցություն» կուսակցության օրգան Կ. Պոլսի «Ճակատամարտ» թերթի թղթակցին իմ տված հարցազրույցը[146], չնայած իմ խոսքերը շատ դեպքերում խեղաթյուրված էին ներկայացվել:

Հենց այդ հարցազրույցի շնորհիվ իմ առաջին կնոջ հորեղբայր Տիգրան Թայմեզյանը, որն ապրում էր Բոստոնում՝ ենթադրելով, որ ես կնոջս հետ գտնվում եմ տարագրության մեջ, հեռագրով 100 դոլար փող ուղարկեց Օտոմանյան բանկ, ուր մենք միասին գնացինք ստանալու:

Փողը ստանալու ժամանակ բանկի աշխատակիցը իմ երզնկացի կնոջ համերկրացին դուրս եկավ, որը միաժամանակ հանդիսանում էր Կ. Պոլսի Զավեն Պատրիարքի քարտուղարը: Նա մեզ հյուր հրավիրեց:

Հաջորդ օրը կնոջս հետ նրան հյուր գնացինք, որտեղ էլ խոսակցությունը գնաց Եվրոպայում իմ ապագա կացության մասին և նա ինձ

---

[145] Սեպուհ–Արշակ Ներսիսյան (1872–1940). ազգային–ազատագրական շարժման նշանավոր գործիչ: Ակտիվորեն մասնակցել է 1920 թ. մայիսյան հակապետական խռովության ճնշմանը: Հրապարակել է «Դրվագներ Սասունի կռիվներուն» հուշերը:

[146] Ըստ Խ. Մալինցյանի՝ այդ հարցազրույցը հրապարակվել է 1920 թ. սեպտեմբերի երկրորդ կեսի համարներից մեկում, որը մեզ չհաջողվեց գտնել հիշյալ թերթի էջերում:

ասաց, որ ինքը կուզենար ինձ ծանոթացնել Պատրիարք Զավենի հետ, որը շատ է հետաքրքրվում Հայաստանի դրությամբ և որը մեծ ճանաչում ունի հայության մեջ և որ նա անհրաժեշտ աջակցություն կցուցաբերի իմ սովորելուն կամ ծառայությանը:

Հայաստանից իմ մեկնելու սկզբում որոշակի նպատակ ես բացարձակապես չունեի, սակայն կարծում էի, որ վերջիվերջո մենք պիտի մեկնենք Ամերիկա, Բոստոն՝ աներոջս՝ Տիգրան Թայմեզյանի մոտ:

Փողը ստանալուց մենք կնոջս հետ անմիջապես պատասխանեցինք նրան:

Շուտով մենք կրկին անգամ 400 դոլար ստացանք և նա մեզ առաջարկեց մեկնել Բոստոն:

Ես գնացի Պատրիարք Զավենի մոտ, որն, ինձ շատ սրտաբաց ընդունելով, հարցուփորձ արեց իմ ձգտումների և Եվրոպայում իմ հետագա հեռանկարների մասին:

Ես ասացի, որ աներս առաջարկել է մեկնել Ամերիկա, սակայն ես կարծում եմ, որ ինձ անհրաժեշտ է կրթություն ստանալ, եթե հնարավոր լինի՝ զինվորական կրթություն, քանի որ կարծում եմ, որ համենայն դեպս ես եռանդով ու կամքով երիտասարդ մարդ եմ և կարող եմ հասնել դրան:

Պատրիարք Զավենի հետ զրույցի ընթացքում ես ասացի, որ դաշնակների կառավարության քաղաքականությունից դժգոհ եմ, չասելով, որ ես դաշնակների կողմից դատվել եմ: Ուստի և Պատրիարք Զավենը ինձ սրտաբուխ էր վերաբերվում, քանի որ նա որպես լիբերալ–դեմոկրատների առաջնորդ, հետևում էր Պողոս Նուբար փաշայի, Հայերի կաթողիկոսի մարտավարությանը, որոնք 1914 թվից, իմպերիալիստական պատերազմից սկսած, դաշնակների ներկայացուցիչներից անկախ, նրանց զուգահեռ, բոլոր կոնֆերանսներում իրենց ներկայացնում էին հայ ժողովրդի շահերի պաշտպաններ:

Պատրիարք Զավենը նամակ գրեց Փարիզում գտնվող Պողոս Նուբարին՝ հնարավորության դեպքում ինձ տեղավորելու Փարիզի ռազմական ակադեմիայում:

Այդ ընթացքում ես սկսեցի սովորել ֆրանսերեն լեզուն[147]:

---

[147] Հարցաքննություններից մեկի ժամանակ Մալինցյանը պատմում է. «Իմ այնտեղ գտնվելուս ընթացքում Կ. Պոլսի հայոց պատրիար–քին այցելել եմ 10–12 անգամ:

Կ. Պոլսում ես մի անգամ ծանուցագիր ստացա Հայաստանի ՆԳ նախարար Աբրահամ Գյուլխանդանյանից՝ ներկայանալ Հայաստանի սպաների ընդհանուր հավաքին: Ես հրաժարվեցի:

Պատասխան գրության մեջ ես գրեցի. «Չեմ ցանկանում մասնակցել ժողովին, քանի որ ինձ չեմ համարում Հայաստանի սպա»:

Եկեղեցու բակում մի հանդիպման ժամանակ Գյուլխանդանյանը հայտնեց իր դժգոհությունը՝ սպառնալով, որ նպաստը, որը պիտի տրվի սպաներին, չեն տալու նրանց, ովքեր չեն ցանկանում սպաների միության անդամ լինել:

Ես հաստատեցի գրածս և այն, որ ինձ գնդակահարության դատապարտելը և արտաքսելը ես դեռ չեմ մոռացել:

Կ. Պոլսում ես ծանոթացա խորհրդային կողմնորոշում ունեցող, «Երկիր» թերթի խմբագրի՝ Հրանտ Գալիկյանի[148] հետ: Ներկայումս ՀՍՍՀ գլխավոր դատարանի նախագահի տեղակալ Հրանտ Զոփուրյանին[149], «Խորհրդային Հայաս–տան» թերթի քարտուղար, ՍՍՀՄ Հողժողկոմատի կոլեգայի անդամ, ներկայումս նույնպես Հայաստանում ծառայության մեջ գտնվող Ժիրայր Միրզախանյանին[150]՝ նպատակ ունենալով

Գլխավորապես այցելել եմ ֆրանսերեն լեզու սովորելու գործով, քանի որ ես պատրաստվում էի մեկնել Փարիզ»: Միաժամանակ հարցեր են տրվում նաև Զավեն պատ–րիարքի դիրքորոշումների մասին. «Ձեր վերջին հանդիպումից կես տարի առաջ Պատրիարք Զավենը ինչպե՞ս վերաբերվեց Հայաստանի սովետականացմանը»:

Խ. Մալինցյան. «Իմ տված տեղեկատվությամբ պատրիարք Զավենը գիտեր դաշնակների անկման անխուսափելիության և սպասվելիք սովետականացման մասին և բոլշևիկների գալը նա համարում էր հայ ժողովրդի փրկություն»:

[148] Հրանտ Ավետիսի Գալիկյան (1889, Վան–1938, Երևան). իրավաբան: 1915 թ. Վանի ինքնապաշտպանության ղեկավարներից: Եղել է Կ. Պոլսի «Երկիր» թերթի խմբագիր: 1922 թ. ներգաղթել է Հայաստան: Հեղինակ է իրավագիտական գրքերի: Բռնադատվել է:

[149] Պետք է լինի Էդուարդ Զոփուրյան (1896, Կ. Պոլիս–1938). 1911–1922 թթ. եղել է հնչակյան թերթերի խմբագրության անդամ: 1922 թ. վերջին, երբ քեմալականները մոտենում էին Կ. Պոլսին՝ մեկնել է Հայաստան: 1927–1937 թթ.՝ ՀԿԿ անդամ, 1937 թ. հուլիսին ձերբակալվել է և 1938 թ. հուլիսին գնդակահարվել: Եղել է «Հայպետհրատի» տնօրեն (ՀԱԱ, ֆ. 1191, ց. 4, գ. 1453):

[150] Միրզախանյան Ժիրայր Ավետիսի (1886, Վան–1947, Երևան). Հայաստան է ներգաղթել 1921 թ.: Եղել է ՀԽՍՀ Վճռաբեկ դատարանի նախագահ, Գերագույն դատարանի դատախազ:

իրենց օրգան «Երկիր» օրաթերթի միջոցով ջանքեր գործադրել ներկայացնելու Զանգեզուրի դրությունը՝ սկսած 1918 թ–ից մինչև իմ ձերբակալվելը՝ 1920 թ. մայիսի 29–ը:

Բայց դա ինձ չհաջողվեց, քանի որ ես չհասցրի պատրաստել այդ նյութը, սակայն հետագայում ես դրանք հանձնեցի Պողոս Նուբարի պատվիրակությանը[151] Փարիզում 1921 թ. հունիսին:

Կ. Պոլսում ես դաշնակցության կուսակցության ներկայացուցիչների հետ ոչ մի կապ չեմ ունեցել և ոչ մի այլ հարցով՝ ինչպես կրթության, այնպես էլ անձնական կյանքի հարցերով երբեք չեմ դիմել և չեմ մտադրվել, քանի որ Զանգեզուրում ինձ հասցված վիրավորանքը՝ ձերբակալումը, ավելի ուշ՝ մահվան դատապարտումը, կալանքի տակ պահելը՝ 1920 թ. մայիսի 29–ից մինչև հուլիսի 24–ը, արտաքսումը ես համարում էի ինձ համար հավերժ չսպիացող, չապաքինվող վերք:

Ես ապրում էի Ամերիկայից աներոջից ստացված միջոցներով և էլի՝ երրորդ անգամ 500 դոլար ստացա ճամփորդության համար և միաժամանակ նամակ ստացա աներոջից՝ Տ. Թայմեզյանից, որ Փարիզում ուսանելու ընթացքում ամեն կերպ կաջակցի ինձ ոչ միայն փողով, այլև՝ նյութապես, քանի որ Երզնկայի նրա հարազատ եղբոր ամբողջ ընտանիքից կինս միակն էր, որ փրկվել էր:

Ես մեկնեցի Փարիզ 1921 թ. հունիսի 7–ին: Կանգ առա Պտի–շան փողոցում, հետագայում տեղափոխվեցի ապրելու Մարշալ Լե–Ռուայի վրա:

Ես Զավեն պատրիարքի նամակով ներկայացա Պողոս Նուբար փաշային, որտեղ ներկա էր իր քարտուղարը՝ Հեքիմյանը:

Նա խոստացավ իր ամբողջական աջակցությունը ինձ՝ ակադեմիա ընդունվելու և այդ առիթով բանակցություններ վարել, անցնելու իր մոտ՝ իր և հայերի հետ կոնտակտ պահելու հարցով և բարելավելու ֆրանսերեն լեզվի իմ իմացությունը:

Ես շատ հազվադեպ էի մեկնում Փարիզ, համարյա ոչ մի առնչություն այս կամ այն քաղաքական կազմակերպությանը չունեցա:

Մի անգամ հանձնարարվեց ինձ կացության անձնագիր[152] ստանալ

---

[151] Հավանաբար Փարիզի Նուբարյան գրադարանի արխիվում է:

[152] на проживание

բնակության իրավունք ունենալու համար: Քանի որ Կ. Պոլսի պատրիարքարանի միջնորդությամբ ֆրանսիական ներկայացուցչությունից ստացված անձնագիրը, որով ես Կ. Պոլսից եկել էի՝ Հովանավորյալի[153] անձնագիր էր և դրա ժամկետը անցել էր: Հարկավոր էր այն փոխարինել հայկական անձնագրով[154]:

Գալով հայկական ներկայացուցչություն, որտեղ ինձ ընդունեց պատվիրակության նախագահ Ավետիք Ահարոնյանը, որտեղ ներկա էր գեներալ Ղորղանովը[155]:

---

[153] протеже

[154] Խ. Մալինցյանի դատական գործում է Փարիզում նրան տրված և Վարշավայում 1922 թ. հուլիսի 1–ին պատճենված ֆրանսերեն լեզվով հայկական անձնագրի պատճեն: Դրա իսկությունը հաստատված է Լեհաստանում ՌՍՖՍՌ Լիազոր ներկայացուցչության հյուպատոսական բաժնի կողմից:

Հայաստանի հանրապետության անձնագիր–անցագիր

Մենք՝ Փարիզի կոնֆերանսում ՀՀ պատվիրակության նախագահը, ՀՀ կառավարության անունից խնդրում ենք դաշնակից և բարեկամ պետությունների քաղաքացիական և զինվորական իշխանություն–ներին, թույլ տալ Խ. Մալինցյանին կնոջ՝ Վանդայի (26 տարեկան) ուղեկցությամբ ազատորեն վերադառնալ Լեհաստան և այլ արտասահմանյան երկրներ և անհրաժեշտության դեպքում ցույց տալ աջակցություն:

ՏՎՅԱԼՆԵՐ

Ծնված է Վանում

Բնակվում է Փարիզում

Մասնագիտությունը՝ սպա

Տարիքը՝ 28 տարեկան

Միջահասակ

Մազերը՝ սև

Դեմքը՝ օվալածև

Աչքերը՝ սև

Տրված է՝ Փարիզ, 29 նոյեմբերի, 1921 թ.:

Առաջին քարտուղար՝ Մ. Ղազարյան»:

(ՀԱԱ, ֆ. 1191, ց. 16, գ. 1923, թ. 87)

[155] Նիկոլայ Ղորղանյան (1866–1955). 1914–17 թթ. եղել է Կովկասյան ճակատում ռուսական գլխավոր շտաբի պետի տեղակալը: 1918 թ. մայիսին մասնակցել է Ղարաքիլիսայի ճակատամարտին: ՀՀ անկումից հետո, անցնելով արտասահման, ապրել է Փարիզում, ուր և վախճանվել է: Հեղինակն է «Հայերի մասնակցությունը Ա Աշխարհամարտին Կովկասյան ճակատի վրա»: Եղել է ՀՀ պատվիրակության ռազմական փորձագետը:

Իմանալով իմ Փարիզ գալու նպատակի մասին, նա հարցրեց, թե ինչու չեմ դիմել իրեն աջակցությանը:

Ես ասացի, որ նախ՝ դեռևս բուժվում եմ (իմ մոտ արևադարձային մալարիա–տենդ էր) և երկրորդ՝ այն, որ ես ցանկանում եմ զինվորական կրթություն ստանալ և եթե աջակցության համար ես չեմ դիմել իրեն՝ շնորհիվ նրա, որ ես Զանգեզուրում դաշնակների կողմից չափազանց դաժանորեն եմ պատժվել, ուստի և չեմ դիմել:

Ահարոնյանը ասաց, որ չնայած թյուրիմացություններ մեր մոտ եղել են, հաճախ մեր հերոսներին չեն գնահատել, այս կամ այն կուսակցականի դրդմամբ իզուր տեղը պատժել են, բայց այնուհանդերձ ես պետք է լինեմ այլ կողմնորոշման, հոգումս ոխ չպահեմ:

Ապա նա, մի ֆրանսերեն քարտեզ ներկայացնելով, խնդրեց ցույց տալ, թե որտեղ է գտնվում Քեշիշքենդը[156]:

Ես քարտեզի վրա ցույց տվի Քեշիշքենդը՝ խնդրելով ասել պատճառը, թե ինչ է տեղի ունեցել:

Ահարոնյանը ասաց, որ մերոնք, այսինքն՝ դաշնակները, Քեշիշքենդի մոտ տեղի ունեցած կռիվներում[157] բոլշևիկ գնդապետ Միրիմանովի[158] հեծելազորքից գրավել ենք 154 գերիներ և մի քանի գնդացիրներ:

Ես զարմացած հարցրեցի. «Մի՞թե կարծում եք, որ գնդապետ Միրիմանովի ջոկատից նման քանակությամբ գնդացիրներ և գերիներ գրավելը մենք հայերս կարող ենք համարել ինչ–որ հատուկ–քաղաքական ձեռքբերում: Եվ արդյո՞ք պ–ն Ահարոնյանը չի կարծում, որ գնդապետ Միրիմանովի ջոկատը դա Խորհրդային բանակի մի հարյուրակն է և Սովետի դեմ մեր կռվի անգամ 100 քայլը հաշվարկված չէ»:

---

[156] Այժմ՝ ՀՀ Վայոց ձորի մարզկենտրոն Եղեգնաձոր քաղաքը:

[157] Նկատի ունի 1921 թ. հունիսի 15–16–ի կռիվները, երբ Արևմտյան ճակատի հրամանատար Յապոնի (Հովի. Պարոնյանի) գլխավորությամբ Լեռնահայաստանի ուժերը մի արագընթաց հարձակումով ջախջախեցին Վայոց ձորում տեղաբախշված Կարմիր բանակի զորամասերը և կարճ ժամանակով ազատագրեցին Վայոց ձորը:

[158] Միրիմանյանը 1920 թ. գարնանը եղել է Զանգեզուր–Ղարաբաղ ուղարկված Դրոյի Էքսպեդիցիոն ջոկատի շտաբի պետը: Ապա՝ 1920 թ. դեկտեմբերին իշխանությունը բոլշևիկներին հանձնելուց հետո, զինվորական կարերիան շարունակել է Կարմիր բանակում:

Պարոն Ահարոնյանն ասաց. «Մենք՝ հայերս պայքարում ենք խորհրդային իշխանության դեմ, պիտի պայքարենք և երբեք չենք համաձայնվելու մեր քաղաքական կապիտուլացիային»:

Ես ասացի, որ դա հավասարազոր է քաղաքական խելացնորության, քանզի կռիվը Սովետների դեմ՝ դա պայքար է 110 միլիոնանոց ժողովրդի դեմ...

Եվ Ռուսաստանն իրեն Բաքվի նավթաշխարհով ապահովելու համար, ինչպիսի պետություն էլ դեմը լինի, երբեք չի զիջելու Բաքուն, և եթե պետք լինի, նավթային Բաքվին տիրելու համար կգրավի որոշ տարածքներ և քարուքանդ կանի այն ամենը, ինչ կանգնած լինի այդ պետության ճանապարհին՝ այն բնակեցված լինի հայերով, թե այլ ազգերով:

Եվ մեզ՝ հայերիս հարկավոր էր դա նկատի առնել:

Պարոն Ահարոնյանն ինձ ասաց, որ իմ հայացքները «բոլշևիկի հայացքներ են» և դրանով մեր խոսակցությունը ավարտվեց ու այլևս մենք երբեք չհանդիպեցինք:

Փարիզում ես հանդիպեցի Պողոս Նուբար փաշայի պատվիրակության հետ՝ պետդումայի անդամ Միխայիլ Բաբաջանյանին, Արշակ Չոպանյանին, Գաբրիել Նորատունկյանին, Էքմիջյանին:

Ես այն նյութերը, որ ցանկանում էի տպագրել տալ Կ. Պոլսի «Երկիր» թերթում, հանձնեցի Միխայիլ Բաբաջանովին:

Ռուս վտարանդիության մասով ես ընդհանրապես ոչ մեկի հետ ծանոթ չէի և չէմ էլ ձգտել որևէ կուսակցական կազմակերպության:

Փարիզում բոստոնաբնակ աներոջիցս՝ Թայմեզյանից ստացա 500 դոլար, որը կրկին խնդրում էր մեկնել Բոստոն:

Ես ակադեմիա ընդունվելու հարցով խնդրեցի Պողոս Նուբար փաշային: Վերջինս մի անգամ ինձ վերցրեց իր հետ և գնացինք գեներալ Դելակրուայի մոտ, որն ասաց, թե ակադեմիա ընդունվելը բավականին դժվար է, բայց հնարավոր է ուղարկել Սանսիրի դպրոցը: Ես հրաժարվեցի, քանի որ Սանսիրը դա նույնն էր, ինչ յունկերական դպրոցը:

Մեր խոսակցությունը և ծանոթությունը Դելակրուայի հետ դրանով ավարտվեց:

Ուրիշ ֆրանսիացի սպաների հետ ծանոթություն՝ 1920 թ. սեպտեմ-

բերից մինչև Լեհաստանից իմ մեկնելը, ոչ մի տեղ և ոչ մեկի հետ ու երբեք չի եղել և մտադիր էլ չեմ եղել այդպիսին հաստատել:

Դրանից հետո Պողոս Նուբարն ինձ առաջարկեց ծառայության մտնել Սիրիա–Կիլիկիա (ֆրանսիական) գաղութներում, բայց ես հրաժարվեցի մտնել ֆրանսիական զինված ուժեր թեկուզ գնդապետի աստիճանով:

Հանդիպելով Մ. Բաբաջանյանին և Փարիզում Սովետական ներկայացուցիչ Սկոբելևին՝ ես որոշեցի մեկնել Հայաստան և իմ երիտասարդ ուժերը տալ մեր Միությանը, քանի որ հայերի ծառայությունը օտար բանակներում երբեք լավ բան չեն տվել, բացի չարիքից և դավաճանությունից: Իսկ ծառայել ֆրանսիացիներին կամ անգլիացիներին, որոնք 1914–1920 թթ. ընթացքում թուրքահպատակ հայերին ուղարկեցին Գողգոթա ու մեր արյունը ծախեցին՝ և՛ մեծածախ և՛ մանրածախ կերպով՝ երբեք: Ընդհակառակը՝ հենց դրա համար, ես պետք է լինեի այդ նույն իմպերիալիզմի հակառակ ճամբարում:

Փարիզ գալուս սկզբից այլ կազմակերպությունների կամ շրջանակների հետ ես ոչ մի տեղ և երբեք չեմ կապվել ու երբեք և ոչ մի հավաքի ու համաժողովի չեմ մասնակցել:

Հայկական անձնագիր ստանալով՝ ընկեր Սկոբելևի խորհրդով ես մեկնեցի Բեռլին՝ Խորհրդային դեսպանորդի մոտ, ինձ Մոսկվա ուղարկելու համար:

Հասնելով Բեռլին՝ դեսպանատանը ինձ ասացին, որ հարկավոր է հայտարարություն տալ ՍՍՀՄ Կենտգործկոմին և մեկնելու թույլտվությամբ ինձ իրավունք կտան մեկնել[159], իսկ առայժմ հարկավոր է սպասել:

---

[159] Խ. Մալինցյանը չի ասում, թե ինչու ինքը չի կարողացել օգտվել ԽՍՀՄ մեկնելու առաջին թույլտվությունից, ուստի և երկրորդ անգամ է փորձել ստանալ այդ թույլտվությունը: Սակայն կարելի է կռահել, որ ինչպես հարցաքննության ընթացքում խոստովանել է ինքը, իր նախորդ կինը՝ Վանդա Կավալևսկայան, ոչ մի կերպ չի համաձայնվել իր հետ մեկնել ԽՍՀՄ: Թերևս այդ է պատճառը, որ նա, առաջին թույլտվությունը ստանալով, չի մեկնել ԽՍՀՄ: «Մոսկվա, ԱԳ Ժողկոմիսարիատի վիզաների բաժնին 1922 թ. նոյեմբերի 15–ին Վիզաների բաժնի կողմից Ռուսաստան մեկնելու թույլտվություն է տրվել (h–4973) քաղ. Խաչատուր Հարությունի Մալինցյանին կնոջ հետ: Այդ թույլտվությունից քաղ. Խ. Մալինցյանը չի կարողացել օգտվել իրենից չկախված հանգամանքների պատճառով: Սրան կից ուղարկելով նրա անձնագրի պատճեն՝ Հյուպատոսական բաժինը խնդրում է Վիզաների բաժնին շտապ հաղորդել՝ կարելի՞ է կրկին վիզայավորել այդ անձնագիրը՝ Վիզաների բաժնի վերոնշյալ թույլտվության

Ես ստիպված մեկնեցի Վարշավա, որտեղ Կարախանն էր՝ խնդրելով աջակցություն ցույց տալ:

Հասնելով Վարշավա՝ ես կանգ առա Վսպուլնոյ փողոցի վրայի պանսիոնատում: Հաջորդ օրը ես դիմեցի Խորհրդային դեսպանատուն՝ ընկ. Լորենցին, որն իմանալով իմ Լեհաստան գալու պատճառը, ինձ առաջարկեց դիմում տալ Կենտգործկոմին՝ ՍՍՀՄ մեկնելու նպատակով, որը ես կատարեցի[160]:

Լորենցը ինձ ծանոթացրեց դեսպանատան մի ընկերոջ հետ, որն ինձ մի շարք հանձնարարություններ տվեց կապ պահպանելու վերաբերյալ: Այդ հանձնարարությունները ես կատարեցի:

Շուտով ես տեղափոխվեցի բնակության Վարշավային մոտիկ Վոլոշին բնակավայրը, քանի որ Վարշավայում ապրելու համար իմ միջոցները չէին բավականացնի, իսկ հարկավոր էր սպասել Կենտգործկոմի թույլտվության որոշումը ստանալուն:

Ես ստիպված էի իմ երկրորդ կենակցուհի–կնոջից[161] բաժանվել, քա-

---

հիման վրա: Լեհաստանում լիազոր ներկայացուցչություն, Հյուպատոսական բաժին 19 հունիսի, 1923 թ., Վարշավա Հյուպատոսական բաժնի վարիչ՝ քարտուղար»: ՀԱԱ, ֆ. 1191, ց. 16, գ. 1923, թ. 90:

[160] Նկատի ունի ՌՍՖՍՌ ԱԳ Ժողկոմիսարին ուղղված ԽՆԴՐԱԳԻՐ–ը, տե՛ս նախորդ էջերում:

[161] Այստեղ Խ. Մալինցյանը բոլորովին մոռացության է տալիս առաջին կնոջը՝ երզնկացի Ծիածան Թայմեզյանին և նկատի ունի Վանդա Անտոնովնա Կովալևսկայային, որի հետ նա կապվել էր Փարիզում (այդ է վկայում Փարիզում ստացած անձնագիրը, որտեղ նշված է եղել և այդ կնոջ անունը), և որի մասին նա պարզաբանումներ է տալիս հարցաքննության ժամանակ.

«Հարց — Անհասկանալի է: Նշանակում է Ձեր կնոջ ազգանունը՝ «Կավալևսկայա»–ն, ճիշտ չէ, եթե իր հոր եղբոր ազգանունը Նախման է:

Խ. Մալինցյան — ՍՍՀՄ մեկնելուց առաջ նա փոխեց ազգանունը՝ օգտվելով առաջին կնոջս՝ Կավալևսկայայի անձնագրից, որը մնաց Լեհաստանում: Այսպիսով՝ և իմ երկրորդ կնոջ անունը Վանդա չէ, այլ Յուզեֆա, քանի որ «Վանդա»–ն իմ առաջին կնոջ անունն է:

Հարց — Այդպիսով՝ Դուք Ձեր առաջին կնոջ՝ Վանդա Կավալևսկաայի անձնագրով ՍՍՀՄ եկաք Յուզեֆա Մարցելևնա Նախմանի հետ:

Խ. Մալինցյան — Այո՛, հենց այդպես: Դա այդպես ստացվեց, քանի որ նա և ես մեկ անձնագրով էինք: Վանդա Կավալևսկայա ազգանվան տակ երկրորդ կինս մինչև հիմա՝ 9 տարի, ապրում է ՍՍՀՄ–ում:

Հարց — Չնայած նրան, ինչպես Դուք նախկինում ասել եք, որ Ձեր կին Յուզեֆան

նի որ նա ոչ մի դեպքում չէր ցանկանում մեկնել Ռուսաստան:

Վարշավայում ես ծանոթացա «Կովկաս» ռեստորանի տիրոջ՝ տաճկահայ Մուլենի[162], իսկ հետագայում լեհական բանակի մայոր, կովկասահայ Զաքարովի[163] հետ, որոնց հաճախ էին հանդիպում ռեստորանում: Զրույցների ընթացքում ես նկատեցի, որ լեհ հասարակական կարծիքը քիչ բան գիտի հայերի ճակատագրի մասին, թեպետ և՛ Վարշավայում, և՛ Գալիցիայում կան շատ կաթողիկե հայեր՝ հատկապես Վարշավայում սովորող երիտասարդների մեջ:

Ես անձամբ նպատակ էի դրել մի շարք զեկույցներ կարդալ Հայաստանի հարցի վերաբերյալ, մշակույթի, քաղաքականության մասին, սկզբում՝ Վարշավայում, իսկ հաջողության դեպքում՝ շարունակել Գալիցիայի կենտրոններում:

Մուլենն ինձ խորհուրդ տվեց ծանոթանալ Լեհական պառլամենտի անդամ հայ–կաթողիկե արքեպիսկոպոս Թեոդորովիչի հետ, որը իբր թե մեծ քաղաքական կշիռ ունի պառլամենտում:

Իսկապես, ես մի օր այցելեցի արքեպիսկոպոս Թեոդորովիչին՝ Միդովոյ փողոցի նրա բնակարանում, ծանոթացա նրա հետ, հայտնեցի նրան իմ այցի նպատակը և խնդրեցի իր խորհուրդները, թե ինչպիսի տպավորություն կթողնենք Լեհաստանում հայկական հարցի մասին իմ ելույթներով, և թե ինչպես նա՝ Թեոդորովիչը կարող է օգնություն ցույց տալ:

Թեոդորովիչն ինձ ասաց, որ իմ ելույթը անշուշտ հաջողություն կարող է ունենալ, եթե այն լինի նպատակային, բովանդակալից և լավ ներկայացվի:

Ինձ թույլատրվեց օգտվելու նրա մեծածավալ գրադարանից, միաժա-

ՍՍՀՄ գալուց շովինիստաբար և բացասաբար էր տրամադրված սով. իշխանության հանդեպ: Ձեզ վրա դա չի՞ ազդել:

Խ. Մալինցյան — Նա շովինիստաբար էր տրամադրված լեհական ոգով, այսինքն՝ զգում էր իրեն լեհ–շովինիստուհի: Բայց որոշ ժամանակ անց, այսինքն՝ 3 տարի անց, իմ ազդեցությամբ նա սկսեց համակրել սով. իշխանությանը: Այստեղ դեր խաղաց նաև այն, որ այն բոլոր պրովոկացիաները, որ տարածվում էին Լեհաստանում ՍՍՀՄ հանդեպ, իրականում սուտ դուրս եկան»:

[162] Հարցաքննության ընթացքում Մալինցյանը նշում է «Մուլեն» մականունով տիրոջ ազգանունը՝ Ջաղացպանյան:

[163] Հարցաքնության ընթացքում նա ավելի է ճշգրտում. «Վարշավայում գտնվող Պահակային գնդի մայոր Զախարովի հետ, որը ապրում էր «Նովիյ սվետ» փողոցում»:

մանակ, նա խնդրեց քաղաքային գրադարանին՝ Հայաստանի պատմության վերաբերյալ ինձ նյութեր տրամադրել:

Իմ զեկույցը սկսվում էր նախաքրիստոնեական և Քրիստոսից հետո ընկած դարաշրջանների մեր մշակույթից՝ տարբեր պատմական տեսարաններ և պատմական անցյալի տարբեր առաջնորդներին էկրանի վրա ցույց տալու միջոցով:

Սովորելով լեհերեն՝ հավաքեցի նյութեր և իմ առաջին զեկույցն արեցի 1923 թ. փետրվարի 23–ին Վարշավայի Կրակովյան արվարձանում, առևտրաարդյունաբերական պալատի դահլիճում: Իմ ելույթին հրավիրված էին Խորհրդային դեսպանատնից:

Հաջորդ օրը Լեհաստանի ներքգործնախարարը ինձ հրավիրեց իր մոտ և նախազգուշացրեց՝ այլևս ելույթներ չունենալ, քանի որ դա հակառակ է Դաշնակից պետությունների[164] քաղաքականությանը:

Դրա մասին ես բողոքեցի Լեհաստանի արտգործնախարարին՝ Սպիրմունդին, բայց վերջինս նույնպես պնդեց չչարաշահել Լեհաստանի հանրապետության հյուրընկալությունը, հակառակ պարագայում՝ ինձ կարտաքսեն:

Ես բողոքեցի Խորհրդային դեսպանատուն և նաև արքեպիսկոպոս Թեոդորովիչին:

Նա առաջարկեց ինձ ընդունվել Լեհական բանակ, ծանոթանալ իր մոտիկ ընկեր մարշալ Պիլսուդսկու[165] հետ և ասաց, որ ինձ համար լավ կլինի լեհական բանակում:

Ես կտրուկ մերժեցի՝ պատճառաբանելով, որ իմ ուժերը ես կտամ իմ հայրենիքին ծառայելուն, ուր շուտով պիտի գնամ:

Թեոդորովիչն ամեն կերպ համոզում էր ինձ չմեկնել Խորհրդային Միություն՝ շատ մռայլ գույներով նկարագրելով Միության դրությունը և ընդհանրապես այնտեղի վատ վերաբերմունքը զինվորականների հանդեպ: Առաջարկելով մնալ Լեհաստանում, ուր ապագա բանակում ինձ համար կլինեն փայլուն հեռանկարներ:

---

[164] Նկատի է ունեցել Անտանտային:

[165] Յուզեֆ Պիլսուդսկի (1867–1935). 1918–1922 թթ. եղել է Լեհաստանի դիկտատոր, մարշալ:

Ես կրկին հրաժարվեցի և ասացի, որ մեկնում եմ Խորհրդային Միություն:

Թեոդորովիչի հետ իմ ծանոթության մասին, դեռ ծանոթության սկզբում, ես հայտնել էի դեսպանատանը՝ Լորենցին, այն անձին, ով ինձ հանձնարարություն էր տվել և դեսպանատան հյուպատոս Լիպսկուն:

Լեհաստանում ոչ մի քաղաքական կազմակերպության կամ սպիտակգվարդիական խմբի հետ ծանոթություն չեմ հաստատել[166] և երբեք չեմ մտադրվել բացի վերոնշյալ դեմքերի:

ՀԱԱ, ֆ. 1191, ց. 16, գ. 1923, թթ. 135–140

[166] Հարցաքննության ժամանակ Մալինցյանը հաղորդում է Լեհաստանում իրեն ծանոթ այլ անձանց մասին. «Կնոջս՝ Վանդա Անտոնովնայի քրոջ ամուսինն էր լեհական բանակի 36–րդ գնդի ծառայող Էդուարդ Դիրձինսկին: Նա ծառայում էր Կուտնո քաղաքում տեղաբաշխված 36–րդ գնդում, գրասենյակային աշխատանքում»: Դիրձինսկու հետ ես ծանոթացա կնոջս՝ Վանդա Կավալևսկայայի (Մալինցյանը դեռևս չի խոստովանում երրորդ կնոջ անունը և նրան անվանում է երկրորդ կնոջ անունով, որի անձնագրով վերջինս ժամանել է ԽՍՀՄ և այդ անձնագրով էլ ապրել է) հետ այցի ժամանակ, որի հետ ես ամուսնացա 1922 թ. Լեհաստանում՝ Կուտնո քաղաքում: Այդտեղ էլ ես ծանոթացա նրա հոր հետ, որն աշխատում էր ապակու գործարանում և Նախման ազգանունով հորեղբոր հետ, որը գերմանական Լեհաստանի Գլյադենովկա խոշոր բնակավայրից էր»:

Խ. ՄԱԼԻՆՑՅԱՆԻ ԴԱՏԱՍՏԱՆԸ

ԹԻՎ 1
ՄԵՂԱԴՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ[167]

Մեղադրյալ Խ. Մալինցյանը, 1918–1920 թթ. ընթացքում լինելով Զանգեզուրի զինված ուժերի հրամանատարը, դաշնակների և մուսաֆաթական Ադրբեջանի միջև ռազմական գործողությունների ժամանակ գնդակահարել է ռազմաճակատ գնալուց հրաժարվող զինվորների և գյուղացիների, կոմկուսին պատկանելու կասկածանքով ահաբեկել և գնդակահարել է մարդկանց, նույնիսկ՝ անձամբ իր ձեռքով:

Կազմակերպել է թուրք ազգաբնակչության ջարդեր, թալանել և ծաղրուծանակի է ենթարկել նրանց:

Մեղադրյալի նշյալ գործողությունները հաստատվում են մի շարք վկաների ցուցմունքներով:

Դաշնակցական կառավարության կողմից կասկածվելով, որ մտադրություն ունի դառնալ անկախ Զանգեզուրի ռազմական դիկտատոր, դաշնակների կողմից ձերբակալվել է և դատապարտվել գնդակահարության: Բայց հետագայում դատավճիռը չպարզված պատճառներով փոխվել է և 1920 թ. նրան արտաքսել են Կ. Պոլիս:

Հետաքննության ընթացքում հենց մեղադրյալի ցուցմունքներով պարզվել է, որ Կ. Պոլսում հայտնվելու 3–րդ օրը, նրան է ներկայացել մի անգլիացի սպա և առաջարկել է անհապաղ ներկայանալ «Ինտելիջենս սերվիս»: Գնալով այնտեղ՝ նա ընդունվել է անգլիական գեներալ Շատելվորդի կողմից (որը Անդրկովկասում դաշնակից օկուպացիոն զորքերի նախկին հրամանատարն էր և որի հետ մեղադրյալը ծանոթ էր Զանգեզուրից):

Շատելվորդը նրանից հետաքրքրվել է Հայաստանի կացությամբ, Թուրքիայի և Ադրբեջանի դեմ Հայաստանի պատերազմներով, Հայաստանում բոլշևիկների խաղացած դերի և այլ հարցերով:

---

[167] Մեղադրական եզրակացություն, Հ–5140 գործի, քաղ. Խ. Հ. Մալինցյանի՝ ըստ ՀՍՍՀ ՔՕ–ի Հ–60, 63 և 67 հոդվածներով նախատեսված հանցանքների: Հաստատվել է ՀայՊՔՎ–ի նախագահ Գերասիմ Աբուլյանի կողմից 13.10.1932 թ.:

Նա մանրամասն ու սպառիչ պատասխաններ է տվել Շատելվորդին, որից հետո իբր նրանց խոսակցությունը ավարտվել է և նրանք այլևս չեն հանդիպել:

Նպատակադրված լինելով Փարիզում ընդունվել Ֆրանսիական գլխավոր շտաբի ակադեմիան, այդ նպատակով Կ. Պոլսում 3 թե 4 անգամ նա այցելել է պատրիարք Զավենին, որին խնդրել է աջակցել՝ ակադեմիա ընդունվելու համար:

Պատրիարք Զավենից ստանալով Փարիզում գտնվող Նուբար փաշային հասցեագրված հանձնարարական նամակ՝ Խ. Մալինցյանը մեկնել է Փարիզ՝ նրա մոտ:

Նուբար փաշայի հետ խոսելով ակադեմիա ընդունվելու մասին՝ Խ. Մալինցյանը նրա միջոցով ծանոթանում է ֆրանսիական բանակի գեներալ Դելակրուայի հետ: Վերջինս մանրամասն տեղեկանալով նրա զինվորական ծառայության և գործունեության մասին՝ խոստանում է ակադեմիա ընդունվելու գործում օգնել նրան, առաջարկելով որոշ ժամանակ անց ներկայանալ պատասխանի համար:

Նշանակված օրը ներկայանալով Դելակրուային՝ Խ. Մալինցյանը ակադեմիա ընդունվելու մերժում է ստանում, քանի որ արդեն հայերից ունեին թեկնածու՝ ոմն Եղիազարյանի:

Այդ անհաջողությունից հետո Պողոս Նուբար փաշան առաջարկում է նրան՝ որպես սպա մտնել զինվորական ծառայության ֆրանսիական գաղութային բանակ, որ այնտեղ նրա համար լավ հեռանկարներ կլինեն և այլն:

Այդ առաջարկին Խ. Մալինցյանը իբր չի համաձայնվել՝ պատճառաբանելով՝ թե քանի որ Ակադեմիա ընդունվել չի հաջողվել, հստակ որոշել է հետ գնալ հայրենիք:

Այդ ընթացքում Պողոս Նուբար փաշայի մոտ Խ. Մալինցյանը ծանոթացել է նախկին Պետ. Դումայի անդամ Միխայիլ Բաբաջանովի հետ, իսկ նրա միջոցով էլ՝ Փարիզում ՍՍՀՄ Առևտրի ներկայացուցիչ Սկոբելևի հետ:

Ակադեմիա ընդունվելու անհաջողությունից հետո Խ. Մալինցյանը խնդրել է Սկոբելևին աջակցել մեկնելու ՍՍՀՄ: Սկոբելևը երաշխավորական նամակ է տալիս՝ ուղղված Բեռլինում ՍՍՀՄ լիազոր հավատարմատարությանը:

Բեռլինի ՍՍՀՄ լիազոր հավատարմատարությունում նրան խորհուրդ են տալիս մեկնել Վարշավա և այնտեղ հոգալ ՍՍՀՄ մեկնելու մասին:

Վարշավայում դեսպանատան քարտուղար Լորենցը առաջարկում է նրան դիմում տալ ՍՍՀՄ Կենտգործկոմի անունով, որը և արվում է:

Մինչ ՍՍՀՄ մեկնելու թույլտվության ստանալը՝ «շրջապատ ստեղծելու» դեսպանատան առաջադրանքի կատարման նպատակով Խ. Մալինցյանը մի քանի զեկուցումներ է կարդում Հայաստանի մասին: Այդ ժամանակ էլ խորհուրդ են տալիս նրան դիմելու Լեհական Սեյմի անդամ Արքեպիսկոպոս Թեոդորովիչին՝ որպես Հայաստանի գիտակի:

Խ. Մալինցյանը դիմում է նրան և վերջինս հավանության է արժանացնում նրա նախաձեռնությունը: Խ. Մալինցյանը նրանից առաջարկ է ստանում այդպիսի զեկույցներով հանդես գալ Լեհաստանի ուրիշ քաղաքներում ևս: Եվ իբր հետագայում Խ. Մալինցյանը հրաժարվում է հանդես գալ զեկույցներով՝ պատճառաբանելով, որ շուտով մեկնելու է ՍՍՀՄ:

Արքեպիսկոպոս Թեոդորովիչը խորհուրդ է տալիս Խ. Մալինցյանին չմեկնել ՍՍՀՄ՝ առաջարկելով, որ նա որպես սպա մտնի Լեհական բանակ և հովանավորության համար առաջարկում է ծանոթացնել Պիլսուդսկու հետ, բայց մեղադրյալը կտրականապես մերժում է նրա բոլոր առաջարկները:

Դեսպանատուն նրա այցի ժամանակ աշխատակիցներից մեկի կողմից, որի ազգանունը մեղադրյալը չի հիշում, Խ. Մալինցյանը հավաքագրվել է «Լուսին» կլիչկայով՝ պարզելու համար, թե ինչ ուղիներով են Վրաց մենշևիկյան սպաները գրագրություն վարում ՍՍՀՄի հետ և ում միջոցով են ուղարկում փոստը, որի համար նրան առաջարկվում է կապվել այդ սպաների հետ և պարզել, թե ով է մտնում ռազմական դպրոց: Իբր անմիջապես էլ ստորագրություն է վերցվել նրանից՝ այդ մասին չհայտնելու:

Այդ մասով նրան ոչ մի էական բան չի հաջողվում պարզել և կապը դեսպանատան այդ ընկերոջ հետ մեխանիկորեն ընդհատվում է 1922 թվին:

Դեսպանատուն հաճախակի այցելելու պատճառով Խ. Մալինցյանը երկու անգամ ձերբակալվել է լեհական ոստիկանության կողմից, ընդ որում՝ երկրորդ անգամ բնակարանի խուզարկությամբ, որի մասին իր կողմից

հայտնվել է ընկ. Լիպսկուն, նախկին՝ այդ ժամանակվա հյուպատոսին:

Իր երկրորդ ձերբակալման առիթով նա լինում է Լեհաստանի ՆԳ նախարարի մոտ (ազգանունը չի հիշում), որը հետաքրքրվել է նրա Վարշավա այցի, ԽՍՀՄ դեսպանատուն այցելությունների պատճառների մասին՝ առաջարկելով այսուհետև դադարեցնել հետագա բոլոր այդ այցերը:

Խ. Մալինցյանը, վկայակոչելով իր նյութական ծանր դրությունը, խնդրել է ՆԳ նախարարին ընդհանրապես արգելել Լեհաստանում իր ապրելը՝ հույս հայտնելով, որ դա կստիպի Սով. դեսպանատանը և կշտապեն մեկնելու թույլտվություն տալ իրեն:

ՆԳ նախարարի կողմից այդպես էլ արվում է և փաստաթղթերում նշում է արվում, որ նրան թույլատրվում Լեհաստանի սահմաններում ապրել 4 օրից ոչ ավել:

Այդ նշումով ներկայանալով Սով. դեսպանատուն՝ 3–րդ օրը նրան թույլատրվում է մեկնել ՍՍՀՄ:

Արտասահմանում իր գտնվելու ընթացքում Հայաստանի դրության և բոլշևիկների առաջխաղացման մասին նա մանրամասն տեղեկություն է տվել «Ինտելեժանս–Սերվիս»–ում աշխատող գեներալ Շատելվորդին, Պատրիարք Զավենին, ֆրանսիական գեներալ Դելակրուային և Արքեպիսկոպոս Թեոդորովիչին:

Զանգեզուրի զինված ուժերի հրամանատար եղած ժամանակ Խ. Մալինցյանը մի քանի անգամ հանդիպել է վերոհիշյալ անգլիացի Շատելվորդին, կապիտան Գովանսին, կապիտան Թաուզենդին, մայոր Գիբոնին, ֆրանսիացի մայոր Դե–Ժերվեին, որոնց տեղեկություն է տվել դաշնակցական բանակի մարտունակության և բոլշևիկների գործողությունների մասին:

ՍՍՀՄ մեկնելու թույլտվություն ստանալով՝ Խ. Մալինցյանը Վարշավայից մեկնում է Մոսկվա՝ իր հետ վերցնելով լեհահպատակ քաղաքացուհի Յուզեֆա Մարցելևնա Նախմանին, որի հետ ամուսնացել էր Վարշավայում, ընդ որում՝ իր առաջին կնոջ՝ Վանդա Կավալևսկայայի փաստաթղթերով, որը մնացել էր Լեհաստանում և մինչև հիմա Նախմանը ապրում է ՍՍՀՄ–ում՝ որպես Կավալևսկայա:

1923 թ. հուլիսին ժամանելով Մոսկվա՝ Խ. Մալինցյանը որոշ ժամանակ

անց որպես լիազոր ներկայացուցիչ, աշխատանքի է ընդունվում խոշոր սպեկուլյանտ, Գորիսի բնակիչ Հովհաննես Գևորգովի մոտ, որը զբաղվում էր Գուսևսկու կոմբինատին բամբակ մատակարարելով և «ВОКС»–ի միջոցով Լատվիական միսիային խավիար մատակարարելով:

Իբր նշված առևտրական գործերով մեղադրյալը մի քանի անգամ այցելել է Լատվիական միսիա, որը բացատրում է հետևյալ պատճառով: Գևորգովը պայմանագիր ունենալով «ВОКС»–ի հետ՝ 5 000 ֆունտ ստեռլինգով 6 000 փութ ձկան խավիար մատակարարելու մասին, մատակարել է ընդամենը 50 փութ:

Այդ հողի վրա միսիան մտադրվում է գործը տալ դատարան և այդ գործը կարգավորելու նպատակով՝ որպես վստահյալ ներկայացուցիչ, նա գնացել է Լատվիական ներկայացուցչություն և միսիայից մի քանի անգամ եկել են իր մոտ:

Լեհաստանից մեկնելիս դրամ չունենալով՝ ճանապարհի համար նա իր աներոջից փոխ էր վերցրել մեկ միլիոն լեհական մարկ և ընդունվելով աշխատանքի, ցանկացել էր այդ փողերը փոխանցել Լեհաստան: Բայց քանի որ ոչ Պետբանկը, ոչ էլ Փոստը կոնվենցիա չունեին, նա կնոջ հետ մտել է լեհական հյուպատոսություն և մի աշխատակցի միջոցով Վարշավա են ուղարկել 100 կամ 50 դոլարներով (գումարը չի հիշում)[168]:

Հովհաննես Գևորգովի հետ բոլոր հաշիվները ավարտելով՝ Խ. Մալինցյանը 1926 թ. մեկնում է Էրիվան, որտեղ ծառայել է տարբեր հաստատություններում՝ որպես հաշվային աշխատող:

Վկաների ցուցմունքներով հաստատվել է, որ 1931 թ. մայիսին, մե-

---

[168] Խ. Մալինցյանը հարցաքննության ժամանակ պատմում է. «Վարշավայից մեկնելիս, քանի որ փող չունեի, ես մեկ միլիոն լեհական մարկ փող պարտք վերցրեցի աներոջիցս և Մոսկվայում պարտք վերցնելով իմ հեռավոր ազգական Գևորկովից 1 000 ռուբլի՝ ցանկացա ուղարկել Լեհաստան՝ աներոջս պարտքը մարելու համար: Բայց քանի որ ոչ փոստը և ոչ էլ բանկը ինձնից փոխանցումը չվերցրեցին, ես ստիպված էի չերվոնեց փողերը փոխել դոլարների և կնոջս հետ գնացի Սուխարևոյում գտնվող լեհական հյուպատոսություն: Մտնելով գրասենյակ՝ մենք դիմեցինք աշխատակիցներից մեկին, որի ազգանունը և պաշտոնը չհարցրեցինք: Կինս բացատրեց նրանց մեր այցի նպատակը, այսինքն, որ ցանկանում ենք փող փոխանցնել: Այդ աշխատակիցը անմիջապես համաձայնվեց փողը ուղարկել և մեզ տվեց մեզնից փող ստանալու մասին ստացական: Նամակով հայտնի դարձավ, որ աներս այդ փողերը ստացել է»:

ղադրյալը ընդունվել է աշխատանքի «Հայծուկ» տրեստ, ուր մինչև ձերբակալվելը, տրեստի աշխատողների մեջ տարել է հակասովետական ագիտացիա՝ գտնվելով կալանքի մեջ՝ բանտախցում ևս տարել է հակասովետական և հակահեղափոխական զրույցներ[169], կոպիտ է վարվել աշխատողների հետ, որի համար «Հայծուկ»–ի գրասենյակի կողմից կանչվել է ոստիկանական վարչություն:

Իրեն ամենուր անվանել է գնդապետ, որն ավարտել է Փարիզի գենշտաբի Ակադեմիան:

Միաժամանակ, մտադրված լինելով անլեգալ անցնել Պարսկաստան, ուր այնուհետև միանալ ընտանիքի հետ, Ելենովկայից հաճախ գալով Երևան, Խ. Մալինցյանը հանդիպում էր կասկածելի թուրքերի հետ, բայց հանդիպումների նպատակը պարզված չէ[170]:

1931 թ. վերջին Խ. Մալինցյանը կնոջ հետ այցելել է Թիֆլիսի լեհական հյուպատոսություն՝ իբր այն պատճառով, որ կինը ցանկանում է երեխաների հետ մեկնել Լեհաստան՝ հարազատների հետ տեսնվելու համար:

Բայց իբր հյուպատոսը հայտնել է, որ մեկնումը կապված է մեծ դժվա-

---

[169] Այս մեղադրանքի համար հիմք են ընդունել որոշ ժամանակ Խ. Մալինցյանի բանտախուցն ուղարկված ոմն Ա. Մամյանի մատնագիրը՝ գրված 07.09.1932 թ., թերթոնների վրա: «Սրանով ուզում եմ հայտնել հ–4 կամերայի կալանավոր Մալինցյանի մասին, նրա՝ հոգով գաղափարով դաշնակցական ու հակահեղափոխական լինելու մասին: Նա անուղղելի է: Ինքն իր մասին ասում է, որ ինքը Հայ հեղ. դաշնակցության անդամ է: Ասում է. «Ես գնդապետ եմ, մեծ մարդ եմ և սով. իշխանությունը շան պես դողում է ինձնից»»: Հայհոյում է ընկեր Լենինին, որն անհարմար եմ համարում ամբողջովին մեջբերել բառացի: Հետո ասում էր, որ թանկ իրեր ունի և երբ տեսնվեցի կնոջս հետ, կինս համբուրելու ժամանակ ականջիս ասաց, որ հանգիստ լինեմ, որ խուզարկության ժամանակ թաքցված իրերը չեն գտել: Թուղթ չլինելու պատճառով բոլորը գրել չեմ կարող: Եթե կարիք լինի, բառացի կասեմ բոլորը»:

[170] Այդ մասին նա հայտնել է հարցաքննություններից մեկի ժամանակ. «1930 թ., երբ ինձ ձայնի իրավունքից զրկեցին, մի անգամ ես մտածեցի կեղծ բաժանվել կնոջից և նա վերականգնելով իր լեհական հպատակությունը և երեխաների հետ գնա Լեհաստան, իսկ ես անլեգալ կգնամ Պարսկաստան: Բայց դա միայն մտքովս եմ անցկացրել և ոչ մի միջոցառում դա իրագործելու համար չեմ կատարել և նույնիսկ կնոջս դա չեմ ասել և գլխիցս բոլորովին դուրս եմ արել այդ միտքը»:

ությունների հետ, նրանք թողել են այդ միտքը:

Զբաղեցրած լինելով «Հայծուկ»–ի գլխավոր հաշվապահի պաշտոնը՝ Խ. Մալինցյանը չարաշահել է իր դիրքը, թույլ տալով յուրացնել պետական փողերը (քանակը չի հաստատված) և կատարել է մի շարք կոմբինացիաներ դրամական փաստաթղթերով և «առձեռն գումարներով»…

Իր ցուցմունքներով Խ. Մալինցյանը ժխտում է կոմունիստների գնդակահարությունները, թուրքական գյուղերի ավերումները և ընդհանրապես բնակչության ահաբեկումները, բացառությամբ ճակատը դասալքած երկու զինվորների գնդակահարությունը: Եվ, ըստ նրա, դա արվել է զանգվածային դասալքությունը կանգնեցնելու նպատակով, որին իբր նա հասել է:

ՍՍՀՄ գալուց հետո օտարերկրյա հայտնի քաղաքական ու ռազմական գործիչների հետ կապերի հարցում կտրականապես ժխտում է իրեն օգտագործելու նպատակով նրանց կողմից լրտեսության և հավաքագրման պահը:

Խ. Հ. Մալինցյանը՝ ծնվ. 1888 թ. Զանգեզուրի գավառի ք. Գորիսում, ՍՍՀՄ քաղաքացի, անկուսակցական, երկդասյա կրթությամբ, ամուսնացած, մինչ ձերբակալվելը Ելենովկայի բնակիչ, 1927 թ. դատի տրված տնտեսական հանցանքի համար և մեկ տարի պայմանական դատապարտված, բայց Հոկտեմբերյան հեղափոխության 10–ամյակի առիթով ներման արժանացած, մեղադրվում է.

1. 1918–20 թթ. գնդակահարել և ահաբեկել է ինչպես բնակչությանը, այնպես էլ ընդհատակյա բոլշևիկյան կազմակերպության առանձին անդամների:

2. Լինելով արտասահմանում՝ կասկածելի կապեր է հաստատել քաղաքական ու ռազմական գործիչների հետ, ինչպես նաև օտարեկրյա հետախուզությունների առանձին աշխատակիցների հետ:

3. ԽՍՀՄ–ում գտնվելու ժամանակ բազմիցս այցելել է արտասահմանյան ներկայացուցչություններ (լեհական, լատվիական):

4. Ելենովկայի «Հայծուկ»–ի բանվորների մեջ՝ վարել է հակասովետական զրույցներ՝ չարաշահելով իր ծառայողական դիրքը:

5. Մտադրություն է ունեցել անլեգալ անցնել սահմանը:

Մեղադրյալին մեղսագրվող հանցանքները նախատեսված են ՀՍՍՀ ՔՕ 60, 63 և 67–րդ հոդվածներով:

Տվյալ գործով հետաքննությունը համարել ավարտված և ՀայՊՔՎ–ի դատախազի միջոցով ներկայացնել ՀայՊՔՎ–ի հատուկ հանձնաժողովի կոլեգիայի լսմանը:

Կազմված է 9.10.1932 թ., ք. Էրիվան[171]

ՀայՊՔՎ–ի ՕՕ 1–ին բաժնի լիազոր՝ /Պ./ Աբուլյան

ՀԱԱ, ֆ. 1191, ց. 16, գ. 1923, թթ. 128–130

[171] «Միանում եմ» – ՀայՊՔՎ–ի 1–ին բաժնի պետի տեղակալ՝ Գրիգորյան: «Համաձայն եմ» – ՀայՊՔՎ–ի 1–ին բաժնի պետ՝ Սայադյան: Տեղեկանք՝ «Ձերբակալվածը 1932 թ. մարտի 4–ից կալանքի մեջ է ՊՔՎ–ին կից պարետատանը»:

Թիվ 2
ԽՈՒԶԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
(4.03.1932 թ.:)

ՀՊՔվ հրամանի համաձայն՝ կատարված է խուզարկություն Ամիրյան փողոցի հ–70 տանը գտնվող Խ. Հ. Մալինցյանի բնակարանում: Խուզարկության ընթացքում ՀՊՔՎ–ի կողմից հայտնաբերվել և առգրավվել է հետևյալը.

1. Դրամ՝ 11886 ռուբլի:
2. Դիապոզիտիվների երկու տուփ:
3. Անդրկովկասի և Թուրքիայի 5–վերստանոց քարտեզ՝ 9 էջ:
4. «Շինարար» ակցիոներական ընկերություն կնիքով մաքուր թուղթ:
5. Սևանա կղզու հանքահանածոների քարտեզ:
6. Լուսանկարներ և անձնական ու գործնական գրագրություններ՝ պորտֆելի և պապկայի մեջ:
7. Արծաթե հին դրամանիշներ՝ (ամերիկյան, ֆրանսիական և ավստրիական):

Ստացական

Առգրավված 11886 ռուբլուց հետ ստացա 400 ռուբլի:

Վանդա Մալինցյան, 5.03.1932 թ.

ՀԱԱ, ֆ. 1191, ց. 16, գ. 1923, թ. 4

ԹԻՎ 3
ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾԻ ԱՆՁՆԱԹԵՐԹԻԿ[172]

15.01.1933 թ.,

Ծնվել է 1888 թ. սեպտեմբերի 19–ին, Ելիզավետապոլի նահանգի Գորիս քաղաքում:

Բնակության հասցեն՝ ք. Էրիվան, Ամիրյան–70, բն. 4:

Ընտանիքի կազմը

Կինը՝ Վանդա՝ 36 տ.

Դուստրը՝ Արմենահիդա՝ 9 տ., աշակերտուհի:

Որդին՝ Լորիս՝ 8 տ., մանկապարտեզ:

Սոցիալական դրությունը՝ ծառայող:

Ծառայությունը ցարական բանակում՝ պարուչիկ:

Ծառայությունը դաշնակցական բանակում՝ գնդապետ:

Ծառայությունը՝ Կարմիր բանակում՝ 7–րդ խումբ:

Սոցիալական ծագումը՝ գյուղացի:

Անկուսակցական:

ՀԱԱ, ֆ. 1191, ց. 16, գ. 1923, թթ.133–134

[172] Լրացված է Խ. Մալինցյանի կողմից՝ ըստ Անդրկովկասի ՊՔՎ–ի լիազոր–ներկայացուցչության տրված հարցերի:

<u>ԹԻՎ 4</u>
ՔԱՂՎԱԾՔ ՀԱՅՊՔՎ–Ի ԴԱՏԱԿԱՆ ԿՈԼԵԳԱՅԻ ԴԱՏԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ

14.10.1932 թ.,

ՔՕ 60, 63, 67 հոդվածների համաձայն՝ Խ. Հ. Մալինցյանին՝ ծնված 1888 թ., բանտարկել Համակենտրոնացման ճամբարում 5 տարով՝ ժամկետը հաշվելով 07.03.1932 թ–ից:

Հայ ՊՔՎ–ի քարտուղար՝ Գյուզալյան

ՀԱԱ, ֆ. 1191, ց. 16, գ. 1923, թ. 132

<u>ԹԻՎ 5</u>
ՔԱՂՎԱԾՔ ՍՍՀՄ ՊՔՎ–Ի ԴԱՏԱԿԱՆ ԿՈԼԵԳԱՅԻ ԴԱՏԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ

26.02.1933 թ.,

Հ–60, 63, 67 հոդվածների համաձայն՝ Խ. Հ. Մալինցյանին՝ ծնված 1888 թ., բանտարկել Համակենտրոնացման ճամբարում 5 տարով՝ ժամկետը հաշվելով 7.03.1932 թ–ից:

Անդր. ՊՔՎ–ի քարտուղար՝ Մորոզով

ՀԱԱ, ֆ. 1191, ց. 16, գ. 1923, թ. 142

ԹԻՎ 6
ՄՈՍԿՎԱ, ՀՊՔՎ–Ի ՆԱԽԱԳԱՀԻՆ[173]
ԴԻՄՈՒՄ

18.05.1933 թ., ք. Երևան, Ամիրյան փ., 70:

Ամուսինս՝ Քրիստափոր Մալինցյանը, ՀայՊՔՎ–ի կողմից ձերբակալվել է Երևանում դեռևս 04.03.1932 թ.: Միայն 8 ամիս անց նրա գործը քննվեց Հայ.ՊՔՎ–ի կողմից, որն էլ ուղարկեց Թիֆլիս՝ Անդր.ՊՔՎ–ի հաստատմանը:

Դրանից հետո՝ շուտով՝ 1932 թ. վերջին, նա ինքը տեղափոխվեց Թիֆլիս՝ Անդր.ՊՔՎ–ի տրամադրության տակ, ուր գտնվում է մինչև հիմա:

Քննիչի պաշտոնական հայտարարության համաձայն՝ ամուսնուս գործը ուղարկված է Մոսկվա՝ ՀՊՔՎ–ին՝ դատավճիռը հաստատելու համար:

Ահա ձերբակալման օրվանից անցել է 14 ամիս, բայց մինչև հիմա անհայտ է վերջնական դատավճիռը:

Ինձ համար (ձեռքիս ունենալով երկու փոքրահասակ երեխաներ) այդ իրավիճակը ստեղծում է ծանր կացություն, քանի որ ամուսնուս ճակատագրի անհայտությունը ինձ պահում է անելանելիության մեջ Հայաստանում, ինձ՝ լեհուհուս համար բոլորովին օտար երկրում:

Վերոշարադրյալի հիման վրա թախանձագին խնդրում եմ ամուսնուս՝ Քրիստափոր Հարությունի Մալինցյանի գործի շուտափույթ լուծում՝ դրանով իսկ ազատ արձակել ձեռքերս՝ միայն երեխաներիս ճակատագրի մասին հոգ տանելու:

Երևանի քաղաքացի Վանդա Անտոնովնա Մալինցյան
ՀԱԱ, ֆ. 1191, ց. 16, գ. 1923, թ. 144

---

[173] Հավանաբար կնոջ բողոքարկումների հետևանքով է, որ դատավճռի ժամկետը կրճատվում է:

ԹԻՎ 7
ՔԱՂԱՔԱՑԻ ՀՊՔՎ–Ի ԴԱՏԱԿԱՆ ԿՈԼԵԳԱՅԻ ԴԱՏԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ

10.06.1933 թ.,

Հ–58/6 հոդվածի համաձայն՝ Խ. Հ. Մալինցյանին՝ ծնված 1888 թ., աքսորել ՊՊՕ ՊՔՎ–ի կողմից Արևմտյան Սիբիր 3 տարով՝ ժամկետը հաշվելով 4.03.1932 թ–ից:

Գործը հանձնել արխիվ:

Անդր ՊՔՎ–ի քարտուղար
ՀԱԱ, ֆ. 1191, ց. 16, գ. 1923, թ. 143

ԹԻՎ 8
ՍՍՀՄ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆԸ, Ք. ՄՈՍԿՎԱ

1937 թ. ձերբակալվեց ամուսինս՝ Մամերտ Իոսիֆի Գրախոլսկին (Խաչատուր Հարությունի Մալինցյանը)՝ ծնված 1888 թ. ՀՍՍՀ Գորիս քաղաքում: Մինչև ձերբակալվելը, (ամուսինս) մշտապես ապրում էր Կիև քաղաքում: Ձերբակալվել է ժամանակավորապես Մոսկվայում գտնվելու ընթացքում: Ամուսնուս ճակատագիրը մինչև հիմա ինձ անհայտ է: Ես ցանկանում եմ իմանալ նրա ճակատագրի մասին և եթե անհրաժեշտ լինի, դիմել նրան արդարացնելու խնդրանքով:

Ուստի թախանձագին խնդրում եմ հայտնել՝ որտեղ է գտնվում ամուսնուս գործը, և ուր պետք է դիմեմ հիշյալ խնդրանքով:

Վանդա Մարցելևնա Նախտման

Ք. Լվովում, Ռիլսկի փողոց 6, բնակ. 10
11 մարտի, 1965 թ., Ք. Լվով
ՀԱԱ, ֆ. 571, ց. 5, գ. 4600, թ. 6

ԹԻՎ 9
ՀՍՍՀ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆԸ[174]

1932 թ. Երևան քաղաքում ձերբակալվեց 1888 թ. Գորիս քաղաքում ծնված ամուսինս՝ Խ. Հ. Մալինցյանը: Ամուսնուս ճակատագիրը մինչև հիմա ինձ անհայտ է: Մինչ ձերբակալվելը նա մշտապես բնակվում էր Երևան քաղաքում: Ես ցանկանում եմ իմանալ նրա ճակատագրի մասին և եթե հարկ լինի, դիմել նրան արդարացնելու խնդրանքով: Ուստի թախանձագին խնդրում եմ Ձեզ՝ հայտնել, թե որտեղ է գտնվում ամուսնուս գործը, և ուր պետք է դիմել հիշյալ խնդրանքով:

Վանդա Մարցելևնա Նախտման

ք. Լվովում, Ռիլսկի փողոց– 6, բնակ. 10
30–ը մարտի, 1965 թ.
ՀԱԱ, ֆ. 1191, ց. 16, գ. 1923, թ. 151

ԹԻՎ 10
ՆՈՎՈՍԻԲԻՐՍԿԻ ՄԱՐԶԻ ԴԱՏԱԽԱԶԻՆ

1932 թ. Երևանում ձերբակալվեց ամուսինս՝ Խ. Հ. Մալինցյանը՝ ծնված 1888 թ.[175] ՀԽՍՀ Գորիս քաղաքում:

1933 թ.[176] պատիժը կրելու համար (ազատ աքսոր) նշանակվում է ք. Նովոսիբիրսկ, ուր հաշվառման էր կանգնած ՊՔՎ–ի օրգաններում:

Մինչև ձերբակալվելը նա մշտապես ապրում էր Երևան քաղաքում:

Ամուսնուս ճակատագիրը մինչ հիմա ինձ անհայտ է:

Ես ցանկանում եմ իմանալ նրա ճակատագրի մասին և եթե կարիք լինի, դիմել խնդրանքով՝ նրան արդարացնելու համար:

---

[174] Դիմումում և ծննդյան, և ձերբակալման թվերը սխալ են տրված:
[175] Դիմումում սխալմամբ գրված է 1892 թ.:
[176] Դիմումում թյուրիմացաբար գրված է 1932 թ.:

Ուստի թախանձագին խնդրում եմ Ձեզ, հայտնել, թե որտեղ է գտնվում ամուսնուս գործը և ուր պետք է դիմեմ հիշյալ խնդրանքով:

Վանդա Մարցելևնա Նախտմանից
20–ը ապրիլի, 1965 թ.

ՀԱԱ, ֆ. 1191, ց. 16, գ. 1923, թ. 152

ԹԻՎ 11
ՊԱՀԱՆՋԱԳԻՐ

Խնդրում ենք ստուգել և տալ տեղեկանք 1892 թ. ծնված Մամերտ Իոսիֆովիչ Գրախոլսկու (Խաչատուր Հարությունի Մալինցյանի) մասին:
Վերջին դատվածությունը (եթե դատված է եղել)՝ 1937 թվականին:
Հարկավոր է ամբողջական տեղեկանք:

Կիևի մարզի դատախազի տեղակալ՝
Ա. Խրիենկո
26.04.1965 թ.
ՀԱԱ, ֆ. 571, ց. 5, գ. 4600, թ. 5

ԹԻՎ 12
ՏԵՂԵԿԱՆՔ

Ըստ ՔՕ 58–6 հոդվածի մեղադրվող Խաչատուր Հարությունի Մալինցյանը ՀՊՔՎ–ի Հատուկ Խորհրդակցության 10.04.1933 թ. նիստով դատապարտվել է 3 տարվա աքսորի՝ Արևմտյան Սիբիր:

Արխիվային–հետաքննչական հ–9483 գործը պահվում է ՀՍՍՀ ՊԱԿ–ում: 1937 թ. դատվածության մասին տվյալներ մեզ մոտ չկա:

Տեղեկանքը կազմեց՝ Կազլովա
ՌՍՖԽՀ Հասարակական կարգի պահպանության մինիստրության առաջին հատուկ բաժնի աշխատակից

30.04.1965 թ.
ՀԱԱ, ֆ. 571, ց. 5, գ. 4600, թ. 5

ԹԻՎ 13
ՈՐՈՇՈՒՄ[177]

Վերանայելով Խաչատուր Հարությունի Մալինցյանի հետաքննչական–արխիվային Հ–5140/9483–58 գործը՝ կապված կնոջ Վ. Մ. Նախտմանի՝ ամուսնուն արդարացնելու դիմումի

Պարզեցի

ՀՊՔՎ–ի կոլեգիայի հատուկ խորհրդակցության 10.06.1933 թ. դատավճիռը, ըստ ՀՍՍՀ ՔՕ–ի 60, 63 և 67 հոդվածների, 1888 թ. Գորիսում ծնված, կրթված, նախկինում դատված, ձերբակալման պահին «Հայձուկ» տրեստում որպես գլխ. հաշվապահ աշխատող Խ. Հ. Մալինցյանին աքսորել Սիբիր՝ 3 տարով:

Դատական եզրակացության համաձայն՝ Խ. Հ. Մալինցյանը մեղավոր է ճանաչվել, որ նա 1918–1920 թթ. լինելով Զանգեզուրում դաշնակցական զորքերի հրամանատարը՝ գնդակահարել և ահաբեկել է բնակ-

[177] ՊԱԿ–ի օրգաններում հետաքննության վերահսկողության գծով ՀՍՍՀ դատախազի օգնական Ս. Ա. Բարխուդարովի սույն որոշումը հաստատված է ՀՍՍՀ դատախազ Վ. Մ. Մուսախանյանի կողմից:

չությանը, ընդհատակյա բոլշևիկյան կազմակերպությունների առանձին անդամների:

Գտնվելով արտասահմանում՝ կասկածելի կապեր է հաստատել քաղաքական և ռազմական գործիչների հետ, նույնպես և օտարերկրյա հետախուզությունների ներկայացուցիչների հետ:

ՍՍՀՄ–ում բազմիցս այցելել է օտարերկրյա ներկայացուցչություններ՝ մտադրված լինելով անլեգալ անցնել սահմանը և «Հայծուկ» տրեստի բանվորների մեջ տարել է հակասովետական զրույցներ:

Նշված մեղադրանքները, բացառությամբ 1918–1920 թթ., առարկայական ապացուցմամբ չեն հաստատված և կառուցված են միայն ենթադրությունների հիման վրա, արված բացառապես հենց Մալինցյանի ցուցմունքների հիման վրա, որոնց էությունը հանգում է նրան, որ նա լոյալ է վերաբերվել Սով. իշխանությունների նկատմամբ, և նրա հանդեպ որևէ հանցանք չի կատարել:

Խ. Մալինցյանի հակահեղափոխական գործունեությունը հաստատվում է բազմաթիվ վկաների ցուցմունքներով, 1932 թ. գործով ու ներկա ստուգումներով և իր մասնակի խոստովանությամբ:

Ինչպես երևում է այդ նյութերից, Խ. Մալինցյանը, լնելով դաշ.բանակի գնդապետ, 1918 թ–ից մինչև 1920 թ. մայիսը եղել է Զանգեզուրի զինված ուժերի հրամանատարը, կապված լինելով դաշնակ լիդերներ Դրոյի, Նժդեհի հետ՝ վայրագություններ է կատարել՝ կազմակերպել թալաններ և նաև՝ ծեծ ու գնդակահարություններ:

1930 թ. զրկվել է ձայնի իրավունքից և որպես քաղաքականապես անհարազատ տարր՝ հանվել է ՐԿԿԱ–ի ղեկավար կազմից:

Վերոշարադրյալից ելնելով և հաշվի առնելով, որ տվյալ պարագաներում Խ. Մալինցյանի գործի բողոքարկման համար հիմքեր չկան՝ ուստի և առաջնորդվելով ՀՍՍՀ ՔԿՕ 373 հոդվածով

ՈՐՈՇԵՑԻ

ՀՊՔՎ–ի՝ 10.06.1933 թ. որոշումը՝ Խ.Մալինցյանին 3 տարով աքսորելու մասին, բողոքարկման ենթակա չէ դրա համար հիմքերի բացակայության պատճառով:

Վերահսկողության կարգով հետագա վարույթը՝ ըստ Վ. Մ. Նախտ-

մանի բողոքարկման, դադարեցնել, և այն թողնել առանց բավարարման, որի մասին հայտնել դիմողին:

20.09.1965 թ., ք. Երևան
ՀԱԱ, ֆ. 1191, ց. 16, գ. 1923, թ. 184

<u>ԹԻՎ 14</u>
ՔԱՂԱՔԱՑՈՒՀԻ ՎԱՆԴԱ ՄԱՐՑԵԼԵՆԱ ՆԱԽՄԱՆԻՆ
(ք. Լվով, Ռիլսկի փողոց– 6, բն. 10)

Ձեր բողոքի կապակցությամբ՝ մեր կողմից վերահսկողական կարգով պահանջվել և ուսումնասիրվել է Խ. Ա. Մալինցյանի քր. գործը, որը 1933 թ. դատապարտվել է երեք տարվա աքսորի:

Գործի ստուգմամբ հաստատվել է, որ Խ. Ա. Մալինցյանի 1933 թ. դատապարտությունը հիմնավոր է և Ձեր բողոքը նրա գործի բողոքարկման համար՝ հիմքերի բացակայության պատճառով թողնվել է առանց բավարարման:

ՀՍՍՀ դատախազի օգնական, արդարադատության խորհրդական՝
Ս. Բարխուդարով

ք. Երևան
22.09.1965 թ.
ՀԱԱ, ֆ. 1191, ց. 16, գ. 1923, թ. 186

ԹԻՎ 15
ՀԵՌԱԳԻՐ[178]

3.08.1965 թ., Երևան, ՊԱԿ, Ծատուրյանին.

Մալինցյանի դատվածության, ինչպես նաև նրա հետագա ճակատագրի մասին տեղեկություններ չկան:

Մոսկվա, Նիկիտին
ՀԱԱ, ֆ. 1191, g. 16, գ. 1923, թ. 174

ԹԻՎ 16
ՏԵՂԵԿԱՆՔ

Մեր Հ–0985 (հարցումին) ՍՍՀՄ ՊԱԿ–ից հայտնեցին, որ Մալինցյանի մասին տեղեկություններ չունեն[179]:

ՀՍՍՀ ՀՍՍՀ ՄԽ կից ՊԱԿ–ի հետաքնն. բաժնի պետ

9.08.1965 թ.
ՀԱԱ, ֆ. 1191, g. 16, գ. 1923, թ. 180

---

[178] Սա պատասխանն է ՀՍՍՀ ՊԱԿ–ի քնչական բաժնի պետ մայոր Ծատուրյանի՝ առ 30.07.1965 թ. հարցումին (ՀԱԱ, ֆ. 1191, g. 16, գ. 1923, թ. 173)՝ ուղղված Москва, 1 спецотдел МООП РСФСР. «Գործի վերանայման հետ կապված՝ խնդրում ենք շտապ ստուգել և հաղորդել Խ. Հ. Մալինցյանի գտնվելու վայրի մասին, որը ՀՊՔՎ–ի Հատուկ Հանձնաժողովի 10.06.1933 թ. որոշմամբ աքսորվել է Արևմտյան Սիբիր՝ 3 տարի ժամկետով»:

[179] Սամվել (Սավա) Մալինցյանը պատմում է, որ իրենց ընտանիքին լուրեր է հասել, որ Խ. Մալինցյանը զոհվել է պարսկաստանի սահմանն անցնելու ժամանակ: Մի այլ վարկածի համաձայն էլ նա անցել է պարսկաստան, ուր և ապրել ու մահացել անհայտության մեջ:

ԹԻՎ 17
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ[180]

…Խաչատուր Հարությունի Մալինցյանը ծնվել է 1888 թ. Գորիս քաղաքում, ազգությամբ՝ հայ, բնակվել է Երևան քաղաքում, աշխատել է «Հայկենցաղ» տրեստում հաշվապահ:

ՀԽՍՀ ՊՔՎ կոլեգիայի Հատուկ Խորհրդակցության 14.10.1932 թ. որոշմամբ, ըստ ՀԽՍՀ ՔՕ 60, 63 67 հոդվածների, ենթարկվել է 5 տարվա աքսորի (այնուհետև՝ այն փոխարինվել է 3 տարվա) այն, բանի համար, որ նա 1918–1920 թթ. հայ–թուրքական կռիվների ժամանակ սպառնացել և ծեծի է ենթարկել մի շարք հայերի, որոնք Զանգեզուրի ռազմաճակատում հրաժարվել են ադրբեջանցիների դեմ կռվելուց:

Խ. Մալինցյանի աքսորելու համար հիմքեր չեն եղել, նա պատասխանատվության է ենթարկվել անհիմն կերպով:

Խ. Մալինցյանի վրա տարածել ԽՍՀՄ ԳԽ նախագահության 16.01.89 թ. «30–40–ական թթ. և 50–ական թթ. սկզբներին ռեպրեսիայի զոհերի նկատմամբ արդարությունը վերականգնելու լրացուցիչ միջոցառումների մասին» հրամանագիրը և նրան համարել ռեաբիլիտացիայի ենթարկված:

Բաժնի դատախազ՝ Ա. Թևոսյան

---

[180] Դատական գործի ոչ բարեխիղճ ուսումնասիրման հետևանքով Խ. Մալինցյանի արդարացման եզրակացության մեջ (որը ներկայացվում է կրճատումներով) թույլ են տրվել կոպիտ սխալներ և բացթողումներ: Որոշումը հաստատված է ՊԱԿ–ի մարմիններում քննության վրա հսկող բաժնի պետ Մ. Վ. Չիլինգարյանի կողմից 29.11.1991 թ.՝ ՀՀ անկախության հռչակագրի հրապարակումից (21 սեպտեմբերի, 1991 թ.) երկու ամիս և մեկ շաբաթ անց:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ 3
ՆԱԽԱԲԱՆ 5
Խ. ՄԱԼԻՆՑՅԱՆՆ ԻՐ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ 11
ՎՏԱՐԱՆԴԻ ԳՈՐԾԻՉՆԵՐԻ ՀՈՒՇԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ 22
ՀԱՅՐԵՆԻ ԳՈՐԻՍՑԻՆԵՐԻ ՀՈՒՇԵՐԸ 33
ՑՈՒՑՄՈՒՆՔՆԵՐ Խ. ՄԱԼԻՆՑՅԱՆԻ ՄԱՍԻՆ 36
Խ. ՄԱԼԻՆՑՅԱՆԻ ՑՈՒՑՄՈՒՆՔՆԵՐԸ 46
Խ. ՄԱԼԻՆՑՅԱՆԻ ԴԱՏԱՍՏԱՆԸ 97

«ՍՅՈՒՆԻՔ–ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՀՈԳԵՎՈՐ ԵՎ
ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ» ՄԱՏԵՆԱՇԱՐ

Գիրք 2

ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ԳՈՅԱՄԱՐՏԻ
ՀԵՐՈՍ ԽԱՉԱՏՈՒՐ ՄԱԼԻՆՑՅԱՆ

Կազմող՝
ԱՇՈՏ ՍԻՄՈՆՅԱՆ

Տպագրությունը՝ օֆսեթ: Չափսը՝ 60x84 1/16: Թուղթը՝ օֆսեթ:
Ծավալը՝ 7,5 տպ. մամուլ: Տպաքանակը՝ 000:

ԶԱՆԳԱԿ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՀՀ, 0051, Երևան, Կոմիտասի պող. 49/2, հեռ.՝ (+37410) 23–25–28
Հեռապատճեն՝ (+37410) 23–25–95, էլ. փոստ՝ info@zangak.am
էլ. կայքեր՝ www.zangak.am, www.book.am, www.dasagirq.am